ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՅՍՕՐ. ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հեղինակներ՝

Լուսինե Քարամյան

Հովհաննես Հովհաննիսյան

Կրոնական հանդուրժողականության վերաբերյալ նախագծի շրջանակներում իրականացված որակական հետազոտություն

Եվրասիա համագործակցության հիմնադրամ

ԵՐԵՎԱՆ

2012

Բովանդակություն

Նախաբան……3

ՄԱՍ 1: ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ. ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ…….....7

1.1 Հանդուրժողականության գաղափարի հակասականությունը կամ հարաբերական բնույթը……7

1.2 Հանդուրժողականության գաղափարի առաջացումը……12

1.3 Կրոնական հանդուրժողականության սահմաններն ու էությունը……21

1.4 Կրոնական հանդուրժողականությունը, բազմամշակութայնությունը և կրոնական երկխոսությունը ժամանակակից աշխարհում……..30

ՄԱՍ 2: ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ...……...38

2.1 Ինչ է հանդուրժողականությունը……38

2.2 «Իմ տունն իմ ամրոցն է» կամ հանդուրժողականության սահմանները և մակարդակները. հանդուրժողականության, հարմարվողականության և անտարբերության խաչմերուկները……...42

2.3 Անհանդուրժողականության դրսևորման տարածված ձևերը և դրանց վրա ազդող գործոնները Հայաստանում……...47

2.4 Կրոնական հանդուրժողականության հիմնախնդիրը Հայաստանում ……59

2.5 Օրենքի գերակայությունը. Հանդուրժողականություն, թե հարկադրական հարմարվողականություն …….....……..74

Հիմնական եզրահանգումները և առաջարկությունները……...87

Նախաբան

Նորանկախ Հայաստանի պատմության մեջ բավականին արդիական թեմաներից է հանդուրժողականությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, մասնավորապես կրոնական ու քաղաքական հանդուրժողականության հիմնախնդիրը: Չնայած թեմայի արդիականությանն ու կարևորությանը, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ հանդուրժողականության մասին քննարկումները մնացել են հենց քննարկման մակարդակում ու վերբալ բնույթից գրավորի չեն վերածվել: Այսինքն, հանդուրժողականության մասին վերլուծական կամ հետազոտական գրականության պակաս մշտապես զգացվել ու զգացվում է, քանի որ հանդուրժողականության գաղափարի հարաբերական բնույթը հաճախ թույլ չի տալիս հստակ ձևակերպումներ ու սահմանումներ առաջ քաշել, ինչն էլ ավելի է բարդացնում թեմայի քննարկումը:

Հանրային դիսկուրսում հաճախ հանդուրժողականությունը դիտվում է որպես գործիք դիմացինին «այլ» կամ «օտար» պարտադրելու համար, որի պատճառով էլ հասարակության որոշակի ներկայացուցիչների մոտ անհանդուրժողական վերաբերմունք է նկատվում ամեն տեսակ հանդուրժողականության նկատմամբ: Այս տեսանկյունից հանդուրժողականություն երևույթն առավել լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է այն դիտարկել մասնավոր հարթությունների մեջ, այսինքն ուսումնասիրել կրոնական, սեռական, դասային, սեռային, քաղաքական հանդուրժողականության ձևերը, որտեղից էլ համապատասխան եզրահանգումներ անել հանդուրժողականության երևույթի մասին առհասարակ:

Հանդուրժողականության վերը նշված տարատեսակներից որոշակի հետազոտություններ են կատարվել, օրինակ, սեռական, կրոնական հանդուրժողականությունների վերաբերյալ, սակայն դրանք էլ ամբողջական չեն, քանի որ կատարվել են հիմնական օրենքների ու իրավական նորմերի մեկնակետից: Դրանք չեն ընդգրկել հանրային դիսկուրսում առկա տեսակետները: Հանդուրժողականություն եզրը հանրային դիսկուրսում գործածվում է սոցիալական անարդարությունը նկարագրելուց սկսած մինչև սեռական փոքրամասնությունների նկատմամբ ատելությունը: Մյուս կողմից հանդուրժողականությունը դիտարկվում է իբրև արևմուտքի կողմից պարտադրվող կամ թելադրվող գործիք, որը կոչված է հայ ազգային ավանդույթներն արմատախիլ անելուն

կամ վերացնելուն: Սովորաբար նման կարծիք արտահայտողները ելնում են նեղ կամ մարգինալ ազգայնականության ու պահպանողականության դիրքերից ու որոշ պրիմիտիվ օրինակներից այն կողմ չեն կարողանում անցնել: Մասնավորապես, հանրային դիսկուրսում նման կարծիք արտահայտողներն իբրև առաջին օրինակ բերում են «կարմիր խնձորի» ու նմանատիպ ավանդույթների պահպանումը:

Հանդուրժողականության մասին դատողություններ կատարելիս չի կարելի չնշել տեղային, ազգային, իրադարձային և այլ առանձնահատկությունները: Օրինակ, բազմազանության շքերթը Երևանում ազգայնական նեղ շրջանակների կողմից նույնացվեց նույնասեռականների շքերթի հետ և դիտվեց որպես արևմտյան «ախտերին» տուրք տալու ձև ու հայ ազգային ավանդույթների ոտնահարում: Հաճախ իրավականորեն թույլատրելի երևույթներն ու գործողություններն արժանանում են հասարակության կոպիտ հակադրությանը՝ իբրև ազգային-ավանդական կողմնորոշմանը վնասող կամ հակասող երևույթ:

Հայաստանում հանդուրժողականության հետ կապված իրավիճակի վերաբերյալ հիմնական հետազոտությունները կատարվել են միջազգային կազմակերպությունների կամ իրավապաշտպան կառույցների կողմից, որոնց հետազոտությունները հաճախ կրել են հատվածական կամ մասնավոր բնույթ և վերաբերել են որևէ երևույթի նկատմամբ վերաբերմունքի առանձին դրսևորումներին: «Կրոնական կրթության խնդիրները Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում» և «Կրոնական անհանդուրժողականությունը Հայաստանում. մամուլի մոնիտորինգ» հետազոտություններում փաստական մեծ նյութ է կուտակվել Հայաստանում տիրող կրոնական հանդուրժողականության իրավիճակի վերաբերյալ[1]: Կրոնի ազատության վերաբերյալ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի զեկույցում, օրինակ, մեծ նյութ է հավաքվել Հայաստանում կրոնական կազմակերպությունների ու դրանց նկատմամբ վերաբերմունքի մասին: [2] Առանձին հետազոտություններ իրականացվել են սեռական փոքրամասնությունների նկատմամբ դիրքորոշումների ու հանդուրժողականության

[1] Այդ մասին առավել մանրաման տե՛ս www.religions.am կայքում:
[2] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս http://www.armhels.com/DownloadFile/1071arm-Kroni_Azatutyune_Hayastanum.pdf.

մակարդակի վերաբերյալ[3], սակայն հետաքրքրական է, որ հանրային դիսկուրսում ամենից շատ քննարկվող քաղաքական հանդուրժողականության մասին ամբողջական ուսումնասիրություններ դեռևս չեն իրականացվել:

Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնի Կովկասյան բարոմետրի վերջին տարիներին արված հարցումներից տեղեկանում ենք, որ կրոնական հաստատությունների նկատմամբ հասարակության վստահության մակարդակը չնայած բարձր է, այնուամենայնիվ վստահության նվազման դինամիկա գոյություն ունի (2008-ի 55%-ի փոխարեն 2011-ին 44%): Հարցվածների մեծամասնությունը պատկանում են Հայ առաքելական եկեղեցուն (2011-ին 97%)[4], իրենց համարում են կրոնական, բայց կրոնական արարողություններին այցելում են միայն տոն օրերին (29%) ու ամիսը մեկ անգամից քիչ (25%): Այնուամենայնիվ, պետք է որոշակի վերապահումներով մոտենալ այս թվերի նկատմամբ, քանի որ Հայ առաքելական եկեղեցու շատ սպասավորներ իսկ չեն նշում ՀԱԵ հետևորդների առումով նման բարձր տոկոսներ (օրինակ, 97%), իսկ հետազոտության մեթոդաբանությունը ցույց է տալիս, որ շատ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, վտանգ տեսնելով այս հարցումների մեջ, պարզապես չեն ցանկացել մասնակցել հարցումներին: Առօրյայում կրոնի կարևորության բարձր մակարդակի ընդունումը (2011-ին՝ 56%), երբեք ծոմապահություն չանելը (2011-ին՝ 88%) ու ցածր այցելությունը եկեղեցի ցույց է տալիս իրականում հայ հասարակության ցածր կրոնականությունը: Միևնույն ժամանակ այս հարցումները ցույց են տալիս, որ հասարակության մեծ մասը կարծում է, որ կրոնական կամ էթնիկ պատկանելիությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ քաղաքական մասնակցության համար, ինչը կարելի է հանդուրժողական մոտեցում համարել:

[3] Քարամյան Լ.Վ. «Հանրային իրազեկվածությունը և խտրականությունը ԼԳԵՓ համայնքի նկատմամբ. իրավիճակը Հայաստանում». - Երևան, «Ալֆա Փրինտ», 2011: «ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում», «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների ու խորհրդատվության կենտրոն, «ՀՏԳԿ» ՀԿ, 2011:

[4] Համեմատության համար նշենք, որ 2010թ. Հայ առաքելական եկեղեցուն իրենց պատկանելիությունն էին նշել հարցվածների միայն 83%-ը, իսկ 2009թ.-ին՝ 96%-ը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Տվյալ հետազոտությունը բաղկացած է երկու մասից՝ տեսական ու գործնական: Տեսական հատվածում օգտագործվել են ժամանակակից տեսաբանների մոտեցումները հանդուրժողականության և, հատկապես, կրոնական հանդուրժողականության վերաբերյալ: Պրակտիկ հատվածում ներկայացված են որակական մեթոդներով հետազոտության շրջանակներում կատարված դաշտային աշխատանքների արդյունքները, որոնք տեղի են ունեցել Երևանում, Գեղարքունիքի, Շիրակի և Լոռու մարզերում: Իրականացվել են 22 խորքային հարցազրույցներ տարբեր սոցիալական խմբերի, մասնավորապես կրոնական խմբերի ներկայացուցիչների հետ: Տասը ֆոկուս խմբեր են անցկացվել լրագրողների, բժիշկների, մանկավարժների, հոգեբանների, քաղաքական ու քաղաքացիական ակտիվիստների հետ: Փորձագիտական հարցման մեթոդով հարցումներ են անցկացվել 15 փորձագետների, մասնավորապես կրոնագետների, ազգագրագետների, քաղաքագետների, ակտիվ քաղաքական գործիչների, պետական կառավարման ինստիտուտների ներկայացուցիչների հետ (հատկապես արդարադատության համակարգի այն պաշտոնյաների հետ, ովքեր քաջատեղյակ են կրոնական կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին կամ անմիջականորեն առնչվել են կրոնական հանդուրժողականության հարցերին իրենց մասնագիտական գործունեության մեջ): Աշխատանքում օգտագործվել են խղճի ու կրոնական կազմակերպությունների օրենքում փոփոխություններ անելու վերաբերյալ քննարկումների արդյունքները: Վերլուծվել են ոլորտին առնչվող օրենքները, հրամանները, հեռուստահաղորդումները, հոդվածները և բլոգներում առկա նյութերը: Իր հերթին, Երևանի մամուլի ակումբը մեդիաների մոնիթորինգ է անցկացրել:

Այս հետազոտությունը չի կարող անդրադառնալ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում առկա անհանդուրժողականության դրսևորումներին, քանի որ անհանդուրժողականության վարքի դրսևորումներ առկա են դպրոցում, համալսարանում, բժշկական հաստատություններում, սոցիալական տարբեր կառույցներում, կառավարչական օղակներում և այլն, և ունեն տարբեր հիմքեր: Հետազոտության մեջ փորձ է կատարվելու վեր հանել հանդուրժողականության կամ անհանդուրժողականության վարքի ընդհանուր մոդելները, որոնք տարածված են հայ հասարակության մեջ:

ՄԱՍ 1: ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ. ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Հանդուրժողականության գաղափարի հակասականությունը կամ հարաբերական բնույթը

20-21-րդ դարերում բարձր տեխնոլոգիաների ու մարդկային մտքի աննախադեպ զարգացումը ցույց տվեց, որ ամեն օր փոխվում են մարդկային համակեցության նորմերն ու սահմանները, յուրաքանչյուր օրն իր հետ բերում է նոր մարտահրավերներ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ու այդ մարտահրավերները կրկնապատկվում ու եռապատկվում են համաշխարհային դեմոգրաֆիական աճի աննախադեպ տեմպերով, երբ մարդկությունն արդեն պատրաստվում է հատել տասը միլիարդի սահմանը: Փոփոխություններն իրենց հետ բերում են բազմաթիվ ճգնաժամեր՝ էկոլոգիայի, պատերազմների, գաղափարական պայքարի ու այլ ձևերի մեջ, որոնց դիմագրավելու ու հաղթահարելու համար անհրաժեշտ են նոր մեխանիզմներ ու համակեցության էլ ավելի բարդ նորմեր ու կանոններ:

Հնարավոր է արդյո՞ք մարդկանց համատեղ կյանքը մի աշխարհում, որտեղ կան տարբեր ռասաներ, կրոններ, մշակույթներ, արժեհամակարգեր, սոցիալական բարդ կառուցվածքներ ու քաղաքական համակարգեր: Այս ամենն էլ ավելի է բարդանում, երբ պատկերացնում ենք, որ վերը նշված բազմազանությունը հնարավոր է մի պետության կամ երկրի շրջանակներում, որտեղ գործառնող քաղաքական, քաղաքացիական նորմերը պետք է ապահովեն խաղաղություն ու խաղաղ համագոյակցություն: Ինչպե՞ս է հնարավոր այդ բազմազանության մեջ հաստատել փոխադարձ հարգանք ու համակեցություն: Տեսական միտքը, ինչպես նաև պրակտիկ փորձը մինչ օրս այս հարցի լուծումը տեսել է լիբերալ դեմոկրատիայի ու հանդուրժողականության սկզբունքների պահպանության ու քարոզչության մեջ: Համակեցության այս ձևը մշակվել է դեռևս լուսավորության ժամանակաշրջանում, որի համաձայն մարդիկ, չնայած իրենց տարբերություններին, միավորվել ընդհանուր ճշմարտությունների ու բարոյական սկզբունքների շուրջ, որոնց մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավել հանդուրժողականություն կոչվող արժեքն ու բարոյաէթիկական սկզբունքը:

Հանդուրժողականությունը ներկայիս ամենից շատ քննարկված ու միևնույն ժամանակ ամենաքննադատված հասկացություններից է: Հանդուրժողականության մասին ձևակերպումները բազմաթիվ են, այդ պատճառով էլ այս հասկացության հստակ ձևակերպման խնդիրը շարունակում է արդիական մնալ: Երբեմն էլ անհանդուրժողականությունն է համարվում արժեք, երբ այն դրսևորվում է օրենքի խախտման, հասարակական կարգի տապալման, բարոյաէթիկական նորմերի չպահպանման, հանցագործներին ու մեղավորներին չպատժելու, մարդկության դեմ կատարվող հանցագործությունների կամ բնության ռեսուրսները շահագործելու ու նմանատիպ այլ դեպքերի նկատմամբ:

Հետազոտողների մեծամասնությունը կարծում է, որ իր սահմանմամբ հանդուրժողականությունը ենթադրում է անհամաձայնություն, քանի որ նրա օբյեկտը դիտվում է իբրև բարոյապես չարդարացված ու անցանկալի մի բան, եթե նույնիկ դրա սուբյեկտը որոշում է կայացնում որևէ գործողություն չձեռնարկել այն ամենի նկատմամբ, ինչ ինքը անընդունելի է համարում: Հանդուրժողականության հակասականությունը նրանում է, որ մի կողմից անհատը կամ մարդը համակերպվում է հասարակության մեջ բարոյական կամ էթիկական նորմերի խախտման հետ, իսկ մյուս կողմից հանդուրժողականությունը նրանից պահանջում է հրաժարվել այդ երևույթի վրա ազդելու հնարավորությունից: Այս տեսակյունից հանդուրժողականությունը ոչ միանշանակ է ընդունվում իբրև արժեք, այն մշտապես պահանջում է փաստարկումների ամբողջություն[5]:

Հանդուրժողականությունը բազմազանության ընդունումն է և մարդու կարողությունը ճանաչելու սեփական վախերը, օբյեկտիվորեն գնահատելու իր վերաբերմունքն այն մարդկանց նկատմամբ, որոնց հայացքները, կենսակերպը, կրոնը, ազգությունը և այլ բնութագրիչները տարբերվում են իր ունեցածից[6]:

Խաղաղ համակեցության ապահովումը կախված է նրանից, թե ինչ են մարդիկ մտածում միմյանց մասին, և ինչպիսի դիրքորոշումներ են ընկած «այլ»-ի նկատմամբ վերաբերմունքի ու վարքի հիմքում: Հանդուրժողականությունը մշակութային բազմազանության համատեքստում ընկալվում է որպես էական պայման և միջոց

[5] Տե՛ս Социология межэтнической толерантности. М., 2003. с. 16.
[6] Տե՛ս Peterson S. "Tolerance." *Beyond Intractability*/ Eds. Guy Burgess and Heidi Burgess. Conflict Information Consortium, University of Colorado, Boulder. Posted: July 2003 <http://www.beyondintractability.org/bi-essay/tolerance>

ներդաշնակ համակեցության ապահովման համար: Հանդուրժողականություն հասկացությունը, այդպիսով, անմիջականորեն կապված է բազմազանություն հասկացության հետ, որի մասին նշված է, օրինակ, 1945թ. ՅՈՒՆԵՍԿՈՅի Սահմանադրության մեջ որպես մշակութային բազմազանություն (Cultural Diversity): (UNESCO, 1945, art. 1.2). Ներկայումս այդ եզրույթի իմաստը ենթարկվել է փոփոխության՝ անցում կատարելով զուտ մշակույթների միջև տարբերությունները ճանաչելուց դեպի մշակույթների հավասարություն և մշակութային ինքնարտահայտման բազմազանություն:[7] *Բազմազանությունը (diversity)* լայն իմաստով նշանակում է իմանալ, հասկանալ, ընդունել, արժևորել տարբերությունները մարդկանց միջև՝ հարգելով նրանց սեռը, տարիքը, էթնիկ պատկանելությունը, ռասան, ֆիզիկական ու մտավոր կարողությունները, սեռական կողմնորոշվածությունը, կրոնը և սոցիալական կարգավիճակը: Բազմազանության և հանդուրժողականության սահմանման փորձեր եղել են և դեռևս շարունակվում են, քանի որ միանշանակ սահմանում տալը բավականին բարդ է, սակայն շատ կարևոր է հստակ տարանջատել, օրինակ, հանդուրժողականությունը հարմարվողականությունից, համբերատարությունից, անտարբերությունից և այլ մի շարք հասկացություններից, որոնք հաճախ նույնացվում են պրակտիկայում: Այս տերմինների ու դրանք արտահայտող բովանդակությունների ոչ հստակ սահմանումները կարող են խառնաշփոթ առաջացնել տարբեր իրավիճակներում ու հանգեցնել իրավիճակի ոչ ադեկվատ ընկալմանը:

Հանդուրժողականությունը չի կարելի նույնացնել անտարբերության կամ կասկածամտության հետ, այն կարող է վերածվել անտարբերության, եթե հանդուրժողական լինելու անվան տակ անտարբերություն է դրսևորվում անընդունելի վարքագծի նկատմամբ: Օրինակ, Լեկտորսկին, ով առաջ է քաշել հանդուրժողականության մի քանի մոդելներ, մեկնաբանում է այն որպես անտարբերություն զանազան հայացքների ու պրակտիկաների գոյության նկատմամբ, քանի որ դրանք դիտարկվում են որպես երկրորդային կամ ոչ էական հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների համեմատ[8]: Միևնույն ժամանակ այն կարող է նաև վերաճել կասկածամտության, եթե հանդուրժողականության անվան տակ հրաժարվում ենք կարծիք հայտնել որևէ երևույթի

[7] Տե՛ս World Heritage and Cultural Diversity / Ed. by Dieter Offenhäußer, Walther Ch. Zimmerli, Marie-Theres Albert, German Commission for UNESCO, DRUCKZONE GmbH & Co. KG, Cottbus, 2010. P. 129

[8] Религиозная толерантность: исторические и политические измерения / Под. Ред. А.А. Красикова, Е.С. Токаревой. – М.: «Академия», 2006. С. 47

կամ վարքագծի նկատմամբ: Ֆրանսիացի փիլիսոփա Պ. Բեյլն առաջիններից էր, որ հստակ ձևակերպում տվեց հանդուրժողականությանը, որի համաձայն անթույլատրելի էր համարում հետապնդումներն այլախոհների նկատմամբ, անթույլատրելի են այն բոլոր արարքները, որոնք վիրավորում են այլ մարդկանց զգացմունքները՝ անկախ այն հանգամանքից մենք հավանում ենք այդ հայացքները թե ոչ: Միևնույն ժամանակ նա պնդում էր, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունք մերժելու ցանկացած կրոն և լինելու աթեիստ [9] : Նման մոտեցումը իր ժամանակաշրջանի շատ հեղինակների կողմից համարվեցին վնասակար հասարակության ամբողջականության պահպանության տեսանկյունից: Այդ քննադատների մեջ, բնականաբար, առաջամարտիկի դիրքերում էին գտնվում եկեղեցական գործիչները, որոնց համար ընդունելի չէին Բեյլի մոտեցումները աթեիստներին հանդուրժելու հարցում: Համաձայն Բեյլի, աթեիստները, մերժելով կրոնական հիմնական սկզբունքները, իրենք ավելի շատ են ենթարկվել քննադատության, քան իրենց կողմից մերժված եկեղեցու սպասավորները[10]:

Ժամանակակից ճանաչված փիլիսոփաներից Կ. Պոպերը փորձում էր հանդուրժողականության սահմանները վերլուծել կասկածամտության միջոցով, համաձայն որի նա պնդում էր, որ «ա) ես կարող եմ սխալվել, իսկ դու կարող ես ճիշտ լինել, բ) բանական քննարկման միջոցով մենք կարող են ուղղել մեր թույլ տված սխալները, գ) բանական քննարկումների ճանապարհով մենք կարող ենք մոտենալ ճշմարտությանը»[11]: Այս պարագայում չենք կարող չհիշել հայտնի գերմանացի փիլիսոփա Հեգելի դիալեկտիկական սկզբունքը, համաձայն որի հակասություններն են շարժում աշխարհը: Եթե հասարակության մեջ բացառվի այլախոհությունը, անհանդուրժողական ու թշնամական վերաբերմունք որդեգրվի մեծամասնության կողմից յուրաքանչյուր այլախոհի նկատմամբ, ապա այդ հասարակության մեջ կխախտվի հավասարակշռությունը և հնարավոր չի լինի առաջընթացն ու նորարարությունը:

Հանդուրժողականությունը անձի հատկանիշ է, որի միջոցով նա վերաբերմունք է ցույց տալիս այս կամ այն երևույթի նկատմամբ՝ առաջնորդվելով իր արժեքներով,

[9] Տե՛ս Круглова Н. Виртуальность и реальность толерантности // Виртуальное пространство культуры. СПб., 2000. С. 20.
[10] Տե՛ս նույն տեղում:
[11] Popper K. Toleration and Intellectual Responsibility // on Toleration / Ed. By S. Mendes, D. Edwards. Oxford, 1987. p. 26-28.

բարոյականությամբ, դաստիարակությամբ ու մշակույթով: Մյուս կողմից հանդուրժողականությունը կարող է հանդես գալ իբրև ընտանիքի, սոցիալական այլ խմբի, հասարակության վարքագծային մոդել կամ նորմ, որի համաձայն էլ այդ խումբը կամ ընտանիքն իր ուրույն համակեցության նորմերն է ձևավորում՝ կախված տարբեր իրավիճակներից: Միևնույն ժամանակ տեսաբաններից շատերը զգուշավոր են հանդուրժողականության հարցում՝ դրանում տեսնելով վտանգավոր ադապտացիոն ու կոնֆորմիստական մեխանիզմներ, որոնք կարող են մեծ վնաս հասցնել հասարակության արժեհամակարգին ու նրան դարձնել «զոմբի» բոլոր տեսակի վատ երևույթների նկատմամբ: Խոսքն այստեղ առավելապես վերաբերում է անտարբերության հասնող հանդուրժողականությանը, երբ քրեական օրենքները գերիշխում են պետական օրենքների նկատմամբ ու մարդիկ սկսում են «նորմալ» վերաբերել բոլոր տեսակի արատավոր երևույթների նկատմամբ:

Վերը նշված իրավիճակների հիմնականում հանդիպում ենք ավտորիտար կամ տոտալիտար վարչակարգերի իշխանության շրջանում՝ ի հակադրություն լիբերալ-դեմոկրատիայի ու դեմոկրատական սկզբունքների պայմաններում գործառնող վարչակարգերի: Իր հերթին, դեմոկրատական հասարակարգերում քարոզվում է հանդուրժողականություն նման անհանդուրժողական կարծիքների ու մոտեցումների նկատմամբ, որի արդյունքում էլ անհանդուրժողական մոտեցումները մեծ հաշվով հաղթում են հանդուրժողականությանը: Ժողովրդավարական հասարակարգերում անհանդուրժողական դրսևորումների նկատմամբ առավել խիստ մոտեցումներ են ցուցաբերվում, երբ նմանատիպ վարքը սպառնում է հենց հասարակության հետագա գոյությանը կամ կասկածի տակ է դնում այդ հասարակության մեջ առկա հիմնական արժեհամակարգերը: Նմանատիպ հասարակարգերում օրենքի գերիշխանությունը ստիպում է անհանդուրժողական լինել այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են ռասիզմը, սեքսիզմը, քսենոֆոբիան, քրեական տարրերը, կաշառակերությունը և այլն:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ժողովրդավարական հասարակարգերում էլ առկա է մեծ բացասական էներգիայի դուրս թողնելու վտանգ, երբ բազմախոհության ու բազմազանության սկզբունքների շրջանակներում տարբեր էթնիկական, ռասայական, ազգային ու կրոնական պատկանելություն ունեցող մարդիկ ու խմբերը պետք է ապրեն

կողք կողքի և ընդունեն միմյանց տարբերությունները: Նմանատիպ «պարտադրանքը» երբեմն դուրս է գալիս վերահսկողությունից ու այս խմբերի ներկայացուցիչներն սկսում են թշնամական վերաբերմունք որդեգրել միմյանց նկատմամբ, ինչը հաճախ ավարտվում է բռնությամբ ու անցանկալի հետևանքներով: Օրինակ, չնայած օրենքի խստությանը, ԱՄՆ-ում չեն դադարում ռասայական խտրականության կոչերը, Ֆրանսիայում առկա են խորը հակասություններ իսլամական բնակչության ու որոշ օրենքների կիրառելիության միջև, Բելգիայում ռամադանի օրերին պետական աշխատողներին արգելվել է հրապարակավ ճաշել փողոցում: Նմանատիպ երևույթները ծնում են անհանդուրժողական վերաբերմունք տարբեր կրոնական համոզմունքներ ունեցող մարդկանց ու խմբերի միջև:

Ժամանակակից աշխարհում ընթացող գլոբալիզացման գործընթացների շրջանակում հանդուրժողականությունը դիտվում է որպես կենտրոնական գաղափար բազմակուլտուրալ հասարակությունների ներսում խաղաղություն պահպանելու համար: Մի կողմից ազգային պետությունները, ազգային մշակույթներն ու շեշտադրված ինքնությունները, իսկ մյուս կողմից գլոբալիզացիոն գործընթացները ստեղծում են բնական կոնֆլիկտ ազգայինի, տեղականի ու համաշխարհայինի, ընդհանուրի հետ: Այնուամենայնիվ, հարկ է տարբերակել հանդուրժողականության տարբեր մոդելները, քանի որ ազգ-ազգ, ազգ-աշխարհ և այլ մակարդակներում հանդիպում ենք հանդուրժողականության միանգամայն տարբեր դրսևորումների: Հենց նմանատիպ գործընթացներն էլ ավելի են ակտուալացնում հանդուրժողականության գաղափարը, դրա շուրջ ընթացող դիսկուրսներն ու կարևորությունը ժամանակակից քաղաքակրթական հոսքերի համատեքստում:

1.2 Հանդուրժողականության գաղափարի առաջացումը

Դեռևս անտիկ շրջանի փիլիսոփայական մտքում կարելի է հանդիպել այնպիսի համարժեք գաղափարների, որոնք իրենց ֆունկցիոնալ դաշտով համապատասխանում են ժամանակակից «հանդուրժողականության» գաղափարին: Հին Հռոմում «tolerare» (տանել, դիմանալ, համբերել) եզրը հիմնականում գործածում էին համբերության կամ համբերատարություն իմաստով, չնայած կային եզրի նաև այլ նշանակություններ: Այնուամենայնիվ «հանդուրժողականությունը» իր ժամանակակից իմաստով

գործածության մեջ մտավ Եվրոպայում ռեֆորմացիայի ժամանակաշրջանում, երբ հանդուրժողականությունը առանցքային դեր ունեցավ կրոնական կոնֆլիկտների լուծման գործում: Ժամանակակից աշխարհում մեծ տարածում գտած հանդուրժողականության մոդելը, որը կիրառվում է կրոնական կազմակերպությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը մեծացնելու նպատակով, ինչպես նաև քաղաքական հանդուրժողականությունը, հիմնվում է ազատական արժեքների վրա: Նմանատիպ մոտեցումը առաջին անգամ ձևակերպել է անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը: «Ուղերձ կրոնական հանդուրժողականության մասին» տրակտատով Ջ. Լոկը կրոնական ու քաղաքական հիմնախնդիրները ռացիոնալ քննարկման հիմքն է դնում: Նրա փիլիսոփայության հիմնական միտքն այն էր, որ քրիստոնյաների փոխադարձ հանդուրժողականությունը ճշմարիտ եկեղեցու հիմնական բնութագրիչն է[12]: Չնայած նրան, որ վերածննդի շրջանում կիրառված հանդուրժողականություն հասկացությունը [13] բովանդակային իմաստով բավականին մեծ փոփոխությունների է ենթարկվել, այնուամենայնիվ նրա քաղաքական նշանակությունը պահպանվել է մինչ օրս: Լուսավորության շրջանում հանդուրժականության գաղափարը առավելապես առնչվել է եկեղեցուն ու կրոնին՝ պետությունը եկեղեցուց անջատելու, դպրոցը՝ եկեղեցուց, կրոնական բազմախոհության, կրոնական ազատությունների լիբերալ սկզբունքների տեսքով: Մտավոր հեղափոխությունը մարդկության պատմության մեջ հանգեցրեց նրան, որ ինստիտուտները (եկեղեցի, սինագոգ և այլն) մղվեցին երկրորդական պլան ու առաջին տեղում հայտնվեց մարդը՝ իր ազատ կամքով ու ազատ պահանջմունքներով:

Արևմուտքում քաղաքական ազատականության զարգացումը հանգեցրեց նրան, որ երկարաժամկետ կտրվածքով կրոնը հանրային տարածքից տեղափոխվեց մասնավոր տարածք ու համարվեց յուրաքանչյուր մարդու անհատական գործը (Դ. Գրեյ, Ու. Գալստոն, Ն. Ռոզենբլյում): Ազատական գաղափարախոսության շրջանակներում հիմնականում գերիշխում են երկու մոտեցումներ. համաձայն առաջինի գոյություն ունի մեկ ընդհանուր քաղաքական համակարգ ու բարոյական մեկ իդեալ, որի շրջանակներում էլ յուրաքանչյուր

[12] Տե՛ս Gough, J.W, and Klibansky (eds.), 'Epistola de Tolerentia', A Letter on Toleration, Oxford: Oxford University Press, 1968. Տե՛ս նաև Mendus, S. Locke on Toleration in Focus. London: Routledge, 1991.

[13] Վերածննդի շրջանի փիլիսոփաները շարունակում էին հանդուրժողականությունը դիտարկել իբրև կրոնական միասնականության հասնելու գործիք, որի արդյունքում պետք է քրիստոնեական տարբեր հարանվանություններ պետք է միասնականանային կաթոլիկ եկեղեցու հետ: Այս մասին մանրամասն տե՛ս Lecler J. Toleration and the Reformation. N.Y., 1960. p. 479-481.

հասարակություն կարող է ընտրել իր համար լավագույն տարբերակը: Այս մոտեցումը շեշտադրում է անհատի ազատությունը, որը ազատ է բոլոր տեսակի ձևականություններից ու պարտադրանքներից: Երկրորդ մոտեցումը առավելապես հիմնված է հասարակության համակեցության նորմերի պահպանման վրա և հիմնվում է ոչ թե ընդհանուր փիլիսոփայական սկզբունքների, այլ կոնկրետ իրավիճակների վրա: Երկրորդ մոտեցումն առավելապես համապատասխանում է մարդկանց ու սոցիալական տարբեր խմբերի բազմազանությանն ու պատասխանում է նրանց կարիքներին, քանի որ ելնում է կոնկրետ իրավիճակներից ու դեպքերից[14]: Չնայած նրանց, որ համընդհանուր ազատականության սկզբունքները բավականին կարևոր են, սակայն ժամանակակից աշխարհի տարբեր երկրների ներքին բազմազանությամբ ու մշակութային առանձնահատկություններով պայմանավորված առավել արդյունավետ կարող է գործառնել մասնավոր դեպքերին լուծում տվող տարբերակները, քանի որ թե կրոնական, թե էթնիկական, թե սոցիալական, թե մշակութային ու այլ բազմազանություններն ի չիք են դարձնում համընդհանուր մոտեցումներն ու պահանջում առավել մանավորեցված ու էֆֆեկտիվության վրա հիմնված մոտեցումներ: Անհնար է պատկերացնել, որ ԱՄՆ-ում կամ Ֆրանսիայում արդյունավետորեն կիրառվող մոդելները տարբեր պատճառներով կարող են նույն արդյունավետությամբ կիրառելի լինել Սիրիայում կամ Լիբանանում:

Աշխարհում տեղի ունեցող տնտեսական փոխներթափանցման, ինտենսիվ միգրացիայի, պատերազմների ու այլ գործոնների հետևանքով յուրաքանչյուր օր խորացող բազմազանությունը հնարավոր չէ բացատրել ու մոդելավորել մեկ մոտեցման շրջանակներում, որի պատճառով էլ 20-րդ դարի ճանաչված քաղաքական փիլիսոփաներից Ջ. Ռոուլզը մշակեց իր տեսությունը, համաձայն որի մարդկանց ու խմբերի միջև առկա տարբերությունները հանդիսանում են ազատական հասարակությունների անբաժանելի տարրը ու այդ բազմազանության մեջ հնարավոր է համակեցության ապահովել միայն հանդուրժողականության տարածմամբ ու քարոզմամբ [15] : Դեռևս լուսավորության շրջանում սկսված մտավոր զարգացումն ու ունիվերասալիաների մշակումը վերջիվերջո կիրառվում է կոնկրետ հասարակական կառուցվածքների վրա և հանդուրժողականության և խղճի ազատության հիման վրա

[14] Տե՛ս Степанова Е. А. Проблема толерантности в межконфессиональних отношениях, т.1. Екатеринбург, 2008. с. 13-14.
[15] Տե՛ս Rawls J. Political Liberalism, N.Y., 1993, p. 154.

ձևավորվում է հասարակական համերաշխության մթնոլորտ: Հասարակական համերաշխությունը հնարավոր է պահպանել համընդհանուր արժեք համարվող օրենքի գերիշխանությամբ պայմանավորված արդարության սկզբունքի պահպանման միջոցով, որի հետ սերտորեն կապված է հանդուրժողականության ընկալումը: Դ. Ռոուլզի հայացքները քննադատվել են անգլիացի փիլիսոփա Դ. Գրեյի կողմից, որի կարծիքով ազատական հանդուրժողականության հայեցակարգը չի բավարարում ժամանակակից հասարակության հիմնական պահանջներին, որոնց շարքին են դասվում բազմամշակութայնությունը և արժեքային բազմախոհությունը [16] : Քննադատության հիմնական մեխը նրանումն էր, որ Դ. Ռոուլզն անհատին պատկերացնում էր որպես աբստրակտ, իդեալական, վերմարդկային մի էություն, այլ ոչ թե իբրև կոնկրետ հասարակության մեջ գործառնող անհատի, ինչպես դա արտահայտված էր մարքսիստական գաղափարախոսության մեջ:

Ժամանակակից աշխարհում ընթացող միտումները կասկածի տակ են դնում հանդուժողականության թե տեսական և թե պրակտիկ էֆֆեկտիվությունը: Մյուս կողմից, հանդուրժողականության քննադատները պրակտիկ փորձի հիման վրա ցույց են տալիս, որ ժամանակակից շատ հասարակություններում հանդուրժողականությունը վերածվել է անտարբերության: Առավել հաճախ այս երկու մոտեցումները խառնվում են իրար, որովհետև դրանց ճշգրիտ սահմանները որոշելը բավականին բարդ է ու խճճված: Այս տեսանկյունից մարդիկ այս կամ արժեքի կամ արժեհամակարգի նկատմամբ հանդուրժողականություն են դրսևորում ոչ թե այն պատճառով որ դրա կրողն ու դա իրենց համոզմունքի մի մասն է, այլ նրա համար որ հասարակ պատկերացում չունեն այդ արժեքների մասին ու չեն էլ փորձում այլոց համոզել այդ արժեքների ճշմարտության կամ սխալի մեջ:

Այս պարագայում հանդուրժողականությունը պաշտպանող տեսակետները ելնում են ոչ թե այն մոտեցումից, որ այն իրենից արժեք է ներկայացնում, այլ որ այն փոխզիջում է բազմախոհական համակարգի պայմաններում: Լինել հանդուրժողական չի նշանակում ապրել այն նույն արժեքներով ու կենսակերպով ինչ հասարակության այլ անդամները, այլ ուղղակի ընդունել այն ձևը ու կենսակերպը, որը տարբերվում է սեփականից: Եթե

[16] Տե'ս Грей Д. Поминки по Просвещанию: Политика и култура на закате современности. М., 2003. с. 19.

ավանդական հասարակության մեջ հանդուրժողականությունն առավելապես վերաբերում էր համոզմունքներին ու գաղափարներին, ապա ժամանակակից իրականության մեջ կիզակետում են գտնվում ռասայական, գենդերային, էթնիկական, կրոնական և այլ խնդիրները: Այդ պատճառով էլ ավելի է բարդացել հանդուրժողականության բարոյաէթիկական սահմանումը նման պայմաններում:

Հանդուրժողականության ՅՈՒՆԵՍԿՈ-ի հայեցակարգը

Հանդուրժողականությունն առանցքային եզրույթ է, բավականին լայն տարածում գտած հասկացություն, որը հաճախ կիրառվում է միջմշակութային ու քաղաքական-գաղափարախոսական բանավեճերի ժամանակ: Թեև դեռևս ՅՈՒՆԵՍԿՈ-ի 1945 թ. փաստաթղթում [17] արդեն կիրառվում է «հանդուրժողականություն» հասկացությունը, այնուամենայնիվ ավելի առարկայական է այն դառնում 1995 թ. հռչակագրում [18]: Այդ նախաձեռնությանը հաջորդում է տվյալ տարին Հանդուրժողականության միջազգային տարի հռչակելը, ինչպես նաև բազմազանության, հանդուրժողականության, կրոնական ու մշակութային երկխոսության և նմանատիպ թեմաներով ավելի քան 50 ազգային, տարածաշրջանային և միջազգային հանդիպումների տարի դառնալը: Հետագայում Հանդուրժողականության Սկզբունքների Հռչակագրի՝ ՅՈՒՆԵՍԿՈ անդամ պետությունների կողմից վավերացման օրը՝ Նոյեմբերի 16-ը, ճանաչվեց որպես Հանդուրժողականության միջազգային օր: Հռչակագրի հոդված 1.1-ում սահմանվում է «հանդուրժողականություն» հասկացությունը որպես ինտեգրատիվ կամ հավաքական եզրույթ, որը մեկնաբանվում է երեք այլ եզրույթների՝ **հարգանքի, ընդունման և արժևորման** միջոցով: Դա առաջացնում է որոշակի շփոթություն, քանի որ այդ եզրույթներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն հայեցակարգային կոնոտացիան և տարբեր կերպ է մեկնաբանում մարդու վարքի բնույթը՝ ուղղված «այլ» լինելուն (otherness): Մեկ այլ փորձ է արվում սահմանելու հանդուրժողականությունը հոդված 1.4-ում, որի համաձայն դա նշանակում է, որ «յուրաքանչյուր մարդ ազատ է հավատարիմ մնալու սեփական համոզմունքներին և ընդունում է մյուսների՝ իրենց համոզմունքներին հավատարիմ

[17] Constitution of the United Nations Educational, Scientific and Cultural Organization, London, 16 November 1945
[18] UNESCO Declaration of Principles on Tolerance, Paris, 16 November 1995

մնալը»: Հանդուրժողականությունն ընկալվում է որպես այն փաստի ընդունում, որ մարդիկ և նրանց ինքնարտահայտման ձևերն ի սկզբանե, բնականոն կերպով բազմազան են[19]:

Փիլիսոփայական տեսանկյունից հանդուրժողականությունը մեկնաբանվում է նաև որպես ավելի շատ պասիվ մոտեցում հավասարության ճանաչմանը: Այն պարզապես խթանում է համակեցությունը հանուն խաղաղության:[20] Այսպիսի մեկնաբանումն ավելի շատ է մոտեցնում «հանդուրժողականություն» և «անտարբերություն» կամ « չեզոքություն» հասկացությունները տվյալ համատեքստում:

Համաձայն վերոնշյալ մոտեցման, եթե մենք ցանկանում ենք ձևավորել կենսունակ բազմազանություն, ապա միայն հանդուրժողականությունը բավարար չէ: Անհրաժեշտ է ընդունել ոչ միայն տարբերությունների առկայությունը, այլ նաև միմյանց վրա ունեցած ազդեցությունը: Մյուսի եզակիությունը, ուրույնությունը և դրա հետ մեկտեղ քեզ հավասար լինելը ճանաչելն ու ողջունելը ենթադրում է **առավել ակտիվ ներգրավվածություն, մասնակցություն:** Մեկը մյուսից և մեկը մյուսի մասին սովորելու պատրաստակամությունը պահանջում է **բաց աշխարհայացք** և կապված է **փոխադարձ հավասարության ճանաչման** հետ[21]:

Ժամանակակից գրականության մեջ հանդուրժողականությունը հիմնականում հիմնվում է անհատի նկատմամբ հարգանքի վրա, որը ոչ թե ենթադրում է որևէ կոնկրետ՝ կրոնական, էթիկական կամ ռասայական անհանդուրժողականության քննադատություն, այլ փորձում է ցույց տալ անհանդուրժողականության անօրինակությունը ընդհանրապես: Ռուս փիլիսոփա Ս. Էլինսկին ընդգծում է հանդուրժողականության վերլուծությանն ուղղված չորս հիմնական մոտեցումներ.

ա) արժեբանական մոտեցում, որը հանդուրժողականությունը մեկնաբանում է որպես «ինքնին արժեք» կամ էլ որպես լիբերալ-դեմոկրատիայի արժեքներից մեկը,

բ) իդեալական-տիպական մոտեցում, որի հետևորդները հանդուրժողականությունը ընկալում են իբրև որոշակի բարոյական իդեալ, որին պետք է ուղղված լինեն

[19] Տե՛ս World Heritage and Cultural Diversity / Ed. by Dieter Offenhäußer, Walther Ch. Zimmerli, Marie-Theres Albert, German Commission for UNESCO, DRUCKZONE GmbH & Co. KG, Cottbus, 2010; P131.
[20] Տե՛ս World Heritage and Cultural Diversity / Ed. by Dieter Offenhäußer, Walther Ch. Zimmerli, Marie-Theres Albert, German Commission for UNESCO, DRUCKZONE GmbH & Co. KG, Cottbus, 2010; P. 132.
[21] Տե՛ս նույն տեղում:

հասարակության ջանքերը: Փիլիսոփայի կարծիքով, այս մոտեցման հիմքում ընկած է Է. Կանտի նորմատիվ-ռացիոնալիստական մեկնությունը հանդուրժողականության վերաբերյալ, որը հիմնված է անհատի անօտարելի բնական իրավունքների հայեցակարգի վրա,

գ) գոյաբանական-պատմական մոտեցումը հանդուրժողականությունը դիտարկում է իբրև պատմության ընթացքում խմբերի համակեցության որոշակի միջոց (Մ. Ուոլցեր),

դ) «բախումային մոտեցումը» (Շ. Մուֆոմ, Ժ. Լակլաու), որի համաձայն հանդուրժողականությունը իրենից ներկայացնում է որոշակի հակամարտություն, սակայն այն տեղի է ունենում հայտնի սահմաններում[22]:

Միևնույն ժամանակ ազատական ուղղության ներկայացուցիչ Պ. Նիկոլսոնը ռացիոնալ եղանակով սահմանում է հանդուրժողականության գաղափարը բարոյական ու քաղաքական ազատական փիլիսոփայությունների շրջանակում: Նրա տալիս է հանդուրժողականության հետևյալ սահմանումը. «Հանդուրժողականությունը այն զսպաշապիկն է, որը հետ է պահում անհատին ուժի գործածումից մեկ այլ անհատի կարծիքի կամ գործողության վրա ներգործելու նպատակով, չնայած որ այդ անհատը հանդուրժող մարդու կարծիքով սխալ է և վերջինս բարոյապես համաձայն չէր նրա հետ»[23]: Հանդուրժողականության հակառակ կողմում է գտնվում անհանդուրժողականությունը, որի ժամանակ մի սուբյեկտը դիմում է **ուժի գործածությանը** դիմացինի կարծիքի կամ գործողության վրա ազդելու համար: Ուժի ձևերը կարող են ընդգրկել ֆիզիկականից մինչև հոգեբանական ճնշման ողջ սպեկտրը: Հանդուրժողականությունը անում է այն, ինչ մարդը չի ուզում անել, քանի որ թույլատրում է «ոչ ճշմարիտ» կարծիքների ու գործողությունների գոյությունը, որոնց հետ մարդը չի կարող համաձայնել:

Փիլիսոփա Պ. Նիկոլսոնի կարծիքով, հանդուրժողականության բարոյական սկզբունքն առաջնորդվում է հիմնականում երկու սահմանափակությամբ. այն ենթադրում է բարոյական սկզբունքին հակադրվող յուրաքանչյուր երևույթի մերժում, որի հիմքում ընկած է հարգանքը բոլոր մարդկանց նկատմամբ որպես բարոյական էակների, ինչպես

[22] Մեջբերումն ըստ Степанова Е. А. Проблема толерантности в межконфессиональних отношениях, т.1. с. 17-18. Տե՛ս Ильинская С. Толерантность как категория политической теории: Автореф. Дис. ...канд. полит. Наык, М., 2006, с. 3-7.
[23] Николсон П. Толерантность как моральный идеал / / Толерантность: Вестн. УрМИОН. С. 131-132.

նաև՝ հանդուրժողականության իդեալին հակադրվող յուրաքանչյուր երևույթի մերժում: Չի կարելի հանդուրժողական լինել հանդուրժողականության ոչնչացմանն ու վերացմանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ հանդուրժողականությունը չի նշանակում սեփական սկզբունքների դավաճանություն: Չի կարելի ճնշել այլոց սկզբունքներն ու համոզմունքները, սակայն անհրաժեշտ չէ համաձայն լինել այդ սկզբունքների ու համոզմունքների հետ[24]:

Բազմամշակութային հասարակության մեջ համակեցության տարբեր մոդելներ են գործում: Կարելի է առանձնացնել իրարից խիստ տարբերվող երեք հիմնական մոդել՝ սեպարատիզմ, մշակութային պլյուրալիզմ և գերիշխող մշակույթի կամ, ինչպես ասում են սոցիոլոգները, «կաթսայի մեջ լուծվելու» տարբերակները: Վերջինս համարվում է ամերիկացիների, որպես ազգի, ձևավորման տեսությունը, որի համաձայն միգրանտները, տարբեր ռասաներ ու էթնիկ պատկանելություն ունեցող նորեկները, ընդհանուր կրթական համակարգի ու ԶԼՄների շնորհիվ աստիճանաբար կորցնում են իրենց մշակութային առանձնահատկությունները, ձուլվում են մեկ ընդհանուր մշակույթին ու դառնում «ամերիկացի»[25]: «Ձուլման կաթսա» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է 1908 թ-ին անգլիացի դրամատուրգ Զանգուիլլի կողմից իր համանուն պիեսի մեջ, որը ԱՄՆ-ում ներգաղթած հրեաների կյանքի մասին էր: Այս մոտեցումը բավականին փոփոխությունների է ենթարկվել ժամանակակից աշխարհում՝ էվոլուցիոն զարգացման ճանապարհով իր տեղը զիջելով առավել արդյունավետ ձևերի, որոնցից վերջինը բազմամշակութայնության հայեցակարգն է:

Այս մոդելին հակադրվող տարբերակ է մշակութային պլյուրալիզմը, համաձայն որի պետության բարեկեցության գրավականը ոչ թե ձուլվելու, այլ մշակույթների ուրույնությունը պահպանելու մեջ է՝ այնպիսի սոցիալ-քաղաքական միջավայր ստեղծելով, ուր տարբեր էթնիկ խմբեր ու մշակույթներ կկարողանան կենսագործել համեմատական ներդաշնակության մեջ: Վերջին տարիներին սոցիոլոգներն ավելի շատ խոսում են հենց այս գործընթացի՝ ձուլվելու փոխարեն սեփականը պահպանելու միտման մասին, այս դեպքում արդեն անվանելով դա «աղցանի ման», ուր առանձին բաղադրիչների համային

[24] Տե՛ս նույն տեղում:
[25] Տե՛ս Segal E.A., Gerdes K.E., Sue Steiner An introduction to the profession of social work: Becoming a change agent, 3-rd edition, USA, Brooks/Cole, 2010; P. 78.

բնութագրիչները հնարավորինս պահպանվում են, բայց այնուամենայնիվ ստեղծվում է նոր «համ»: Այսինքն՝ այսպիսի մոդելով առաջնորդվող հասարակության մեջ բազմազանությունը դիտվում է որպես հարստացնող, նորը ստեղծող գործոն, երբ տարբերվող մարդիկ կարող են ապրել, աշխատել կողք կողքի և միաժամանակ արժևորվել իրենց ուրույն ներդրմամբ սոցիալական խմբի կամ, առհասարակ, հասարակության գործառնման մեջ:

Մեկ այլ տարբերակ է սեպարատիզմը, երբ տարբեր մշակույթներ ներկայացնող սոցիալական խմբերը կարող են կենսագործել մեկ պետությունում, սակայն առավելագույնս իրարից անկախ ու հեռու, այսինքն՝ բավականին մեծ է նրանց միջև սոցիալական դիստանցիան: Հնարավորինս առանձին են գործում սոցիալ-տնտեսական ինստիտուտները յուրաքանչյուր խմբի համար: Այսպիսի ձգտումն առանձնանալու, որպես կանոն, ռեակցիան է հիմնական (դոմինանտ) մշակույթից դուրս մնալուն, արտամղվելուն, հասարակության մեջ ապահով չզգալուն և այդ գերիշխող մշակույթի մեջ լուծվելու դեպքում սոցիալ-տնտեսական առումով հաջողության հասնելու հեռանկարներ չտեսնելուն: Հենց այս մոդելով համակեցության դեպքում է, որ հասարակությունը տրոհվում է խմբերի, ուր կան օտարներ ու յուրայիններ: Ընդ որում, այսպիսի խիստ բաժանումը դժվարեցնում է հատկապես հասարակության այն անդամների կենսագործունեությունը, ովքեր միաժամանակ մի քանի հատկանիշներով տարբերվելով կարող են ի վերջո որևէ մեկ խմբում այդպես էլ չդառնալ յուրային, այսինքն, լինելով միաժամանակ մի քանի սոցիալական փոքրամասնությունների ներկայացուցիչ, դուրս մղվել դրանցից բոլորի կողմից[26]: Դա գրեթե անհնար է դարձնում կամ խիստ դժվարեցնում է հանդուրժողականության զարգացման և ընդհանուր հիմնախնդիրների դեմ պայքարի, սոցիալական փոփոխության հասնելու համար կոալիցիայի ստեղծման գործընթացները:

Պետք է նկատել, որ հանդուրժողականությունը միայն համակեցության նորմերի շրջանակներում դիտարկելով բավարար չէ ժամանակակից հասարակությունների ներսում տեղի ունեցող հակասությունները հաղթահարելու համար: Հանդուրժողականությունը պետք է քննարկվի ոչ միայն քաղաքական հարթության մեջ, այլ

[26] Տես Segal E.A., Gerdes K.E., Sue Steiner An introduction to the profession of social work: Becoming a change agent, 3-rd edition, USA, Brooks/Cole, 2010; p. 78.

նաև սոցիալ-մշակութային, քանի որ հանդուրժողականությունը հանդես է գալիս իբրև մի գործիք՝ տարբեր մշակույթների միջև համերաշխություն հաստատելու համար: Եթե բազմազգ երկրների պարագայում գործում է առավելապես մշակութային երկխոսությունը տարբեր պատմական ու կրոնական հիմքեր ունեցող մշակույթների միջև, ապա մոնոէթնիկ երկրներում հասարակական համակեցությունն ապահովելու նպատակով պետք է գործի առավելապես սոցիալական հանդուրժողականությունը՝ սոցիալական տարբեր խմբերի միջև երկխոսություն ապահովելու համար:

Ժամանակակից աշխարհի երկրներում գոյություն ունեն տարբեր մշակույթներ ու կրոններ: Որոշ երկներն առավել բազմազգ են ու բազմամշակութային և այս պարագայում գործում են գլոբալիզացիոն գործընթացներով պայմանավորված լրիվ այլ կանոններ: Որոշ երկրներ առավել ավանդական են ու թշնամաբար են ընդունում «արևմտյան ախտ» համարվող բազմախոհություն ու հանդուրժողականությունը և դրա յուրաքանչյուր քարոզ: Ավանդական շատ հասարակարգերում անհատի ազատությունների շեշտադրումն ու ազատականության քարոզը դիտվում են իբրև արևմտյան գերտերությունների կողմից ազգային պետությունների հիմքերը քայքայելու «զենք» ու ազգային արժեքների, ազգային անվտանգության, ազգային ավանդույթների պահպանման, հայրենասիրական քարոզի ազգային եկեղեցու դերի ընդգծման ու պահպանողականության քարոզի միջոցով նրանք փորձում էին հակազդել «արևմտյան ախտերին»: Այս մոդելը գործում է նաև հասարակությունների ներսում, երբ ազատական խմբերը բախվում են պահպանողականության մեծ պատին ու փորձում իրավունքի իրագործման հիման վրա հաստատել համընդհանուր արժեքներն ու միջազգային նորմատիվ ակտերով սահմանված սկզբունքները:

1.3 Կրոնական հանդուրժողականության սահմաններն ու էությունը

Ս. Հանթինգտոնի քաղաքակրթությունների բախման վերաբերյալ տեսությունից հետո, որով ազդարարվեց համաշխարհային կրոնների հիմքի վրա ձևավորված քաղաքակրթությունների բախման հնարավորությունը (հատկապես իսլամական ու քրիստոնեական աշխարհների միջև), ժամանակակից աշխարհում էլ ավելի են արդիականացել կրոնական հանդուրժողականության, կրոնական բազմախոհության ու

կրոնական երկխոսության թեմաները: Տարբեր միջազգային կառույցներ իրենց ուշադրության կիզակետում են պահում մարդու կրոնական ազատությունների խնդիրը, որը հաճախ խախտվում է գերիշխող մեծամասնության կրոնի կամ ազգային-ավանդական կրոնական կառույցների ներկայացուցիչների կողմից: Կրոնական ազատությունների խնդիրը հիմնականում դիտարկվում է խղճի ազատության սկզբունքի պահպանության դիրքերից, որը ամրագրված է ժողովրդավարական ճանապարհն ընտրած պետությունների հիմնական օրենքներում ու որը առավել հաճախ խախտվում է ազգայնական կամ հայրենասիրական կոչերի անվան տակ: Այսպես, այս համատեքստում ազգայանկան կուսակցության անդամ հանդիսացող ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտարարեց, որ «եկեղեցին պետությունից անջատ լինելու մասին սահմանադրական դրույթը հնացած է», որով նա ուղղակի հարցականի տակ էր դնում սահմանադրության մեջ ամրագրված խղճի ազատության սկզբունքը: Իսկ օրինակ Վրաստանի Հանրապետությունում պետությունը հատուկ սահմանադրական պայմանագիր է ստորագրել եկեղեցու հետ, որով փաստացիորեն խախտվում է եկեղեցին պետությունից անջատ լինելու ու խղճի ազատության սահմանադրական դրույթները: Նմանատիպ օրինակներ առկա են այլ երկրներում ևս:

Կրոնական հանդուրժողականությունը չի ենթադրում սեփական կրոնական հայացքներից հրաժարում, այլ հարգանք այլոց կրոնական հայացքների, արժեքների, արժեհամակարգերի, իրավունքների նկատմամբ, որոնք տարբերվում են սեփական հայացքներից, արժեքներից, արժեհամակարգերից ու իրավունքներից: Այլոց կրոնական հայացքների նկատմամաբ հարգանքը հիմնված է ոչ թե այն համոզմունքի վրա, որ նրանց կրոնական հայացքները ճիշտ են, այլ նրա, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ունենալ անկախ կրոնական հայացքներ՝ անկախ նրանից, թե դրանք ճշմարիտ ենք համարում, թե՝ ոչ:

Գոյություն ունեն շատ փաստարկներ կրոնական հանդուրժողականության գաղափարը չընդունելու կամ այն հասարակության համար վտանգավոր համարելու համար: Առաջին հերթին դա այն մտավախությունն է, որ կրոնական հանդուրժողականությունը կարող է հանգեցնել անկրոնականության, քանի որ մարդիկ կսկսեն անտարբերությամբ վերաբերել տարբեր կրոնական ուղղությունների կողմից

քարոզվող ճշմարտության նկատմամբ: Դա էլ իր հերթին հասարակությունների մեջ կարող է ոչնչացնել կրոնի վրա հիմնված բարոյաէթիկական նորմերն ու հասարակություններին հասցնել անարխիայի վիճակի: Հաջորդ մտավախությունը նրանումն է, որ արևմտյան հանդուրժողականության գաղափարները որևէ արժեք չունեն ոչ-արևմտյան հասարակությունների համար: Այսպես, հաճախ է հնչում, որ արևմտյան դեմոկրատիան հենց սկզբից դատապարտված էր անհաջողության Իրաքի, Աֆղանստանի պարագայում, քանի որ այդ երկրներում կրոնական ավանդույթների խորը արմատացվածությունը խանգարում է արևմտյան ազատական մոդելի կիրառությանը: Եվ վերջապես, երրորդ տեսակետը մերժում է հանդուրժականությունը՝ ելնելով այն մոտեցումից, որ հանդուրժողականությունը ենթադրում է հանդուրժել ամեն ինչ[27]: Նմանատիպ մոտեցումը հանդուրժողականության նկատմամբ բավականին պրիմիտիվ է, քանի որ բավականին մեծ թվով երևույթների նկատմամբ մարդու բարոյաէթիկական նորմերը, ինչպես նաև իրավական նորմերը թույլ չեն տալիս հանդուրժող լինել:

Կրոնական հանդուրժողականության նկատմամբ տեսաբաններից շատերի տեսակետները (Ա.Մարգալիտ, Վ. Լիխաչով) աչքի են ընկնում վատատեսական-բացասական լույսով, քանի որ, համաձայն նրանց, յուրաքանչյուր կրոնական ուղղություն, համոզված լինելով սեփական ուսմունքի բացառիկ առաքելության ու ճշմարտությունների մեջ, բացառում է համագործակցությունն ու հանդուրժողականությունը այլ կրոնների հետ: Քանի որ կրոնական գիտակցությունը փորձում է մենաշնորհել ճշմարտության մասին ուսմունքը, ապա այս պարագայում դժվար է կրոնական տեսանկյունից գտնել հանդուրժողականություն կրոնների միջև: Կրոնական աշխարհայացքների հիմքում ընկած սկզբունքները չեն ընդունում երկակի իմաստներ ու փոխզիջումային լուծումներ և առավել հակված են ավտորիտար եղանակով խնդիրների լուծմանը, իսկ իրավահավասարության, նույնանման արժեքներին հետևելու և հավասարության նմանատիպ այլ մոտեցումներ հակասում են ավանդական կրոնական աշխարհայացքին ու գիտակցությանը: Կրոնների միջև հանդուրժողականությունը, երկխոսությունն ու համագործակցությունը հնարավոր է միայն աշխարհիկ պետությունների պարագայում, քանի որ հակառակ դեպքում կրոններից մեկին տրվող արտոնություններն ու հեգեմոն դիրքը ի չիք են դարձնում այդ

[27] Տե՛ս Степанова Е. А. Проблема толерантности в межконфессиональних отношениях, т.1. с. 22.

համագործակցության ու հետևաբար նաև հանդուրժողականության հնարավորությունները:

Ավանդական կրոնական գիտակցությունն ինքնին անհանդուրժող է: Այլ խնդիր է, որ այն ոչ միշտ է ագրեսիվ ձևերի մեջ արտահայտվում պոտենցիալ «հակառակորդների» նկատմամբ: Այդ անհանդուրժողականության կամ երբեմն ագրեսիայի դրսևորման ձևերը տարբեր են լինում, ինչը հիմնականում կախված է տվյալ կոնկրետ կրոնական աշխարհայացքի դոգմատիկ պատկերացումներից ու բնույթից: Բարդ կրոնական բազմազանություն ունեցող երկրներում ավանդական կրոնական կազմակերպությունների կամ տարբեր կրոնական կազմակերպությունների կողմից գործում են այլակրոնների նկատմամբ վերաբերմունքի տարբեր մոդելներ, որոնք տատանվում են անտարբերությունից մինչև ագրեսիվության ամենավերին աստիճաններ: Հատկապես ավանդական կրոնական գիտակցության մեջ երբեմն գերիշխող է այն կարծիքը, որ ավանդական կրոնները, ի տարբերություն նորօրյա հոսանքների, քարոզում են սեր, համերաշխություն, հանդուրժողականություն, ինչը բավականին հեռու է իրականությունից, քանի որ հանդուրժողականություն երբևէ բացարձակ արժեք չի համարվել ավանդական կրոնների կողմից ու ավանդական կրոնների ներկայացուցիչները երբևէ աչքի չեն ընկել իրենց հանդուրժողական վերաբերմունքով այլակրոնների ու այլադավանների նկատմամբ: Նրանք մշտապես համարել ու համարում են, որ այլակրոնները «զավթել» են իրենց «տարածքները» ու իրենց նպատակը պետք է լինի դրանց ազատագրումը: Նմանատիպ մոտեցումները բավականաչափ հեռու են հանդուրժողականության ընդհանուր սկզբունքներից ու թույլ չեն տալիս, թեկուզ վերապահումով, ավանդական կրոնների ներկայացուցիչներին հանդուրժողական համարել:

Կրոնական հանդուրժողականության մասին խոսելիս նախևառաջ պետք է հստակեցնել, թե որն է կրոնական հանդուրժողականության էությունը: Որոշ կարծիքների համաձայն կրոնական հանդուրժողականությունը պետական քաղաքականության բնութագրիչներից է, երբ պետությունը երաշխավորում է կրոնական բազմախոհություն ու կրոնական ազատություններ: Կրոնական հանդուրժողականության տակ հաճախ ընկալվում է անհատի կրոնական ազատությունը, համաձայն որոնց նա հետևում է այն

կրոնին, որին ինքը ցանկանում է (Գ. Մենշինգ): Կրոնական հանդուրժողականություն նշանակում է չխառնվել մարդկանց հավատքի հարցերին ու թույլատրել տարբեր կրոնական ուղղությունների, հավատքների, դենոմինացիաների ազատ գործառնությունը, եթե, իհարկե, դրանք գործում են օրենքի շրջանակներում (ՄԱԿ Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիր, հոդված 2 և 18): Մյուս կողմից, բավականին հստակ է, որ կրոնական հանդուրժողականությունը չպետք է շփոթել անտարբերության կամ պասիվության հետ, երբ չկա վերաբերմունք, ինչն էլ իր հերթին նշանակում է որ չկան կայացած համոզմունքներ տվյալ հարցում: Որևէ հարցի նկատմամբ համոզմունքների բացակայությունը նշանակում է պատկերացում չունենալ տվյալ երևույթի նկատմամբ, ինչն էլ իր հերթին վկայում է հանդուրժողականության մասին խոսելու անհնարինության մասին: Ի հակառակը սրա պետք է նշել, որ հանդուրժողականությունը ենթադրում է ակտիվ ու պատասխանատու գործունեություն:

Տեսականորեն թվում է, թե անհատի կրոնական հավատքի աստիճանին հակառակ համեմատական պետք է լինի կրոնական հանդուրժողականությունը, քանի որ սեփական հավատքի դրույթների ճշմարտացիության շուրջ համոզվածությունը նվազեցնում է այլ հավատքների կամ կրոնական ճշմարտությունների ներկայացուցիչների նկատմամբ հանդուրժողականության մակարդակը: Այսպես, առավել ծայրահեղական հավատքի ներկայացուցիչներն են հաճախ հանդիսանում տարբեր ահաբեկչական գործողությունների, ագրեսիվ արարքների հեղինակներ, ինչը նրանք «հիմնավորում են» իրենց ճշմարիտ հավատքով: Մյուս կողմից վերը նշվածը չի ենթադրում, որ այլակրոնների նկատմամբ անհանդուրժողականություն դրսևորողները պարտադիր պետք է լինեն որևէ ավանդական կամ ոչ ավանդական կրոնական ուղղության համոզված ներկայացուցիչներ: Այլակրոնների նկատմամբ անհանդուրժողականություն կարող է դրսևորվել ազգայնականների, պահպանողականների ու այլ խմբերի կողմից:

Կրոնական խմբերի ու հատկապես ինստիտուցիոնալ կառույցների կողմից կրոնական հանդուրժողականության նկատմամբ մտավախությունները հիմնված են նաև այն ենթադրության վրա, որ կրոնական հանդուրժողականության տարածումը կարող է կոտրել կրոնական կազմակերպությունների միջև առկա սահմանները ու համընդհանուր արժեքային դաշտի հիման վրա հանգեցնել կրոնական սինկրետիզմի կամ ունիֆիկացիայի

(Ջ. Սմիթ): Այս տեսակետն է պաշտպանում անգլիացի դասական փիլիսոփա Ջ. Լոկը իր «Ուղերձ հանդուրժողականության մասին» աշխատության մեջ, որտեղ ռացիոնալ եղանակով քննարկել է կրոնական ու քաղաքական հիմնահարցեր: Նա համարում էր, որ քրիստոնեական եկեղեցու հիմնական առաքելություններից է հանդուրժողականության տարածումը քրիստոնյա հավատացյալների շրջանում, սակայն միևնույն ժամանակ համոզված էր, որ այն հնարավոր չէ անել մի շարք քրիստոնեական կոնֆեսիաների պարագայում: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կրոնական հանդուրժողականության աստվածաբանական կողմը առավել հաճախ է շեշտվում, երբ բացակայում են ուժեղ սոցիալական հիմքերն ու կապերը:

Կրոնական հանդուրժողականության ու կրոնական բազմախոհության հիմնական պահանջներից է եկեղեցու անջատումը պետությունից, որը, սակայն, հաճախ հանգեցնում է աշխարհիկացման աճի ու վնասում հատկապես մուսուլմանների շահերը (Դ. Սմիթ): Այնուամենայնիվ աշխարհիկացման գործընթացները պարտադիր չեն ենթադրում կրոնական հանդուրժողականության պակասեցում, այլ ենթադրում են կրոնի առավել մասնավորեցում: Եվրոպական երկրներում վերջին ժամանակներում կրոնական սիմվոլների գործածության արգելքը հանրային տարածքներում կարելի է մեկնաբանել որպես կրոնական հանդուրժողականության նվազեցում, սակայն դա ոչ միշտ է այդպես: Համաձայն հայտնի կրոնի սոցիոլոգ Խոսե Կազանովայի՝ կրոնատածությունը մասնավոր տարածքից վերադառնում է դեպի հանրային տարածք ու կրոնի դերն էլ ավելի է արժևորվում: Պարզ է դառնում, որ կրոնատածության ու աշխարհիկության հարաբերությունների ազդեցությունը կրոնական հանդուրժողականության վրա բավականին դժվար է ճշգրիտ սահմանել ու ձևակերպել:

Կրոնական հանդուրժողականության հետ կապված հարցերում ամենից հաճախ օգտագործվող հասկացությունների շարքում է ռելյատիվիզմը (հարաբերականությունը): Հետմոդեռնիստական մտածողության համաձայն մարդկային աշխարհայացքը չի կարող չեզոք լինել: Յուրաքանչյուր արտահայտություն կարող է իմաստ ունենալ միայն «մետանարատիվի» համատեքստում, որի նկատմամբ, այնուամենայնիվ, պետք է կասկածամիտ մոտեցում ցուցաբերել (Ժ.Ֆ. Լիոտար): Իրականում հենց մետանարատիվն է ընկած պոստմոդերնիզմի հիմքում. խելացի անհատներն աշխարհին աշխատում են նայել

նարատիվից դուրս: Պոստմոդերնիստը պետք է հանդուրժողական վերաբերմունք դրսևորի յուրաքանչյուր մետանարատիվի նկատմամբ, սակայն իրականում նա անհանդուրժողական է բոլոր մետանարատիվների նկատմամբ, բացի իր սեփականից: Յուրաքանչյուր կարծիք (statement) գոյության իրավունք ունի, եթե միայն այն հանդես է գալիս որպես այդ գերիշխող մետանարատիվի մաս [28] : Իր հերթին ռելյատիվիզմը հանդիսանում է հանդուրժողականության քննադատը, քանի որ դրա ներկայացուցիչները կրոնական հանդուրժողականությունը դիտարկում են կրոնի բացարձակության տեսանկյունից: Ռելյատիվիստի տեսանկյունից որևէ պատճառ չկա բաց չլինելու այլ կրոնների նկատմամբ, քանի որ անհնար է ապացուցել որևէ կրոնի առավելությունը այլ կրոնի նկատմամբ: Ռելյատիվիստը ելնում է աշխարհի, արժեքների ու արժեհամակարգերի հարաբերականության դիրքերից, ինչը մի կողմից բավականին ուժեղացնում է նրա դիրքերը կրոնական հանդուրժողականության պաշտպանության գործում, իսկ մյուս կողմից էլ թուլացնում, քանի որ վերջնական ու ամբողջական պատասխան չի կարողանում գտնել որևէ հարցի վերաբերյալ:

Հանդուրժողականության մասին խոսելիս հնարավոր չէ շրջանցել հանդուրժողականության մակարդակի կամ աստիճանների մասին հարցը, քանի որ տարբեր հարցերի նկատմամբ մարդկանց վերաբերմունքը տարբեր է լինում: Սովորաբար հանդուրժողականության աստիճանները դասակարգում են բացասականից դեպի դրական կամ էլ հակառակը: Այսպես Պ. Մոյզեսը հանդուրժողականությունը դասակարգում է բացասականից դեպի դրական տարբերակով: Նրա դասակարգումն ունի հետևյալ տեսքը.

ա) պատերազմ,

բ) անտագոնիզմ,

գ) անտարբերություն,

դ) բանակցություններ,

ե) երկխոսություն,

զ) համագործակցություն,

է) սինթեզ կամ միասնություն[29]:

---

[28] Տե'ս Newman J. Foundations of Religious Tolerance. Toronto, 1982. p.22.

[29] Տե'ս Mojzes P. Types of Encounter between Religions // Attitudes of Religions and Ideologies Toward the Outsider / Eds. L.Swidler, P. Mojzes. Lewiston, 1990. p. 1-24.

Հետաքրքական է, որ անտագոնիզմի կարելի է հանդիպել միջկրոնական հարաբերություններում, ինչը կարող է դրսևորվել ինչպես տարբեր, այնպես էլ նույն կրոնական պատկանելություն ունեցող անձանց, խմբերի միջավայրում: Բանակցությունները անցումային փուլ են նախանշում, իսկ իսկական դրական փուլի անցումը սկսվում է երկխոսությունից, երբ արդեն հակառակ կողմերը սկսում են ընդունել միմյանց տարբերությունները: Դրական հանդուրժողականության բարձրագույն մակարդակը միասնությունն է, երբ տարբեր մոտեցումներ ունեցողներն սկսում են միասնական մոտեցումներով ու հասկացություններով ընկալել շրջապատող իրականությունն ու աշխարհը:

Չնայած նրան, որ նման դասակարգումները մշտապես հետաքրքրություն են առաջացնում, այնուամենայնիվ նրանք չեն պատասխանում այն գլխավոր պատճառահետևանքային հարցին, թե որ պատճառներով են առաջանում, զարգանում հանդուրժողական վերաբերմունքը կամ հարաբերությունները: Ինչ է ընկած այդ ամբողջի հիմքում և որոնք են դրա արմատները: Այդ պատճառների ուսումնասիրությունը հնարավորություն կտա ոչ միայն հասկանալ հանդուրժողականության սանդուղքի վրայով տեղի ունեցող տեղաշարժերը, այլև կբացահայտի տարբեր երևույթների նկատմամբ հանդուրժողականության դինամիկ զարգացման կամ ետընթացի տեմպերը:

Կրոնական հանդուրժողականության պարագայում անհրաժեշտ է նշել ևս մեկ կարևոր հանգամանք: Կրոնական հանդուրժողականությունը չի ենթադրում կրոնական հայացքների փոփոխություն կամ հանդուրժվելիք կրոնի ընդունում: Այլև ճիշտ հակառակը, հունդուրժողականություն դրսևորողը պետք է կարողանա ընդունել այլ հավատք կամ կրոն ունեցող անհատին կամ խմբին ու հարգանք դրսևորի նրա կամ նրանց հավատքի նկատմամբ: Հարգանքն այլախոհի կամ այլակրոնի նկատմամբ ցույց է տալիս, որ մարդը կարողանում է վեր կանգնել իր անձնական համոզմունքներից ու իր արժեքային սանդղակում առավել բարձր տեղի վրա դնել մարդուն ու նրա համոզմունքները: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է նշել, որ դոգմատիկ-աստվածաբանական հողի վրա կրոնական հանդուրժողականության հասնելը գրեթե անհնար է, դրա համար էլ կրոնական հանդուրժողականությունը հիմնականում հիմնվում է բարոյական-պրակտիկ սկզբունքների վրա: Բարոյական սկզբունքները ենթադրում են որևէ կարգի

անհանդուրժողական վերաբերմունքի կամ բռնության բացառում այլակրոնի կամ այլախոհի նկատմամբ:

Մյուս կարևոր առանձնահատկությունը կրոնական հանդուրժողականության սահմանների կամ դրանց ճշգրտման հարցն է: Ժամանակակից արևմտյան պետություններում բավականին երկար ժամանակ է, ինչ քարոզվում է կրոնական հանդուրժողականություն այլակրոնների նկատմամբ: Այնուամենայնիվ, այդ կրոնական հանդուրժողականության սահմանները վերջանում են այնտեղ, երբ հակասության մեջ են մտնում տվյալ հասարակությունում գոյություն ունեցող ավանդույթների ու պատկերացումների հետ: Շատ դեպքերում այդ ավանդույթի դերում հանդես են գալիս աշխարհիկության սկզբունքները, ու արևմտյան հասարակություններից շատերը ֆունդամենտալ կրոնական հայացքները կամ հանրային տարածքում գործառնող կրոնական ծեսերն ու ավանդույթները համարում են այդ սկզբունքներին հակասող երևույթ: Այսպես օրինակ, Ֆրանսիայում մուսուլմաններին արգելվեց գլխաշորերով հանրային տարածքներ մտնել, ինչը մուսուլմանների կողմից համարվեց անհանդուրժողականություն իսլամի նկատմամբ, սակայն ֆրանսիացիներից շատերը այն չեն համարում ոչ հանդուրժողական դրսևորում, այլ լոկ միայն իրավական նորմերի, հասարակական համակեցության և հասարակական անդորրի պահպանում[30]:

Հանդուրժողականությունը և, մասնավորապես, կրոնական հանդուրժողականությունը բավականին շատ քննարկված թեմա է, սակայն միևնույն ժամանակ դրա հետ կապված հարցերը մեծ քանակ են կազմում ու գնալով ավելի են շատանում: Այսպես, ինչպե՞ս կարելի է հանդուրժողական մոտեցում ցուցաբերել այնպիսի երևույթի նկատմամբ, որի հետ ոչ թե անհամաձայն ես, այլ այն առաջ է բերում տհաճ զգացումներ: Արդյո՞ք հանդուրժողականությունը տարածվում է նաև կրոնական մեծամասնությունների նկատմամբ, թե այն կիրառելի է հիմնականում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Ինչպիսի՞ն է տնտեսական պայմանների ու հանդուրժողականության փոխհարաբերությունը: Ինչպե՞ս կարող է տնտեսական համագործակցությունը տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև ազդել նրանց

[30] Տե'ս Hamman L. The Limits of Tolerance // Religious Traditions and the Limits of Tolerance / Eds. L.J. Hammann, H.M. Buck. Anima Books, 1988. p. 4-5.

հանդուրժողական վերաբերմունքի վրա միմյանց նկատմամբ: Ինչպե՞ս վարվել ներկրոնական կոնֆլիկտների հետ:

Նմանատիպ ու բազմաթիվ հարցեր են ընկած կրոնական հանդուրժողականության գաղափարի հիմքում, որը հիմնված է այն հարցի պատասխանի վրա, թե կարելի է արդյոք հանդուրժողաբար վերաբերվել ուրիշ հավատքի նկատմամբ՝ միևնույն ժամանակ համաձայն չլինելով այդ հավատքի ճշմարտությունների հետ ու չդառնալով այդ ուղղության հետևորդ:

1.4 Կրոնական հանդուրժողականությունը, բազմամշակութայնությունը և կրոնական երկխոսությունը ժամանակակից աշխարհում

19-րդ դարի փիլիսոփայական աշխատություններում առավել գերիշխող էր այն կարծիքը, որ արդյունաբերական աճին զուգահեռ նվազելու է կրոնի դերը ու այն կորցնելու է իր ազդեցությունը հասարակության վրա (Է. Դյուրկհայմ, Մ. Վեբեր, Կ. Մարքս, Զ. Ֆրոյդ): Կրոնի դերի թուլացման գլխավոր գործիքներն էին դիտում աշխարհականացումը, ռացիոնալիզացիան ու ուրբանիզացիան: Աշխարհականացման գործընթացների դասական բացատրությունն է համարվում Մ. Վեբերի «Բողոքական էթիկա և կապիտալիզմի շունչը» (1904) աշխատությունը: Կրոնական գիտակցության հետ կապված ժամանակակից գործընթացները շարունակում է բացատրել Է. Դյուրկհայմը «Կրոնական կյանքի տարրական ձևերը» (1912) աշխատության մեջ: Երկրորդ աշխարհամարտից հետո աշխարհականացման գործընթացները մարդու սուբյեկտիվ ընկալման ու օբյեկտիվ իրականության թելադրված պայմանների տեսանկյունից լավագույն ձևակերպել է հայտնի ամերիկյան սոցիոլոգ Պ. Բերգերը: Սոցիոլոգը ցույց է տալիս կրոնի հանրային ու մասնավոր բնույթները և հանգում այն գաղափարին, որ կրոնը դա ընտրության կամ նախապատվության գործ է: Աշխարհականացման գործընթացը ժամանակակից աշխարհում հանգեցրել է կրոնական ավանդույթների մենաշնորհների վերացմանը և կրոնական բազմախոհության հաստատմանը: Կրոնական բազմախոհությունը իրենից ենթադրում է տարբեր կրոնական ուղղությունների ազատ մրցակցություն, որով էլ յուրաքանչյուր կրոնի բովանդակությունը դառնում է բավականին հարաբերական: Միևնույն ժամանակ տարբեր կրոնական ուղղությունների ներկայացուցիչներ, կրոնական

համոզմունքների թուլացմանը զուգահեռ, սկսում են առավել հանդուրժողական վերաբերվել այլ կրոնական ուղղությունների ներկայացուցիչներին՝ հիմնվելով սկեպտիկ մոտեցումների վրա[31]:

Կրոնական տարբեր ուղղություններ տարբեր կերպ են արձագանքում բազմախոհությանը. մի մասը սկսում է գործել բազմախոհության կողմից թելադրված պայմաններով ու իրենց «արդյունքը» կամ «հոգևոր սնունդը» համապատասխանեցնում են սպառողական հասարակության պահանջներին, իսկ մյուս մասը հրաժարվում է այդպիսի ադապտացիայից ու փորձում թաքնվել տարբեր սոցիալ-կրոնական կառուցվածքների տակ ու պահպանել հին իրողությունները՝ ձևացնելով, որ ոչինչ չի փոխվել:

Երկրորդ աշխարհամարտից հետո կրոնագիտության ոլորտում ի հայտ եկած նշանավոր տեսություններից էր ապաաշխարհականցման տեսությունը կամ կրոնի մահանալու վերաբերյալ տեսությունների քննադատությունները: ԱՄՆ-ում ու աշխարհի տարբեր երկրներում պահպանվող կրոնականության բարձր տոկոսը, Նյու Էյջ շարժման ծավալումը, պենտեկոստալ եկեղեցու արագ աճն աշխարհի շատ երկրներում, տարբեր ֆունդամենտալիստական ուղղությունների աննախադեպ ծավալումը հատկապես իսլամական աշխարհում եկան ապացուցելու այն միտքը, որ կրոնը մասնավոր տարածքից վերադառնում է դեպի հանրային տարածք ու վաղ են «կրոնների մահվան» մասին կանխատեսումներն ու տեսությունները: Ժամանակակից կրոնագիտության մեջ գերիշխող է համարվում Բերկլիի համալսարանի պրոֆեսոր Խոսե Կազանովայի տեսակետը, ով իր «Հանրային կրոնները աշխարհում» գրքով նոր էջ բացեց կրոնների գնահատման ու արժևորման հարցում. վերջնականապես հերքվեց այն տեսակետը, որ կրոնների զարգացումը հակառակ համեմատական է տեխնիկական կամ արտադրական ուժերի աճին:

Ժամանակակից աշխարհում պետությունները տարբերվում են իրենց տնտեսական ու սոցիալական առաջընթացի մակարդակով, ինչն իր ուղղակի ազդեցությունն է ունենում կրոնական գիտակցության վրա: Միևնույն ժամանակ հասարակությունների արժեհամակարգերը հիմնականում կապված են կրոնական ավանդույթների ու մշակույթի հետ նույնիսկ այն դեպքում, երբ այդ հասարակության միայն մի փոքր մասն է իրեն

[31] Бергер П. Религия и проблема убедительности // Неприкосновенный запас. 2003. No. 6 (32).

համարում կրոնական, իսկ մեծամասնություն չի այցելում ոչ մի կրոնական պաշտամունքի: Այդ արժեքները պահպանվում են աշխատանքի, կրթության ու այլ ոլորտներում, ինչպես նաև մասայական լրատվամիջոցներում[32]: Այդպիսին են բողոքական Սկանդինավները, Գերմանիան, Հոլանդիան և այլն: Այդ իմաստով էլ աշխարհականցման գործընթացը չնայած ազդում է եկեղեցու հաճախելիության մակարդակի վրա, սակայն մեծ իմաստով արժեքային հատվածը պահպանվում է տվյալ հասարակության սոցիալական ու մշակութային ոլորտներում:

Զուգահեռաբար կրոնական ոլորտում այսօր մեծ դեր են խաղում մարդու անհատական փորձառությունն ու աստվածայինի հետ հաղորդակցության ապրումները և կրոնական զգացմունքները, որոնք կապված չեն եկեղեցի այցելության կամ էլ կրոնական այլ ծիսական գործողությունների հետ, այլ ծագում են անհատական զգացմունքային պահանջմունքների մակարդակում: Կրոնի մասնավորեցման երևույթը ևս որոշակիորեն թուլացնում է համընդհանուր ճանաչում գտած աշխարհականացման տեսությունը, որն առավելապես հիմնվում էր մարդկանց՝ կրոնական կազմակերպություններ այցելության ցուցանիշի վրա: Կրոնական փորձառության նմանատիպ մասնավոր դեպքերը հակասության մեջ են մտնում քրիստոնեության արևմտյան ավանդական մոդելի հետ: Վերջին տարիներին արևմտյան եվրոպական երկրներում մեծ թափով սկսեցին փակվել եկեղեցիները[33], կրճատվեց հոգևորականության թիվը, որն այնուամենայնիվ չի կարելի համարել կրոնի մահ կամ ավարտ, քանի որ կրոնական գիտակցությունը տեղափոխվում է կամ տրանսֆորմացվում դեպի այլ ոլորտներ ու շարունակում իր գոյությունն այնտեղ:

Աշխարհականացման աճին զուգահեռ տարբեր եկեղեցական համայնքներում ի հայտ են գալիս ծայրահեղական տարբեր դրսևորումներ: Պահպանողականները հանդես են գալիս ամեն մի նորարարության ու բացության դեմ, ազատականները իրենց հայտարարություններում ու ակցիաներով քննադատության են ենթարկում պահպանողական կառույցներին ու հոգևորականությանը, որի արդյունքում էլ հասարակությունների մեջ տեղի է ունենում դիվերսիֆիկացիա, ինչն արտահայտվում է նաև տարբեր կրոնական դենոմինացիաների ի հայտ գալով: Այս միտումները զգալի են

[32] Տե՛ս Norris P., Inglehart R. Sacred and Secular: Religion and Politics Worldwide, Cambridge, 2004. p. 5.
[33] Միայն Մեծ Բրիտանիայում 1970-2005թթ. ընթացքում փակվել են առավել քան 1700 եկեղեցիներ: Նույն միտումներն են Հոլանդիայում, Գերմանիայում և այլ երկրներում:

նաև հետխորհրդային Հայաստանում, որտեղ ազատական միտումները հանգեցրեցին հինգ տասնյակի հասնող կրոնական դենոմինացիաների առաջացմանը:

Վերջին տարիներին ավանդական կրոնական ուղղությունների հիմնական խնդիրների մեծ մասը սոցիալական բնույթ ունեն՝ աբորտների ու ամուսնալուծությունների արգելում, ընտանիքի ամրապնդում, սերնդի շարունակություն և այլն: Կանանց իրավունքների պաշտպանությունը, գենդերային հարցի ակտուալացումը, միասեռական ամուսնությունների խնդիրը և բազմաթիվ այլ հարցեր իրենց ուղղակի ազդեցությունն ունեցան մարդկանց կրոնականության վրա, ինչն առավել վառ դրսևորվեց հատկապես կաթոլիկ երկրներում:

Հետազոտողները լուրջ քննադատության են ենթարկում նաև «կրոնական շուկայի» տեսությունը, որը դիտարկվում էր իբրև աշխարհականցման ավանդական տեսությունների այլընտրանք: Համաձայն այդ տեսության, մարդկանց մասնակցությունը կրոնական պրակտիկաներին կախված է նրանց տրվող հնարավորությունների չափից: Հետևաբար կրոնական բազմախոհություն և խղճի ազատությունը պետք է ավելացնեն կրոնական մասնակցությունը, իսկ կրոնական մրցակցությունը պետք է դրականորեն անդրադառնա կրոնի տարածման վրա (Պ. Ստարկ, Ս. Ուորներ): Սրան ի հակառակ, ավանդական, դասական տեսությունները պնդում էին, որ կրոնական բազմախոհությունն ու մրցակցությունը վերացնում է կրոնական կազմակերպությունների միջև առկա սահմաններն ու արժեքները, դարձնում դրանք հարաբերական ու արագացնում աշխարհականցման գործընթացները:

Կրոնական պրակտիկաների առավել բարձր մակարդակ է գրանցվել այն երկրներում, որտեղ իշխանությունները կարգավորում են կրոնական ոլորտը: Դա պայմանավորված է նրանով, որ աղքատ ու ոչ դեմոկրատական երկրներում ավտորիտար իշխանությունները ուժեղացնում են կրոնական կազմակերպությունների դերն ու վերահսկում դրանք՝ նպատակ ունենալով լեգիտիմացնել իրենց իշխանությունը կրոնի միջոցով: Այդպիսի երկրներում կրոնն ու քաղաքականությունը սերտորեն կապված են իրար, կրոնական գործիչները ակտիվ մասնակցություն են ունենում քաղաքական գործընթացներին, պահպանում տարբեր տեսակի կապեր քաղաքական գործիչների ու այլ ազդեցիկ մարդկանց հետ: Ի հակառակն սրա ետինդուստրիալ ու դեմոկրատական

հասարակություններում կրոնի դերն սկսում է աստիճանաբար նվազել ու կրոնական կառույցները կորցնում են իրենց երբեմնի ունեցած մեծ դերը:

Միգրացիոն մեծ հոսքերը, տուրիզմը, առևտուրը, մշակութային ու գիտական փոխանակությունները, բարձրակարգ մասնագետների պահանջարկն այսօր աշխարհի տարբեր երկրներում ստեղծել են բազմամշակութային տարածություններ, որոնք իրենց հերթին առաջացնում են բազմաթիվ հարցադրումներ: Մինչև ո՞ր աստիճանը կամ սահմանը պետք է համարել բազմամշակութայնությունը ընդունելի, ինչպե՞ս կարելի է այս երևույթին վերաբերվել հանդուրժողաբար, ինչպե՞ս կարելի է ապահովել համակեցություն նմանատիպ բազմամշակութայնության պայմաններում:

«Բազմամշակութայնություն» եզրը առաջացել է Կանադայում 20-րդ դարի 60-ական թթ.՝ երկրի էթնոմշակութային, ռասայական և կրոնական բազմազանությունը ցույց տալու համար: Բազմամշակութայնության մոդելը ենթադրում է մշակութային բազմազանության տարբեր ձևերի լեգիտիմացիան, որը կարող է արտահայտվել «ինտեգրացիա առանց ասիմիլացիայի» կարգախոսի ներքո: Դա նշանակում է, որ մեկ երկրի շրջանակներում տարբեր էթնոմշակութային, կրոնական, կրթական և այլ առանձնահատկություններ ունեցող խմբերը կարող են հրապարակայնորեն արտահայտել իրենց տարբերություններն ու պահպանել իրենց առանձնահատկությունները (Չ. Թայլոր, Ու. Կիմլիկա): Բազմամշակութայնության տեսաբանների կարծիքով, արևմտաեվրոպական երկրներում հասարակությունն առաջին հերթին անհատներն են, սակայն իրենց առանձնահատկությունը, ինքնատիպությունը արտահայտելու իրավունք ունեն նաև խմբերը: Չ. Թայլորի կարծիքով բազմամշակութայնությունը հանրության պաշտպանությունն է ազատական անհատական ինքնավարության քայքայիչ ազդեցությունից: Դա առաջին հերթին վերաբերում է էթնոկրոնական փոքրամասնություններին, քանի որ նրանք ենթակա չեն լիբերալ ինդիվիդուալիզմին ու պահպանում են կոլեկտիվ կենսակերպը[34]:

Ազատական հոսանքի կարծիքով բազմամշակութայնությունը չի հակասում ազատական և ժողովրդավարական արժեհամակարգերին, քանի որ զարգացած երկրներում (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, եվրոպական շատ երկրներ) էթնոմշակութային

[34] Տե՛ս Taylor C. The Ethics of Authenticity. Cambridge, 1991. p. 82.

խմբերը փորձում են դառնալ հասարակության լիիրավ անդամներ և հավասար իրավունքներ ունենալ կրթության, աշխատանքի և այլ հարցերում: Չնայած ազատականությանը այդ համայքներում կարող են պահպանվել պահպանողական մոտեցումներ կանանց ու երեխաների իրավունքների, սեքսուալ վարքագծի նորմերի, ամուսնության ու ամուսնալուծության հարցերի վերաբերյալ: Այդ մոտեցումներով այդ խմբերը հակադրվում են արևմտյան ազատական արժեհամակարգերին: Այդ կապակցությամբ արևմուտքում ակտիվորեն քննարկվում է «կոլեկտիվ իրավունքների» մասին հարցը և դրանց լեգիտիմացման ձևերը:

Բազմամշակութայնության հարցն այսօր ամենից շատ քննարկվող հարցերից է, քանի որ շոշափում է փոքրամասնության իրավունքները մեծամասնության համեմատությամբ և հակառակը: Շատերը հակադրվում են բազմամշակութայնության քաղաքականությանն այն հիմնավորմամբ, որ այն վնասում է կայունությանը, քանի որ ենթադրում է «էթնիկականության քաղաքականացում», ինչն էլ իր հերթին ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել տարբեր մարդկանց ու խմբերի միջև անտագոնիզմի աճին: Բազմամշակութայնությունը կարող է հանգեցնել հակասությունների ու բախումների, եթե չկան ժողովրդավարական հաստատություններ, չեն պահպանվում տարբեր խմբերի, փոքրամասնությունների իրավունքները և չկա համապատասխան միջավայր միջմշակութային երկխոսության ու հաղորդակցության համար: Բազմամշակութային քաղաքականությունն արդյունավետորեն գործում է հատկապես արևմտյան լիբերալ-ժողովրդավարական հասարակարգերում գործող միջմշակութային երկխոսության պայմաններում, քանի որ այդ հասարակարգերում տարբեր մշակույթներ հանդես են գալիս հավասար իրավունքների դիրքերից, ինչը հնարավորություն է տալիս նրանց հանգիստ երկխոսել, համագործակցել ու ներթափանցել առանց ավելորդ բախումների կամ նեղ ազգայնական ու պահպանողական մոտեցումների:

Ժամանակակից աշխարհում կրոնական գործոնը մեծ դեր է խաղում պետությունների ու մշակույթների փոխահարաբերություններում: Այդ հանգամանքը ստիպում է մեծ դեր հատկացնել կրոնական երկխոսությանը տարբեր մակարդակներում: Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, տարբեր էկումենիկ կազմակերպություններ, իսլամական կոնֆերանսը և տարբեր կրոնական ուղղություններ միավորող

կազմակերպություններ իրենց օրակարգային գլխավոր հարցերի շարքում մշտապես նշում են կրոնական երկխոսության անհրաժեշտությունը ժամանակակից աշխարհում ու ժամանակակից գործընթացներում: Կրոնական երկխոսությունն ու կրոնական բազմախոհությունը նպատակ ունեն նվազեցնել կրոնի օգտագործումը տարբեր սուբյեկտների կողմից քաղաքական ու այլ նպատակներով, ինչպես նաև պահպանել համակեցության նորմերը հասարակությունների ներսում մարդկանց, խմբերի ու այլ սուբյեկտների միջև: Նման մոտեցումն առավել է կարևորվում ինքնության խնդրի նորովի իմաստավորման, ինքնության սահմանների ճշգրտման, ժամանակակից աճող միգրացիայի, մշակույթների փոխներթափանցման ու տարբերությունների նվազեցման, տարատեսակ պատերազմների առկայության ու դրանց վտանգի պայմաններում:

Կրոնական երկխոսությունն ու կրոնական բազմախոհությունը ոչ միշտ են դրական ընկալվում կրոնական ուղղությունների ներկայացուցիչների կողմից, քանի որ նրանց շատերը դրանցում տեսնում են վտանգ սեփական դիրքերը թուլացնելու առումով: Այսպիսի մոտեցումներն առավել վառ են արտահայտվում ավանդական կրոնական ուղղությունների ներկայացուցիչների կողմից դեպի առավել երիտասարդներն ու նոր կրոնական ուղղությունները: Այնուամենայնիվ պետք է նշել, որ կրոնական երխոսությունը նպատակ չունի անմիջապես լուծել կոնֆլիկտները կամ շատ արագ համակեցություն հաստատել տարբեր կրոնական ուղղությունների ներկայացուցիչների միջև, այլ՝ երկարաժամկետ կտրվածքով փոխադարձ վստահություն սերմանել տարբեր կրոնական հայացքներ ունեցող անհատների ու խմբերի միջև: Կրոնական երկխոսությունը պարտադիր չէ, որ լինի կրոնական թեմաների շուրջ, այն կարող է անցկացվել մշակույթների, սոցիալական հարցերի, գլոբալ պրոբլեմների ու այլ խնդիրների շուրջ: Կրոնական երկխոսության կարևոր նախապայմաններից մեկն էլ այն է, որ այն չպետք է լինի պարտադրաբար ու չպետք է տեղի ունենա պետության կամ որևէ պետական մարմնի հովանավորչությամբ, նախաձեռնությամբ կամ աջակցությամբ, քանի որ պետական մարմնի առկայությունն արդեն իսկ վկայում է պարտադրանքի ու ոչ կամավորության մասին:

Հանդուրժողականությունն ընկած է ժամանակակից աշխարհի խաղաղ գոյակցության, բազմամշակութային հանրույթների համերաշխ համագոյակցության,

կրոնական բազմազանության, բազմախոհության ու երկխոսության հիմքում: Ներկա համաշխարհային զարգացման միտումներն աներկբայորեն վկայում են, որ հնարավոր չէ պատկերացնել նման բազմազան մշակութային, կրոնական, էթնիկական, ռասայական համագոյակցություն, եթե չկա փոխադարձ հարգանք ու հանդուրժողական վերաբերմունք այլի նկատմամբ:

ՄԱՍ 2: ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1 Ի՞նչ է հանդուրժողականությունը

«Տարբերությունները հանդուրժողականությունը դարձնում են անհրաժեշտ, իսկ հանդուրժողականությունը դարձնում է տարբերությունները հնարավոր»:

Մ. Վալզեր

Հանդուրժողականության մեկնաբանությունները բավականին տարբեր են և ոչ միանշանակ: Տվյալ հետազոտությանը մասնակցած հարցվողներից շատերի կարծիքով, հանդուրժողականությունը ներդաշնակություն է բազմազանության մեջ, որը ենթադրում է այլ կենսակերպի, վարքագծի, գաղափարների, կարծիքների ու աշխարհայացքի, զգացմունքների ու հավատալիքների հանդեպ հարգալից վերաբերմունք: Այն հասարակական արժեք է, որի էությունը նրանում է, որ մարդը վտանգ չի տեսնում իրենից տարբերվող մարդկանց մեջ: Իսկ խորքային հարցազրույների ընթացքում հարցվողներից մեկն ագամ ձևակերպեց այն որպես «անտարբերություն տարբերությունների նկատմամբ»: Հանդուրժողականությունը ենթադրում է համակեցության կանոններ, որոնք պարտադիր են առողջ հասարակություն կառուցելու համար, որտեղ պահպանվում են Մարդու իրավունքները և սահմանադրական իրավունքները:

Համաձայն որոշ փորձագետների, ինչպես նաև ֆոկուս խմբերից մասնակիցների տեսակետների՝ հանդուրժողականությունը երևույթ է, որը պետք է դիտարկել մեծամասնություն-փոքրամասնություն հարթության մեջ, այն վերաբերմունք է, որ հիմնականում ցուցաբերվում է գերիշխող խմբի կողմից փոքրամասնության կամ մարգինալացված խմբի նկատմամբ, քանի որ հակառակ պարագայում գերիշխողի համար էական չէ մյուսի հանդուրժել կամ չհանդուրժելը, այն ամեն դեպքում գերիշխողն է: Այլ կերպ ասած, հանդուրժողականություն դրսևորելու անհրաժեշտությունը ծագում է այն դեպքում, երբ կա որոշակի սոցիալական խումբ, որի անդամները տարբերվում են դոմինանտ խմբից, և հենց այդ տարբերություններն ընդունելը հանդուրժողականությունը դարձնում են անհրաժեշտ պայման:

Հանդուրժողականության ձևավորման հետ կապված հարցում տեսակետները միանշանակ չէին, ոմանք նշում էին դաստիարակության և սոցիալականացման միջոցով տարիների ընթացքում երեխայի մեջ այն ձևավորելու անհրաժեշտությունը, իսկ մյուսներն էլ գտնում էին, որ դա պետության գործառույթը պետք է լինի, պետք է դրսևորվի քաղաքական կամք հանդուրժողականություն զարգացնելու հետ կապված, գործի հակախտրական օրենք, մշակվեն համապատասխան կրթական ծրագրեր՝ հաստատված ԿԳՆ կողմից: Պետության առաջնային խնդիրներից պետք է լինի այնպիսի պայմաններ, այդ թվում, օրենսդրական դաշտ ստեղծելը, որ հնարավոր դառնա կասեցնել կամ նվազեցնել խտրականության դրսևորումները տվյալ հասարակության մեջ: Այն հասարակություններում, որտեղ օրենքն արդյունավետորեն գործում է և չունի զուտ դեկլարատիվ բնույթ, անկախ սոցիալական դիրքից և ոչ ֆորմալ աջակցության ցանցից, մարդը կարող է պատասխանատվության ենթարկվել իր խտրական վերաբերմունքի համար: Խտրականության ու անհանդուրժողականության գոյության պատճառներից է թույլ պետականությունը, երբ չկա օրենքի գերակայություն: Արժեք պետք է լինի մարդը, այլ ոչ նրա ազգությունը կամ կրոնական պատկանելությունը կամ էլ որևէ այլ հատկանիշ:

Հարցվողների, հատկապես ֆոկուս խմբերում մասնակցածների կարծիքով, թեև սոցիալականացման ու դաստիարակության գործոնը նշանակալի է հանդուրժողականության հարցում, այնուամենայնիվ ծնողները կամ ավագ սերնդի ներկայացուցիչները ևս որոշակի արժեքների ու նորմերի կրողներն են, իսկ դրանք «օդից չեն գալիս», տարբեր գործոնների ազդեցության տակ են ձևավորվում, ներառյալ քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական, կրոնական գործոնները: Դրանք փոխանցվում են դաստիարակության միջոցով կրտսեր սերնդին, սակայն դեռ հարց է, երեխաները դա կվերցնեն, լիրովին կյուրացնեն, կընդունեն, թե՝ ոչ, և այդ դեպքում հանդուրժողականության ձևավորման սուբյեկտի ու մեխանիզմների հետ կապված հարցը շարունակում է բաց մնալ: Այդ առումով, թերևս, կարևոր է հատուկ, նպատակային պետական քաղաքականության առկայությունը:

Այսպիսով, հարցվողների գերակշռող մասը գտնում էին, որ հարկավոր է հանդուրժողականությունը դիտարկել որպես երկկողմանի գործընթաց, ուր մի կողմից

ընտանիքը և սոցիալականացման այլ առաջնային գործակալները կնպաստեն դրա ձևավորմանը երեխայի մեջ, իսկ մյուս կողմից էլ պետական քաղաքականություն մշակողները կնախաձեռնեն գործողություններ՝ ուղղված հանդուրժողականության մշակույթի ձևավորմանը հասարակության մեջ:

Հարցվողների մեջ կային նաև այնպիսիք, ում կարծիքով հանդուրժողականությունը անպայմանորեն դրական կամ հայ հասարակության համար արժեքավոր երևույթ չէ: Մասնավորապես ՀԱԵ հոգևորականների շրջանում որոշ հարցվողների կողմից հնչել են տեսակետներ, որ «հանդուրժողականություն» հասկացությունը պարզապես նորաձև դարձած հասկացություն է, որի նշանակությունը գերագնահատվում է:

«Հանդուրժողականությունը մեր ժողովրդի կյանքում արդեն ծայրահեղության է հասել, և մեր բոլոր աններելի օրինախախտումների ու արատավոր երևույթների գոյության պատճառը հենց դա է: Հատկապես կրոնական դաշտի պարագայում է դա ակնհայտ, երբ խղճի ազատության մասին «կիսատ-պռատ» օրենքը հնարավորություն է տալիս այս փոքրաքանակ ժողովրդի մեջ 64 գրանցված կրոնական կազմակերպություն ունենալու, հանդուրժողականություն է սա, թե անհանդուրժողականություն, դժվար է ասել: Եվ որքան մեր ժողովուրդը ու պետությունը պետք է նման ձևով հանդուրժի՝ բավարարելու եվրոպական կառույցներին և մարդու իրավունքների պաշտպան կառույցներին»: (ՀԱԵ հոգևորական)

Ըստ ՀԱԵ հոգևորականներից հարցվողների գերակշռող մասի՝ քրիստոնեությունն ավելի մեծ արժեք է ձևավորում, քան հանդուրժողականությունը, քանի որ եթե հանդուրժելը նշանակում է ընդունել նույնիսկ նրան, ում չես սիրում ու հասկանում, ում արարքները նույնիսկ քեզ կարող են վտանգավոր թվալ, ապա քրիստոնեությունը սեր է տարածում, ձգտում օգնելու նրան, ով դժվար կացության մեջ է, օգնելու նրան փոխվել:

«Քրիստոնեությունը սիրո ու եղբայրության գաղափարն է քարոզում: Քրիստոնեության մեջ կա կարևոր կանոն՝ «Դիմացինին արա այն, ինչ-որ կանես քո անձին» (Մատթ. 7:12), այսինքն, ի տարբերություն ուղղակի հանդուրժելու, ինչը երբեմն նաև իր մեջ բացասական տարր է պարունակում, քրիստոնեական սերն իսկապես արժեք է, որը պետք է տարածել»: (ՀԱԵ հոգևորական)

Փորձագետներից ոմանք նշում էին, որ դժվար է միանշանակորեն պնդել հանդուրժողականություն ֆենոմենի դրական կամ բացասական լինելը, առավել ևս դրա սահմաններն ուրվագծելը: Եթե փորձում ենք այն մեկնաբանել ընդհանրականության մեջ, առանց մասնավորեցնելու կամ կոնկրետ համատեքստում կիրառելու, դառնում է

շատ հեղհեղուկ, հետևաբար՝ դժվար չափելի: Ցանկացած հասարակությունում, հատկապես փոխակերպվող հասարակություններում, այն դինամիկայի մեջ դժվար չափելի է, նմանատիպ հասկացությունները պետք է կոնկրետ իրավիճակներում ու որոշակի ժամանակահատվածի կտրվածքով նայել: Օրինակ՝ ագրեսիան այնքան բազմակողմանի երևույթ է՝ և հոգեբանական, և սոցիոլոգիական, և մշակութաբանական, և մարդաբանական, որ դարձյալ պետք է խուսափել միանշանակ մեկնաբանություններից կամ հեշտության տարբեր ենթատեքստերում կիրառելուց: Նույնը վերաբերում է հանդուրժողականությանը:

Փորձագետներից մեկն էլ նշել է, որ «հանդուրժողակնություն» հասկացությունն օգտագործում է քննադատական, երբեմն էլ հեգնական իմաստով, քանի որ հայաստանյան իրականության մեջ այն արժեզրկված, որոշ առումով վարկաբեկված հասկացություն է, որը շահարկվում է տարբեր կողմերից՝ թե մեծամասնության, թե փոքրամասնության: Գոյություն ունեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «համակեցությունը», «գիտակցությունը», «բանականությունը», իսկ հանդուրժողականությունը մի քիչ դժվար է ասել, թե ուր է տեղավորվում:

Այնուամենայնիվ, փորձագետների գերակշռող մասը մեկնաբանում էին «հանդուրժողականությունը» որպես կարևոր նախապայման միմյանիցից տարբերվող խմբերի համակեցության համար, բայց միաժամանակ շատերն ավելացնում էին, որ կարևոր է նշել, թե որ համատեքստում է կիրառվում այդ հասկացությունը: Եթե այն դիտարկվում է, օրինակ, մարդու իրավունքների համատեքստում, բնականաբար այդ պարագայում հանդուրժողականությունը բազմազանության նկատմամբ է, այսինքն՝ հանդուրժողականություն ընդհանրապես մարդկանց ու մարդկային տեսակի նկատմամբ, նրանց միջև տարբերությունների նկատմամբ: Բնականաբար այս համատեքստում հանդուրժողականությունը որևէ կերպ չի վերաբերում, օրինակ, հանցագործությունների նկատմամբ հանդուրժող դիրքորոշմանը, այս պարագայում պետք է լինել հակառակը անհանդուրժող: Միջազգային օրենքները, ՀՀ սահմանադրությունը և մարդու իրավունքներին առնչվող փաստաթղթերը, որոնք վավերացվել են ՀՀ կողմից, սահմանում են, որ օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են՝ անկախ սեռից, տարիքից, գույքային վիճակից, կրոնական պատկանելիությունից,

սեռական կողմնորոշումից և այլ հատկանիշներից: Սա առաջնային նախապայմաններից է ժողովրդավարության համար:

2.2 «Իմ տունն իմ ամրոցն է» կամ հանդուրժողականության սահմանները և մակարդակները. հանդուրժողականության, հարմարվողականության և անտարբերության խաչմերուկները

Հանդուրժողականության սահմանների մասին խոսելիս, ծագում են բազմաթիվ հարցեր՝ կապված դրա սահմանումների, համատեքստի, այլ նմանատիպ հասկացությունների հետ շփոթելու կամ մեկը մյուսով փոխարինելու հետ: Հայկական լեզվամտածողության մեջ ինչ-որ բանին դեմ չլինելը կամ դիմանալը նույնացվում է հանդուրժելու հետ, այդ պատճառով շատ կարևոր է, «հանդուրժողականություն» եզրույթը քննարկելիս, որոշակի հստակեցում մտցնել, նշել դրա կիրառման համատեքստը, այլապես ցանկացած երևույթի նկատմամբ վերաբերմունքը, այդ թվում նաև հարմարվողականությունը, կարող է արտահայտվել այս հասկացության միջոցով: Որպես բազմաթիվ օրինակներից մեկը կարելի է մեջբերել հարցվողներից մեկի խոսքը, այն է՝ «ես չեմ հանդուրժում չսափրված անփույթ վարորդներին տրանսպորտում»: Սա պարզ օրինակ է, որ վկայում է «հանդուրժողականություն» եզրույթի լայն իմաստով կիրառման մասին, որը, թերևս, որևէ կերպ հնարավոր չէ կապել բազմազանության, մեծամասնություն-փոքրամասնություն հարթության, քաղաքացիական իրավունքների, առավել ևս հանդուրժողականությանն առնչվող ՅՈՒՆԵՍԿՈ-ի պահանջների հետ:

> *Մարդն ազատ է իր կողմնորոշումներում ու ինքնարտահայտման մեջ, քանի դեռ չի վնասում այլ սոցիալական խմբերի, այլ մարդու, նրա իրավունքներն ու ազատությունները:* (հարցվողի տեսակետ)

Խոսելով բուն «հանդուրժողականություն» եզրույթի սահմանների ու անտարբերության հետ դրա կապի մասին, հարկ է անդրադառնալ մի կարևոր արտահայտության, որն ամենից հաճախ էր հնչում հարցվողների կողմից՝ «իմ տունն իմ ամրոցն է»: Շատերն այսպես էին փորձում մեկնաբանել անտարբերությունը կամ չեզոք դիրքը որևէ փոքրամասնության կամ երևույթի նկատմամբ, որը դուրս է ավանդական կամ ընդունված դոմինանտ պատկերացումներից: Սա որոշ չափով առնչվում է ցածր

իրազեկվածության, ցածր հետաքրքրվածության ու ոչ լայն աշխարհայացքի հետ, քանի որ անհատն իրեն ապահով է զգում իր «խեցու» մեջ, իր սեփական տանիքի տակ, իր անկյունում, իր ընտանիքում, և վախենում է դրանից դուրս գալ և ճանաչել ավելին: Ի հակադրություն դրան, այսպիսի դիքրորոշումը քննադատողները փորձում են բազմազանության մեջ տեսնել դրականը, հարստացնող կամ լրացնող տարրերը, հեռանկարայինն առաջընթացի առումով:

Հարցվողներից շատերը կարևորում էին հանդուրժողականությունը բազմազանության գոյությունն ապահովելու առումով: Նրանք հիմնավորում էին դա նրանով, որ իրարից տարբերվողները միմյանցից սովորելու ու զարգանալու հնարավորություն են ունենում: Այս առումով հատկապես հատկանշական է հարցվողներից մեկի տեսակետը, համաձայն որի «շատ երկար ժամանակ հնարավոր չէ կենսագործել միատարրության, քեզ խիստ նմանների միջավայրում, սկսում ես խեղդվել»: Ըստ իրեն՝ շատ ավելի հարուստ փորձ է, երբ տեսնում ես մարդկանց, ում գուցե բոլորովին չես հասկանում, բայց փորձում ես ճանաչել ու աստիճանաբար բացահայտել մյուսների աշխարհը քեզ համար, հիմքում դնելով հարգանքն այլի նկատմամբ, և, հակառակը, անպայման չի, որ քո տեսակետը բոլորը կիսեն կամ հասկանան:

«Երբ ինձ հետ բոլորը համաձայնում են, ինձ թվում է, թե ես սխալ եմ»:

Օսկար Ուայլդ

Անտարբերությունը հանդուրժողականության համատեքստում քննարկելիս հարցվողների կարծիքները ևս միանշանակ չեն եղել, հիմնականում երկու տիպի իրարամերժ պատասխաններ էին հնչում՝

- որպես ավելի շատ հանդուրժող վերաբերմունքին մոտ դիրքորոշում,
- որպես առավել վտանգավոր բան, քան անհանդուրժողականություն դրսևորելը, քանի որ անտարբերությունը կարող է բերել հասարակական դեգրադացիայի (հետընթացի):

Անտարբերությունը և անհանդուրժողականությունը, որոշ փորձագետների պնդմամբ, տարբեր հասկացություններ են: Դա, փորձագետներից մեկի կարծիքով, որոշ առումով կարելի է համեմատել ստի ու կիսաճշմարտության հետ: Այսինքն «սուտը ծանր բան է, բայց այն արագ բացահայտվող է: Շատ ավելի ծանր կարող է լինել

կիսաճշմարտությունը, որովհետև այն հեշտ չի բացահայտվում, ճշմարտությանը նման է, դրա արագ թափանցման աստիճանը մարդու գիտակցության մեջ զգալիորեն ավելին է: Այդպիսի անտարբերությունը վարակիչ է ու լի պոտենցիալ վտանգներով, այսինքն, հասարակությունը, որը դարձել է անտարբեր, աստիճանաբար կորցնում է իր անպայման բնազդները: Կան պայմանական բնազդներ, որոնք կորցնելը այդքան էլ վտանգավոր չէ, իսկ անպայման բնազդների դեպքում հասարակությունը կորցնում է իր այն ռեֆլեքսները, որոնք ի սկզբանե պետք է իրեն հատուկ լինեն, որպեսզի այն որպես անբողջություն գոյություն ունենա:» Հանդուրժողականությունը կամ անհանդուրժողականությունը որոշակի գործողություններ են, հստակ դիրքորոշում է, իսկ անտարբերությունը անհասկանալի դիրքորոշում է: Պետք է պայքարել այդ անտարբերության դեմ, որովհետև հասարակության զարգացման ճանապարհը դա է՝ անկախ նրանից, թե այդ պայքարը որքան ժամանակ կպահանջի, դժվար, թե հեշտ ընթացք կունենա, թանկ, թե էժան գնով ձեռք կբերվի:

Այնուամենայնիվ, հարցվողների գերակշռող մասի կարծիքով անտարբերությունը համեմատաբար ավելի ընդունելի է, քան ակտիվ, առավել ևս ագրեսիվ հակազդեցությունը կամ անհանդուրժողականությունը: Ագրեսիան կամ ոչ բարյացակամ վերաբերմունքը անհանդուրժողականության հետ կապ ունեցող երևույթներ են, սակայն ոչ նույն իմաստն ունեցող հասկացություններ, չնայած նրան, որ հայաստանյան իրականության մեջ դրանք շատ հաճախ կիրառվում են մեկը մյուսի փոխարեն: Ինչպես նշում էին որոշ փորձագետներ՝ ագրեսիայի դրսևորման և անհանդուրժողականության միջև որոշակի կապ կա, բայց դրանք միանշանակ կարող են դրսևորվել նաև իրարից լրիվ անկախ:

«Օրինակ, Իռլանդիայում հանրային տրանսպորտում մեկը շատ բարձր լսում էր իր էթնիկ երաժշտությունը, մյուսները, կարծես, անհանդուրժողականություն դրսևորեցին, ընդդիմացան, առանց կոպտելու, ուղղակի խնդրելով նրան անջատել երաժշտությունը, բայց ագրեսիվություն ցույց չտվեցին»: (օրինակ հարցվողի սեփական փորձից)

Հանդուրժողականությունը կա այնտեղ, ուր առկա է կոնֆլիկտ, բայց ուր չկա ագրեսիա, պարզապես «թույլը» հարմարվում է, իսկ «ուժեղը»՝ հանդուրժում: Այսպիսի մեկնաբանման կողմնակից որոշ հարցվողներ նույնացնում էին հանդուրժողականությունը և անտարբերությունը՝ համարելով, որ դոմինանտ խմբի

կողմից մյուսի գոյության իրավունքի ընդունումը, որն արտահայտվում է վերջինիս նկատմամբ չեզոք դիրք ունենալու մեջ, կարող է համարվել հանդուրժողականության դրսևորում: Կրոնական որոշ կազմակերպություններից հարցվողները սրան հավելում էին նաև այն, որ անհանդուրժողականությունը նշանակում է գնալ ընդդեմ ինչ-որ երևույթի կամ հատկանիշը կրողի, այսինքն՝ այն բացասական երանգ ունի ու ենթադրում է պայքար, ոչնչացում, մինչդեռ հանդուրժողականությունը նշանակում է հանուն ինչ-որ մի բանի՝ խաղաղ համակեցության, ազգի միասնականության, հայրենակիցների արտահոսքի կասեցման, հասարակության հարստացման և այլն: Ավելի նախընտրելի է կոնֆլիկտի լուծման այս տարբերակը, հատկապես եթե խոսքը նույն ազգի ներկայացուցիչների, դրանում տարբեր սոցիալական խմբերի մասին է:

Հարցվողներից հոգեբանների կարծիքով՝ անտարբերությունը ինչ-որ չափով կարող է նույնիսկ դրական լինել անձի պաշտպանական մեխանիզմը ամբողջական պահպանելու առումով, իսկ հանդուրժողականությունը կարելի է մեկնաբանել որպես պրագմատիկ գործիք հասարակական համակեցության ապահովման համար: Այնուամենայնիվ, շատ նուրբ է սահմանը հանդուրժողականության և անտարբերության ու անհանդուրժողականության և անտարբերության միջև: Հանդուրժողականությունը զարգացնելը հասարակությունում պահանջում է որոշակի նախադրյալների առկայություն: Հասարակությունն ընթանում է զարգացման իր օրինաչափություններով, և հանդուրժողականության տակ թաքնված անտարբերությունը կարող է որոշակի ժամանակ հետո փոխվել, եթե լինեն համապատասխան մշակութային, սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ նախադրյալներ:

Հնարավոր է, որ անտարբերությամբ է արտահայտվում թաքնված անորոշությունը: (հոգեբանների ֆոկուս խմբից)

Ցանկացած վարքի պարագայում շատ մեծ դեր ունեն սոցիալական սպասումները, ինչպես նաև վարքի մոդելները, այսինքն՝ մոդելներ, որոնք նա տեսել ու հասկացել է, թե այդ դեպքում մարդկանց հետ ինչ է լինում, ինչ հետևանքներ են լինում հանդուրժելուց կամ անհանդուրժողականություն դրսևորելուց: Այսինքն՝ ուղղակի որոշակի հասկացություններ հասարակության մեջ շրջանառելը բավարար չէ, դրանք պետք է կյանքի փորձի մեջ ստուգվեն, փորձարկվեն, մարդիկ տեսնեն, թե որքանով է դա աշխատում: Կարևոր է այն, թե մարդն ինչ փորձ ունի այդ առումով, ինչպիսին են եղել

հետևանքներն իր համար, երբ ինքը որևէ իրավիճակում դրսևորել է հանդուրժողականություն կամ, հակառակը: Հետազոտության շրջանակներում հնչել են տարբեր օրինակներ՝ կապված հանդուրժող կամ անհանդուրժող լինելու հետևանքների առումով սեփական փորձի հետ:

«Թեմի առաջնորդ նշանակվելու օրից ես կապ հաստատեցի Հայ Ավետարանական և Հայ Կաթոլիկե եկեղեցիների առաջնորդների հետ և նրանց հրավիրեցի իմ պատարագին, իսկ ես իրենց մոտ հոգևոր թեմաներով հանդիպումների էի գնում նրանց հավաքատեղի: Ավետարանականները դա օգտագործեցին «մարդորսությունը» ուժեղացնելու համար, այսինքն՝ իմ հանդուրժողականությունն օգտագործեցին չար միտումներով, մինչդեռ Հայ Կաթոլիկների հետ նման խնդիրներ չունեցանք»: (ՀԱԵ հոգևորական)

«Տեղացի և արտասահմանցի ավետարանականների նախաձեռնությամբ և պետական աջակցությամբ մենք կացարաններ կառուցեցինք անօթևանների համար: Ի զարմանս ինձ, բացման ժամանակ ես երրորդն էի ելույթ ունենում, թեև դա մեր նախաձեռնությունն էր, ինձանից առաջ խոսեցին սրբազանը և քաղաքապետը, ով մեզ շնորհակալական խոսք ուղղեց: Սա իրավիճակ է, որում առկա է հանդուրժողականություն: Քրիստոնեությունը կենսակերպ է: Իրար դեմ գործելն ինքնասպանության է նման: Մենք իրար համար պետք է գործենք, ոչ թե իրար դեմ»: (Ավետարանական եկեղեցու հոգևորական)

Այսպիսով, եթե անտարբերությունը դիտում ենք հանդուրժողականության ու անհանդուրժողականության միջակայքում, ապա դա ավելի վտանգավոր է, որովհետև բերում է անձի անորոշությանը և ինքը չի հասկանում լինել հանդուրժող, թե՝ ոչ, հենց այստեղ է հաճախ փակուղին: Օրինակ՝ երևույթը կա, մենք դրա նկատմամբ, կարծես, անտարբեր ենք, քանի դեռ դա ուղղակիորեն չի առնչվում մեզ կամ մեր մտերիմներին, և խնդիրը հենց այստեղ է, թե ինչո՞ւ այն ժամանակ անհանդուրժող չէինք, իսկ հիմա անհանդուժող ենք:

Հետազոտությանը մասնակցած հոգեբանների կարծիքով, անտարբերության, հարմարվողականության և հանդուրժել կամ չհանդուրժելու հիմքում, ըստ էության, ընկած է մարդու, սոցիալական խմբի և, առհասարակ, հասարակության բաց կամ փակ լինելը, քանի որ կարելի է ասել, որ փակ լինելն արդեն իսկ անհանդուրժողականություն է, իսկ բաց լինելը՝ հանդուրժողականություն, իսկ այս միջակայքում կա նաև սելեկցիա, կապված նրա հետ, թե որն ես թողնում, որը չես թողնում, և խնդիրը հենց տվյալ հասարակության մեջ վարքի տրված ձևերն են, որով անդամներն առաջնորդվում են: Հենց դա է պակասում, թե չէ երկուսն էլ կարևոր են և ֆունկցիոնալ տեսանկյունից պետք են և հասարակության, և

անձի համար, քանի որ մի ձևով դու պաշտպանվում ես, կայուն ես մնում, մյուս ձևով դու զարգանում ես: Անհանդուրժողականությունը, առհասարակ, մի պատճառով կամ մի գործոնով չի պայմանավորվում, դա տարբեր դեպքերում գործոնների տարբեր կոմբինացիաների ազդեցության արդյունք է:

2.3 Անհանդուրժողականության դրսևորման տարածված ձևերը և դրանց վրա ազդող գործոնները Հայաստանում

Հարցվողներից շատերը, հատկապես ֆոկուս խմբի մասնակիցները, գտնում էին, որ անհանդուրժողականության հիմքում ընկած գործոններից մեկը փոքրամասնության կամ անհանդուրժողականության ենթարկվող խմբի կողմից ակտիվ, դեմոնստրատիվ գործողություններն են: Օրինակ, սեռական փոքրամասնությունների դեպքում նշում էին, որ թող ի ցույց բոլորի չլինի վարքը կամ տեսքը, ԼԳԵՓ անհատն իր սենյակում, իր տան մեջ ինչ ուզում է թող անի, բայց հատուկ չցուցադրի իր սեռական կողմնորոշվածությունը, ինչպես տարասեռականները չեն ցուցադրում իրենցը, կրոնական փոքրամասնության դեպքում ասում էին, թող չքարոզի, թող չփորձի «հարկադրաբար» ազդել մարդկանց հավատալիքների ու արժեքների վրա, իր համայնքում ինչ ուզում է, թող անի: Այսինքն, ըստ հարցվողների, կա որոշակի կապ անհանդուրժողականության ձևավորման և այդ նույն զոհի կամ զոհ հանդիսացող խմբի վարքագծի միջև:

Փորձագետներից մի քանիսի կարծիքով, կարելի է խոսել անհանդուրժողակնության 3 հիմնական մակարդակների մասին մեր իրականության մեջ՝

1. Անհատական, երբ շարքային տարակարծությունը կամ վեճը կարող է վերածվել թշնամանքի կամ անհանդուրժողականության, կամ էլ երբ սեփական բացասական փորձը փոքրամասնության որևէ ներկայացուցչի հետ շփումից կարող է դառնալ ամբողջ այդ խմբի նկատմամբ անհանդուրժողականության հիմք,
2. Խմբային-համայնքային, որն առանձին խմբերի կողմից մյուսներին չընդունելու ու սեփական արժեքները դոմինանտ դարձնելու գործընթացն է, ինչին զումարվում է նաև բանավեճի մշակույթի բացակայությունը խմբերում,
3. Պետական կամ լայն սոցիալ-քաղաքական մակարդակ, որի հիմքում հաճախ ընկած են արմատացած կարծրատիպերը և համատարած ցածր իրազեկվածությունը այն

երևույթի վերաբերյալ, որը դուրս է մնում ընդունված կամ գերիշխող նորմատիվ պարադիգմից, մի կողմից, և նման իրավիճակը շտկելու առումով թույլ քաղաքական կամքը ու օրենսդրական դաշտի թերացումները, մյուս կողմից:

Հայաստանում անհանդուրժողականության հիմքերի վերաբերյալ հարցի հետ կապված տարբեր պատասխաններ էին հանդիպում, սակայն հատկապես հաճախ շեշտադրվում էին պատմամշակութային, քաղաքական, սոցիալ-տնեսական գործոնները, այդ թվում նաև համայնքի կամ հանրային կարծիքի դերը:

Պատմական-մշակութային հիմքեր

Հարվցողների գերակշռող մասը նշում էին, որ անհանդուրժողականությունը մեր հասարակության մեջ որոշակի պատմական հիմքեր ունի, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Եթե անդրադառնանք հայերի պատմությանը վերջին հարյուրամյակների կտրվածքով, ապա հարկ է նշել, որ հայերը մի քանի հարյուրամյակների ընթացքում Օսմանյան Թուրքիայում և Պարսկաստանում կրոնական համայնքներ էին, իսկ իսլամի պատկերացումների համաձայն, կրոնը և ազգը միահյուսված էին: Հայ հոգևորականներն այդ երկրների «չինովնիկներն» էին, պաշտոն ունեցողները, որոնք ունեին նաև աշխարհիկ իշխանություն՝ դատական որոշակի գործընթացներ համայնքի մեջ, կրթական ոլորտում որոշակի ազատություն, ունեին ժառանգավորաց դպրոցներ եկեղեցու կողմից, որը ճանաչվում էր պետության կողմից, այսինքն այդ դպրոցների տված կրթության վկայականը ճանաչվում էր պետության կողմից, լուծում էին ժառանգության ու սեփականության, ամուսնության ու հատկապես ամուսնալուծության հետ կապված հարցեր, որոշ դեպքերում նաև բանկային համակարգի դեր էին կատարում և միահյուսված էր միջազգային առևտրական ցանցերին: Այսօրվա իրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե նույնը հիմա է տեղի ունենում, որոշ առումով վերականգնվում է ՀԱԵ ունեցած իշխանությունը և արտոնյալ վիճակը, և դրա միակ բացատրությունը ներկայացվում է ազգային անվտանգության և ազգի ինքնության պահպանման խնդիրները լուծելու քողի տակ: Հարցվողներից, հատկապես փորձագետներից, շատերի կարծիքով մեր երկրում պետության ու եկեղեցու միջև սերտաճած հարաբերություններ են, ինչն արտահայտվում է նաև ազգային օրենքներում, և այդ սերտաճումն ու ՀԱԵ մենաշնորհային

կարգավիճակը հիմնականում դրանով է հիմնավորում կղերական այդ համակարգը: Այդ տեսակետին համաձայն են նաև կրոնական փոքրամասնությունները ՀՀում: Խորքային հարցազրույցներից մեկի ընթացքում կրոնական փոքրամասնության ներկայացուցիչը նշեց, որ իրենք համաձայն են, որ ՀԱԵ պետք է ունենա որոշակի «առանձնաշնորհում», բայց ոչ մենաշնորհային կարգավիճակ, երբ իրեն տրվում են այդքան լծակներ, իսկ մյուսները պարբերաբար խտրականության զոհ են դառնում:

Փորձագետներից մեկի կարծիքով, անհանդուրժողականության հիմքերը առաջին հերթին պատմական են, որովհետև վաղ շրջանից սկսած անհանդուրժողականությունը Հայաստանում կարծես թե դարձել էր հիվանդություն: Օրինակ, Վարդանանց պատերազմը, որը եղբայրասպան պատերազմ էր, կամ զրադաշտական ու քրիստոնյա հայերի միջև շարունակական քաղաքացիական պատերամները, այսինքն, մենք տեսնում ենք, որ հենց սկզբից բարդ կրոնական իրադրությունը Հայաստանում բերել է այն բանի, որ Հայաստանը վարակվել է անհանդուրժողականությամբ: Մեկ այլ օրինակ է, երբ Դվինի II ժողովում միաբնակությունը ընտրվում է որպես քրիստոնեության նախապատվություն, ինչը հարված էր, որովհետև դա միանգամից քրիստոնյաներին բաժանեց երկու խմբի: Ինչպես ասվում է մի հայկական պատմական աղբյուրում, մի մասը, ովքեր այդ եկեղեցական ժողովում հրաժարվում են Գրիգոր Լուսավորչի ժառանգությունից, ընտրում են միանգամայն նոր ուղղություն, այսինքն մենք կրկին տեսնում ենք, որ դարձյալ արհեստականորեն առաջանում է պառակտում: 1814 թ. ամերիկյան միսիոներները գործունեություն են ծավալում Հայաստանում: Ցանկացած մեկը կարող է ասել, որ այդ մարդիկ, դա իրենց սկզբունքն է հանդիսանում, չէին պատրաստվում դավանափոխություն անել, իրենց գործը միսիոներական էր: Դա նշանակում էր, որ իրենք ոչ միայն ավետարաններ էին բաժանում, այլև ֆիզիկայի, մաթեմատիկայի գրքեր, սակայն այդ մարդկանց ներկայությունը հայկական ամիրայական դասի վրա բացասական ազդեցություն էր գործում: Ինչո՞ւ, որովհետև իրենք իրենց հետ բերում էին ամերիկյան գաղափարախոսություններ, ազատականության գաղափարներ: Դա դարձավ անհանդուրժողականության հիմք, և Պոլսի պատրիարքը 7 հազար հոգու նզովեց, դուրս արեց եկեղեցուց, մինչդեռ եկեղեցին այդ ժամանակ շատ կարևոր դեր էր կատարում, և մարդիկ ստիպված էին ընտրություն կատարել, շատ դեպքերում հարկադրված էին խնդրել, որ իրենց թույլտվություն տան

եկեղեցում կարևոր արարողություն իրականացնելու համար (ծնունդի, մահվան, մկրտության և այլ առիթներով): Այսինքն այդ պրոցեսները ոչ թե արտաքին (էնդոգեն) ազդեցություն են ունենում, այլ ներքին: Փաստորեն ակնհայտ է, որ ՀԱԵ այնպես արեց, ար այդ մարդիկ մեկուսանան: Այդ ժամանակաշրջանում ամիրայական իշխանությունը հարցականի տակ դրվեց, իսկ ամիրաները ղեկավարում էին ողջ հայ ժողովրդին, դա շատ ազդեցիկ իշխանություն էր: Պատմության այս բոլոր օրինակները գալիս են ապացուցելու, որ մենք գործ ունենք այնպիսի մի իրողության հետ, որը ծնում էր անհանդուրժողականություն:

Այսպիսով, Հայաստանում անհանդուրժողականությունը, մի շարք հիմքերից բացի, ունի պատմական ակունքներ: Այսինքն՝ հստակորեն իրար հետ են համադրվել ազգ, համայնք ու կրոն հասկացությունները, նույնիսկ այդ պատմական շրջանում, կարելի է ասել, նույնացվել են: Այդ պատճառով է, որ ՀԱԵ հաճախ է հղում անում նրան, որ հայկական ինքնության պահապանն է, դրա անկյունաքարն է, և դա դարերով այդպես է եղել:

Քաղաքական գործոնը

Անհանդուրժողականության ակնունքներից մեկը պահպանողականությունն է, որպես բնական ֆենոմեն, և դա չի վերաբերում միայն հայերին: Յուրաքանչյուր հասարակություն, սովորելով որոշակի ստատուս քվո վիճակի, հարցականներ ու վախեր է ունենում փոփոխությունների նկատմամբ: Երբ ինչ-որ մի բան ներխուժում է նրա կյանք, և դա նոր է, խախտում է իր անդորրը, իր պատմական արժեքային ստատուս քվոն, ինքն իրեն շատ վտանգված է զգում, որոհետև դրա հաջորդ քայլը չգիտի, այդ անորոշությունը իրեն թույլ չի տալիս ընդունել նորը, այսինքն՝ ահանդուրժողականության արմատների մեջ պահպանողական տարրը կա, երբ հասարակությունն առաջնորդվում է այն գաղափարով, որ այն, ինչին սովոր է, պիտի գոյություն ունենա, իսկ այն, ինչը նոր է ու անհասկանալի, խորթ է ու հարիր չէ: Բայց նաև մյուս կողմից այս ամենը խրախուսվում է այն շրջանակների կողմից, որոնք ևս իրենց իշխանության կայունությամբ են չափազանց հետաքրքրված, և իրենք այդ իշխանությունը ունեն առկա իրողությունների պայմաններում: Այդ առկա իրողություններն իրենցից ենթադրում են արժեքային համակարգի այն հատվածն

ընդունելը, որն իրենց ձեռնտու է, և ոչ ձեռնտուն չընդունելը: Օրինակ, փորձագետներից մեկի կարծիքը մեջբերելով, դա նման է նրան, որ ՀՀ նախագահը որոշ դեպքերում անհանդուրժողականությունը մեկնաբանելիս, ասում էր «մեր հոգեկերտվածքն ուրիշ է, եվրոպացիներինը՝ ուրիշ, նրանք մեզ չեն հասկանա»: Այսինքն՝ դա թաքնված քարոզչություն է, որը շատ արագ վերցնում են հատկապես պահպանողականները և առաջնորդվում դրանով, ստեղծելով անհանդուրժողականության մթնոլորտ:

Եկեղեցին ինքնին պահպանողական ինստիտուտ է և նույնպես չի ցանկանում իր ազդեցության ոլորտների կրճատում, ըստ որում ոչ միայն սոցիալական ստրադիֆիկացիոն սանդղակում իր ունեցած դերի իմաստով, այլև հոտի, ընդհանրապես հավատավորների բանակի առումով, այդ պատճառով կրոնական դաշտում անհանդուրժողականությունը տեսանելի է հատկապես ոչ ավանդական կրոնական հոսանքների նկատմամբ: Բացի դրանից, վերջին տարիներին, հարցվողների գերակշռող մասի կարծիքով, նկատելի է որոշակի քաղաքականություն կամ ռազմավարություն, ուղղված արդեն իսկ որոշ առումով մենաշնորհային կարգավիճակ ունեցող ՀԱԵ դերի ու ազդեցիկության մեծացմանը, որը զուգահեռաբար ենթադրում է այլ կրոնական կազմակերպությունների դեմ պայքարը և կրոնական անհանդուրժողականության խորացումը: Մասնավորապես, ինչպես նշում էին փորձագետները, դրա մասին է վկայում դպրոցում ՀԱԵ պատմություն առարկայի դասավանդումը, որն ուղեկցվում է նաև ՀԱԵ հոգևորականների կողմից առարկան դասավանդող ուսուցիչների ընտրությամբ ու վերահսկողությամբ: Այսինքն, սա մի դաշտ է, ուր ակնհայտորեն կա պետության ու եկեղեցու միջև հարաբերությունների մերձեցում կամ սերտաճում: Բացի դրանից, հարցվողների գերակշռող մասը նշեցին, որ այսպիսի մոտեցումը կրոնի դասավանդման հարցին ավելի է խորացնում կրոնական անհանդուրժողականությունը, քանի որ երեխաների չեն ներկայացվում այլընտրանքները՝ գոյություն ունեցող այլ կրոնական ուսմունքները և դրանց պատմությունը: Պետության, հատկապես իշխող էլիտայի ու եկեղեցական բարձրաստիճան հոգևորականների ինտենսիվ համագործակցության մեկ այլ վառ օրինակ է կաթողիկոսի ներկայությունը բոլոր տոնական միջոցառումներին կամ որևէ շինության, այգու կամ մեկ այլ վայրի բացման արարողություններին, և, հակառակը, բացակայությունը այն իրադարձություններում, ուր ժողովուրդը իսկապես հոգևորականի խոսքի կարիքն ունի (օրինակ, բազմահազար

հանրահավաքները, քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները, բնապահպանների ակցիաները, սոցիալական տարբեր շարժումները): Այսօր հայկական օրացույցը լի է ոչ միայն եկեղեցական տոներով, այլև դրանց հաջորդող ոչ աշխատանքային օրերով, երբ պետական մակարդակի վրա է որոշվում, թե երբ մարդիկ պետք է գնան իրենց հանգուցյալ բարեկամի գերեզման: Հարցվողներից մեկը նույնիսկ այս առիթով նշեց, որ «հավանաբար մեր քաղաքական գործիչների համար մահն ավելի մեծ արժեք ունի, քան կյանքը, քանի որ ձմեռվա անգամ ամենաանանցանելի ճանապարհների ու բարդ եղանակային պայմանների դեպքում ոչ աշխատանքային օր չի հայտարարվում, և մարդիկ պետք է ամեն գնով, այդ թվում նաև ավտովթարների և այլ պատահարների, հասնեն աշխատավայր, մինչդեռ եկեղեցական տոներին հաջորդող երկուշաբթիները բոլոր դեպքերում պետք է հայտարարվեն ոչ աշխատանքային, և հետագայում որևէ օր լրացվեն»: Բացի վերոհիշյալ օրինակներից, մեր պետության ու ՀԱԵ սերտաճման մասին են վկայում ցանկացած երևույթի մասին երու այդ խոշոր ինստիտուտների առաջնորդների տեսակետների ու հայտարարությունների գրեթե նույն բովանդակությունն ունենալը, ինչպես նաև հանրային հեռուստաընկերությամբ ավելի ու ավելի հաճախակի ՀԱԵ վերաբերյալ տեղեկատվության լուսաբանումը, անգամ նորությունների հաղորդումը կարող է սկսվել եկեղեցական այդ օրվա տոնի հետ կապված լուրով:

Ազգային ու կրոնական անհանդուրժողականության մեջ զգալի է ՀԱԵ դերը, ըստ փորձագետներից մի քանիսի, քանի որ, օրինակ, 2007 թ. մյուռոնօրհնության ժամանակ կաթողիկոսը հայտարարեց, որ միայն մյուռոնով օծված քրիստոնյան է հայը, այսինքն տվեց հայի սահմանումը: Դրանից արդեն բխում են որոշ հետևանքներ՝ կապված անհանդուրժողականության հետ: Շարքային եկեղեցականները կամ միջին եկեղեցականները դիտարկում են, որ մնացած ողջ սեգմենտը հայ չեն, առավել առաջադեմ կամ իրենց ճկուն համարող հոգևորականներ գտնում են, որ դա ժամանակավոր երևույթ է ու իրենք մոլորվածներն են, մեր եղբայրներն են, որոնց մենք Մայր եկեղեցու գիրկն ենք բերելու, բայց ամեն դեպքում դրա համար պետք է պայքարել: Փաստորեն այստեղ հստակորեն եկեղեցու մենաշնորհի հարց է դրված, և, իհարկե, առկա է սերտաճումը պետականության հետ:

Այսպիսով, ստեղծված իրավիճակը վկայում է կրոնական և այլ ոլորտներում (ազգային, սեռական կողմնորոշվածության) անհանդուրժողականության հիմքում նաև քաղաքական գործոնի առկայության, հակախտրական հստակ օրենսդրության բացակայության, ինչպես նաև որոշ դեպքերում եկեղեցին ու պահպանողական գաղափարներն ընդդեմ ազատական կամ ոչ ավանդական գաղափարների ու խմբերի դեմ որպես գործիք օգտագործելու մասին:

Սոցիալ-տնտեսական գործոնը

Վերոհիշյալ իրավիճակը և դրանում հասարակության որոշ շերտերի պատկերացումները այս կամ այն երևույթի մասին խեղաթյուրելու դյուրինությունը, իրենց հերթին, պայմանավորված են նաև սոցիալ-տնտեսական կարգավիճակով:

Ֆոկուս խմբերից մեկի մասնակիցները նշեցին, որ «դժվար է մտածել հանդուրժող միջավայր ձևավորելու, մարդու իրավունքների հետ կապված արժեքներ տարածելու մասին, քանի դեռ հայաստանցիները ծռված երթևկում են մայրաքաղաքի երթուղային տաքսիներում»: Քանի դեռ հայաստանցու համար գերխնդիրն օրվա հաց վաստակելն է ու ավել կոպեկ (տվյալ դեպքում տաքսի նստելու կամ առավել ևս սեփական մեքենան ունենալու առումով) չծախսելն է, այսինքն՝ քանի դեռ աղքատության մասշտաբները մտահոգիչ են, իսկ մարդիկ էլ իրենց խեցուց դուրս գալ չեն ցանկանում, մտածելով միայն սեփական բարօրության մասին, դեռևս անիրատեսական է թվում հանդուրժողականության կամ նմանատիպ արժեքների համատարած ձևավորումը Հայաստանում:

Փորձագետներից ոմանք նշում էին, որ անհանդուրժողականության հիմքում քաղաքական գործոնին զուգահեռ (ազգայանականություն, ազգային գաղափարախոսություն, որը կոնկրետ դրսևորումներ ու նպատակներ ունի) գոյություն ունեն նաև այնպիսի օբեկտիվ հանգամանքեր, ինչպիսիք են մեր հասարակության որպես սոցիալական համակարգ թույլ զարգացած լինելը, մեր պետության տնտեսապես թույլ և ոչ զարգացած լինելը, փաստացի պատերզմական իրավիճակում գտնվելը, որոնք հանրության ուշադրությունը ֆիքսում են ազգի անվտանգության գաղափարի վրա և այն, ինչը կարող է ընկալվել որպես վտանգ մեր պաշտպանունակությունը ու կայունությանը, կարող է անհանդուրժողականության հիմք դառնալ: Բացի դրանից, սոցիալական նորմերի

տարածման ու կրթության պատասխանատու սոցիալական ինստիտուտները բավականին միակողմանի են մոտենում սերնդի կրթման հարցին: Փորձագետներից մեկի կարծիքով, հենց դա, այսինքն՝ աղքատիկ ու այլընտրանքներ, բազմազանություն չճանաչող արժեհամակարգային կրթությունը ևս կարող է անհանդուրժողականության նախադրյալ հանդիսանալ:

Հասարակական կարծիքի ու համայնքի դերը. Մեծամասնության կողքին, թե սեփական հայացքների ու զգացմունքների հետ ներդաշնակության մեջ?

Հայաստանում այսօր լայն տարածում է գտել պսևդոազգայնականությունը, ուր կրոնական և ազգային պատկանելիությունները նույնացվում են: Մարդիկ անհանդուրժող են տարբեր կրոնական հայացքներ ունեցողների նկատմամբ ոչ միայն այն պատճառով, որ նրանց հայացքները իրենց համար սխալ են կրոնի տեսանկյունից, այլ որովհետև, ըստ իրենց պատկերացման, այդ հայացքները դավաճանում են ազգային կրոնաէթնիկությունը և խարխլում են ազգային միասնությունը: Այսինքն՝ այլ կրոնական հայացքների գոյությունը մեր երկրում ընդունելը, այլ կրոնական հոսանքների գործունեությունը հանդուրժելը տվյալ դեպքում մեկնաբանվում է որպես ազգի անվտանգության սպառնալիք կամ դավաճանություն:

Հարցվողներից շատերի կարծիքով անհանդուրժողականության հիմքում ընկած է նաև բազմամշակութային շփման ու համակեցության փորձի աղքատությունը: Դա, կարծես, որոշ չափով բնորոշ է հիմնականում մոնոէթնիկ հասարակություններին, երբ պարզապես սովոր չեն հանդուրժողականությանը և բազմազանությանը: Հայաստանում խորհրդային ժամանակներից ի վեր հիմնականում միատարրություն էր, և դա է պատճառներից մեկը, որ Հայաստանը չի դիտարկել ազգային ժողովում ազգային փոքրամասնության ներկայացված լինելը: Աշխարհի շատ երկրներում դա տարածված պրակտիկա է, իսկ Հայաստանում չկա նման բան և նույնիսկ արդիական էլ չի համարվում: Հայաստանի մոնոէթնիկությունը հանգեցնում է մշակութային աղետի, երբ մենք փակվում ենք ու չենք ուզում շփվել այլազգիների, այլ մշակույթների հետ: Ցանկացած երևույթ, որ ավանդականից, լայնորեն ընդունվածից, հետերոնորմատիվ պարադիգմից դուրս է, ընկալվում է որպես վտանգ կամ սպառնալիք, ինչը առաջացնում է հասարակության մեջ դոմինանտ մշակույթի կրողների կողմից անհանդուրժողականություն:

Երկար տարիներ որպես կոլեկտիվիստիկ հասարակություն ձևավորվելը և ինդիվիդուալիզմը չկարևորելը հանգեցրել է նրան, որ մեծամասնության կարծիքը, որը հաճախ անվանվում է հասարակական կարծիք, դառնում է դետերմինանտ կամ միակ ընդունելի եղանակ այս կամ այն հասարակական ֆենոմոնը մեկնաբանելու համար, և առանձին անհատներ, անգամ վստահ չլինելով այդ տեսակետի ճշմարտացիության մեջ, ավելի շատ նախընտրում են միանալ մեծամասնությանը, համարելով դա առավել ապահով և հուսալի քայլ: Հասարակական կարծիքը, որը հասարակության գործառնման և սոցիալական ֆենոմենների նկատմամբ ձևավորված վերաբերմունքի մասին հարաբերականորեն կայուն գնահատականների համակարգն է, դրանց նկատմամբ հանրության ինտելեկտուալ ռեակցիան, հայկական իրականության մեջ բավական ազդեցիկ գործիք է, քանի որ այսպիսի միատարր ու անհատականացումը չխրախուսող հասարակության մեջ ձևավորված անձանց համար խիստ կարևոր է, թե ինչ են իր մասին մտածում մյուսները, և խիստ թույլ է զարգացած քննադատական մտածողությունը կամ բանավիճելու ու սեփական տեսակետը հիմնավորելու հմտությունը: Այսինքն՝ ընդհանուրի արժեքներից, գաղափարներից շեղումը բերում է այնպիսի վերաբերմունքի, երբ մարդն իրեն սկսում է օտար զգալ յուրայինների մեջ: Անգամ նրանցից շատերը, ովքեր չեն կիսում իրենց մտքերը և զգացմունքները գերիշխող մեծամասնության հետ, հաճախ ժամանակի ընթացքում սկսում են ճնշել իրենց մեջ սեփական տեսակետը, սկզբունքները, զգացմուքները կոնկրետ երևույթի հետ կապված, քանի որ տարբերվելով մյուսներից, որպես կանոն, արտամղվում են, մնում չհասկացված, արդյունքում սկսում են կասկածել, որ գուցե այն, ինչ կարծում է մեծամասնությունը, դա է ճիշտը, եթե այդքան մարդիկ հավատում են դրան, ապա գուցե պետք է ընդունել:

«Համայնքն այդպես է կամենում: Համայնքը զորավոր է»:
«Կտոր մը երկինք» ֆիլմից

Հետազոտությանը մասնակցած փորձագետներից մեկը նշեց, որ մեզանում առողջ, օբյեկտիվ քննադատական մտածողությունը զարգացած չի անգամ գիտական շրջանակներում, երբ ավագ գործընկերոջ տեսակետը դառնում է միակ էտալոնը, որը չի կարող մեկ ուրիշի, առավել ևս սկսնակի, կողմից ենթարկվել քննադատության: Չկա ձգտում նորը ճանաչելու, անհրաժեշտության դեպքում սեփականը վերանայելու, մենք կարծես պահպանողական ենք անգամ գիտական բացահայտումների կամ նոր

դիսկուրսների ձևավորման համար: Այս պարագայում, կարծես, ստացվում է, որ անհանդուրժողականության զոհ կամ փոքրամասնություն են նրանք, ովքեր այլախոհ են, ունեն քննադատական մտածողություն և լայն աշխարհայացք: Ինչպես նշում էր խորքային հարցազրույցներից մեկի մասնակիցը, «*հանդուրժողականությունը սերտորեն կապված է նաև մարդու մտքի ազատության հետ, ինչքան կաղապարներից ազատ է միտքը, այնքան մարդն ավելի հանդուրժող է*»:

Բացի վերոնշյալ գործոններից, Հայաստանում անհանդուրժողականության հիմքում ընկած գործոններից են նաև հանրային ցածր իրազեկվածությունը, կարծրատիպերն ու միֆերը, իռացիոնալ մտքերը ու չհիմնավորված վախերը, որոնք դրսևորվում են, մասնավորապես, դոմինանտից տարբերվողին չընդունելու և հեռացնել, մեկուսացնել ցանկանալու ձևով:

Օրինակ, ինձ մի օր մոտեցել էր մի մայրիկ, և ասել, որ լսել է, թե հաշմանդամություն ունեցող երեխաներին պետք է բերեն ընդհանուր դասարան, ուր սովորում է նաև իր երեխան, իսկ ինքը չի պատկերացնում, որ իր երեխան ամեն օր պետք է գա ու տեսնի այդ հաշմանդամին, դա սթրես է իր երեխայի համար: Փաստորեն, եթե անգամ հաշմանդամության դեպքում կա այսպիսի դիրքորոշում, ապա ինչ վերաբերմունք կլինի ՄԻԱՎ ունեցողի նկատմամբ, երբ հասարակությունում շատերն անտեղյակ են այդ հիվանդությունից և դրանով վարակվելու ուղիներից: (օրինակ հարցվողի սեփական փորձից)

Սա ոչ միայն կրթության ու իրազեկվածության, այլև առողջ բանականության խնդիր է: Եթե գիտես, որ մարդը վարակիչ չէ, ինչու չպետք է թույլ տաս, որ երեխան շփվի նրա հետ, բայց ծնողներ կան որոնց այդ բնազդը, իռացիոնալն այքան ուժեղ է, որ նրանք չեն ցանկանում նույնիսկ նույն բակում տեսնել այդ երեխաներին իրենց երեխաների կողքին: «Թող հեռու մնա, ինչ ուզում է թող լինի» արտահայտությունը կամ այս սոցիալական դիստանցիան հաճախ է հանդիպում այն դեպքերում, երբ դոմինանտ խումբը կամ մեծամասնությունը չի հանդուրժում մյուսին և չի ընդունում նրա հետ նույն սոցիալական միջավայրում համակեցության հնարավոր լինելը:

Ցածր իրազեկվածությունը որևէ երևույթի մասին և դրանից վախը փոխկապակցված են: Ցածր իրազեկվածությունն ակամա ծնում է վախ դեպի դիմացինի վարքագծային և մտային կոնստրուկտները, ոնց որ ես երբեք կապ չեմ ունեցել իսլամի հետ, իմ հիշողությունը արյունն է, բնական է, որ վախ ունեմ իսլամադավանից, իսկ երբ ճանաչում ու շփվում ես, բնականաբար անցնում է այդ վախը: Այսինքն անիրազեկվածությունը-վախը-անհանդուրժողականությունը եռանկյունի են կազմում, որպես փոխկապակցված և իրար վրա ազդող գործընթացներ: (հարցվողի տեսակետ)

Հայաստանում անհանդուրժողականության այսօր ամենատարածված ձևերի վերաբերյալ հարցվողները հիմնականում միակարծիք էին: Նրանց գերակշռող մասն առանձնացրել է կրոնական պատկանելության, ազգային-էթնիկ պատկանելության, սեռական կողմնորոշվածության, ինչպես նաև հաշմանդություն կամ ՄԻԱՎ ունեցողների հանդեպ անհանդուրժողականության դրսևորումները:

Կրոնական անհանդուրժողականությունը դրսևորվում է ոչ միայն կրոնական փոքրամասնությունների պարագայում, այլև այլադավանի հետ հայի ամուսնության դեպքում, այլ միջազգային ընդունված կրոնն ընդունելու դեպքում և այլն: Այսինքն՝ կրոնական անհանդուրժողականությունը տարբեր դրսևորումներ ունի՝ նախ անհանդուրժողականությունը տարբեր կրոնական կազմակերպությունների նկատմամբ, երկրորդը՝ միջազգային կրոնների նկատմամբ /իսլամ, բուդդիզմ, հինդուիզմ և այլն/: Յուրաքանչյուր շեղում դոմինանտ ուղղությունից արդեն աղանդավորություն է դիտվում, նույնիսկ երբեմն քույր եկեղեցիների պարագայում: Ավելին, տեսակետներ հնչեցին, որ քույր եկեղեցիների նկատմամբ ՀԱԵ հոգևորականների շրջանում քողարկված անհանդուրժողականություն կա, քանի որ մի կողմից այդ ուղղությունները հնարավոր չէ բացահայտորեն քննադատել, պետք է համագործակցել, սակայն, մյուս կողմից, դրանցում ևս տեսնում են վտանգ, մասնավորապես իշխանությունը կամ ազդեցությունը նվազելու, մենաշնորհը կորցնելու առումով: Հասարակության առումով հիմնախնդիրը, տվյալ դեպքում անհանդուրժողականության առկայությունը, հիմնականում ցածր իրազեկվածության մեջ է, որով հեշտ է արմատավորվում «ինչը որ օտար է, վտանգավոր է» ընկալումը:

Այլազգիների նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքը կամ առնվազն անտարբերությունն արտահայտվում է անգամ երկրի նախագահի խոսքում: Օրինակ, դա նկատելի է ներկայիս նախագահի ամանորյա շնորհավորական ուղերձի մեջ, երբ շնորհավորում է հայ ժողովուրդի տոնը, և դուրս են մնում այն էթնիկ-ազգային փոքրամասնությունները, որոնք ապրում են մեր երկրում: Ինչպես նշեց փորձագետներից մեկը՝ կենցաղային մակարդակի նացիզմ կա Հայաստանում, հատկապես իսլամադավան ազգերի ներկայացուցիչների նկատմամբ, ինչը դրսևորվում է նրանց պիտակավորելու, նրանց հետ հայի ամուսնությունը բացառելու և նմանատիպ

գործողություններում: (Ինչպես նշել էր թուրք լրագրողուհին, առաջին խորհուրդը, որ իրեն տվել էին իրանցիները Հայաստանում, եղել է այստեղ սեփական ազգային պատկանելությունը թաքցնելը, ասելով, որ հայաստանյան հասարակության մեջ թուրք լինելու փաստը բարձրաձայնելը կարող է բացասական հետևանքների բերել:[35])

Փորձագետներից շատերի կարծիքով, Հայաստանում անհանդուրժողականության ամենատարածված ձևերից է սեռական կողմնորոշվածության հիման վրա անհանդուրժողականությունը, որը հատկապես ընդգծվեց վերջին տարում աղմուկ հանած իրադարձությունների ընթացքում: ՀՀ-ում բնակվող լեսբուհիները, գեյերը, երկսեռականները և փոխգենդերները իրենց ամենօրյա կյանքում բախվում են այն փաստի հետ, որ նույնավախությունը (հոմոֆոբիան) թե ընդհանուր հասարակական, թե ինստիտուցիոնալ մակարդակներում բավականին խորն է ու արմատացած: Պետական իշխանությունը, գերիշխող մշակույթի ազդեցությունը և ազգային ինքնությունը շեշտադրող քաղաքական ուժերը ու հոգևորականները չեն ստեղծում հնարավորություն ճանաչելու ՍԿԳԻ առումով բազմազանությունը: ԼԳԵՓ անհատների, նրանց կարիքների, փոխհարաբերությունների և կենսակերպի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության պակասը ստեղծում է «պարարտ հող» նրանց պիտակավորելու և նրանց նկատմամբ անհանդուրժողականության համար: Այսինքն՝ տվյալ դեպքում անհանդուրժողականության հիմքում հիմնականում հանրային իրազեկվածության ցածր մակարդակն է այն երևույթի վերաբերյալ, որը դուրս է մնում հետերոնորմատիվ պարադիգմից:

Վերջերս լրագրողին տված իր հարցազրույցի ժամանակ տվյալ հետազոտության փորձագետներից մեկը կարծիք է հայտնել, որ «մեր երկրում ավելի կարևոր են մենաշնորհը, արտագաղթը, բանակում սպանությունները, իսկ իշխանությունները մարդկանց բնազդային զգացմունքների վրա են խաղում՝ թիրախ դարձնելով ԼԳԲՏ-ներին, կրոնական կազմակերպություններին, քաղաքական այլախոհներին ու իրավապաշտպաններին և, վհուկների որս կատարելով, դրանով սնում են մարդկանց

[35] http://www.youtube.com/watch?v=lzusoBhoFIE

ուղեղները: …սեռական փոքրամասնությունների թեմայով իշխանությունները հանրության ուշադրությունը շեղում են կարևոր խնդիրներից»:[36]

Որոշ փորձագետների ու ֆոկուս խմբի մասնակիցների կարծիքով, անհանդուրժողականություն կա անգամ քաղաքական այն շարժումների նկատմամբ, որոնք դիտվում են արևմտյան և մեխանիկորեն պիտակավորվում որպես վտանգավոր մեր պետության համար:

Այսպիսով, Հայաստանյան հասարակության մեջ անհանդուրժողականության տարածված ձևերի հիմքում ընկած են ինչպես պատմա-մշակութային, քաղաքական, սոցիալ-տնտեսական գործոններ, այնպես էլ հանրային իրազեկվածության, հանրային կարծիքի, ձևավորված կարծրատիպերի հետ կապված գործոնները:

2.4 Կրոնական հանդուրժողականության հիմնախնդիրը Հայաստանում

Կրոնական հանդուրժողականության վերաբերյալ դիսկուրսներն առավել հաճախ սկսեցին շրջանառվել հատկապես Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցելուց հետո, երբ նոր որակ հաղորդվեց փոքրամասնությունների շահերի ու իրավունքների պաշտպանությանը, որոնց շարքում, Հայաստանի պարագայում, ամենամեծ հնչեղություն ունեցող փոքրամասնությունները հենց կրոնական փոքրամասնություններն են:

Հայաստանի Հանրապետությունում կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առումով բավականին դրական մթնոլորտ է տիրում, բացառությամբ թերևս ամենաաղմկահարույց կրոնական խմբերից մեկի՝ Եհովայի վկաներ կազմակերպության: Չնայած նրան, որ կրոնական հայացքների համար բանակից խույս տալու համար ժամանակին ՀՀ դատարանների կողմից դատապարտվել են որոշ եհովայի վկաներ ու հետագայում դրանց մի մասը Եվրոպական դատարանում կարողացել է վերականգնել իր իրավունքները (Բայաթյանն ընդդեմ Հայաստանի դատական որոշումը նախադեպային է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար), այնուամենայնիվ նույնիսկ այս կազմակերպությունը պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության

[36] http://medialab.am/Hasarakutjun/Serakan-pvoqramasnutjunneri-temajvov-ishkhanutjunner-hanrutjan-ushadrutjun-sheghum-en-karevvor-khndirnerits.-Parada-n-anpajman-ktsutsadrvi.html

նախարարության պետական ռեգիստրում ու ստացել կրոնական փոքրամասնության կարգավիճակ: Համեմատության համար պետք է նշել, որ եվրոպական որոշ երկրներում արգելք է դրված որոշ կրոնական կազմակերպությունների գործունեության վրա, ինչպիսին Եհովայի վկաներ կազմակերպությունն է Ֆրանսիայում:

Կան քրիստոնեական ու պսևդոքրիստոնեական հոսանքներ: Եհովայի վկաները մտնում են երկրորդ խմբի մեջ, իրենք հրեականության և քրիստոնեության խառնուրդն են և անգամ իսլամական տարրեր կան: Իսկ մորմոնները ավելի քաղաքականացված համայնք են, որոնք հարցին շատ դիվանագիտորեն են մոտենում: Հարցը նրանում է, որ կրոնը ուժեղ հասարակական դերակատարում ունի, եթե նախկինում անձի մասնավոր խնդիր էր, ներկայում եվրոպական ուսումնասիրություններում կրոնական գործոնին մեծ նշանակություն տվեցին և հասկացան, որ կրոնը կարևոր դեր ունի: Այն, թե կրոնը ինչ արժեքներ է թելադրում, շատ կարևոր է: Քրիստոնեությունը ծայրահեղություններ չի քարոզում, այդ թվում ՀԱԵ, բայց Եհովայի վկան անհանդուրժող է ու երկխոսության տեղ չի տալիս, ի տարբերություն հոգեգալստականների կամ մյուսների: Նույն կերպ ծայրահեղ են ուղղափառ եկեղեցու ուղղությունները, թեև պաշտոնական հարաբերությունների մակարդակում դա չի երևում, այսինքն՝ նրանք էլ անհանդուրժող են ՀԱԵ նկատմամբ: (ՀԱԵ հոգևորական)

Ավետարանական եկեղեցու տարբեր ճյուղերը բողոքական են, աղանդ չեն, իսկ Եհովայի վկաները և մորմոնները աղանդ են: Նրանք ընդունում են միայն մեկ Աստծո գոյությունը և հերքում սուրբ երրորդությունը, իսկ դա եսակենտրոնություն է, էգոիզմ, որը քրիստոնեական սիրո հետ որևէ առնչություն չունի: (Ավետարանական եկեղեցու ներիկայացուցիչ)

Չնայած նրան, որ կրոնական հանդուրժողականության մակարդակի չափումները բավականին բարդ են, ու չկա հստակ մեթոդաբանություն ճշգրիտ արդյունքներ ունենալու համար, այնուամենայնիվ օրենքի անկատարությունը, ատելության կամ խտրականության գրանցված դեպքերը, ֆիզիկական ու հոգեկան բռնությունները կրոնական կազմակերպությունների նկատմամբ բավարար նյութ են տալիս կրոնական հանդուրժողականության մակարդակի վերաբերյալ եզրակացություններ անելու համար: Այս իմաստով պետք է նշենք, որ Հայաստանում տիրող կրոնական հանդուրժողականության մակարդակը զգալիորեն գերազանցում է Հարավային Կովկասի տարածաշրջանի այլ պետությունների՝ Վրաստանի ու Ադրբեջանի կրոնական հանդուրժողականության մակարդակին: Վրաստանում Վրաց ուղղափառ եկեղեցին սահմանադրական համաձայնագիր ունի պետության հետ, իսկ մնացյալ կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակի հարցը դեռևս հստակեցված չէ: Նույնիսկ ՀԱԵ նման ավանդական կառույցը ու մեծաթիվ հայ համայնքի առկայությունը չեն

համոզում վրացական իշխանություններին լուծում տալ այս խնդրին եվրոպական օրենսդրության չափանիշներին համապատասխան: Առավել բարդ է իրավիճակի Ադրբեջանում, որտեղ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներն ուղղակի ֆիզիկական բռնության են ենթարկվում[37]:

Չնայած անցկացված համեմատականներին, պետք է նշենք, որ Հայաստանում կրոնական կազմակերպությունների հետ կապված իրավիճակը հեռու է իդեալական կամ նորմալ լինելուց, քանի որ վերջին շրջանում տեղ գտած խղճի և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի տարբեր նախագծերը ցույց են տալիս, որ տվյալ ոլորտի վերաբերյալ չկա պրոֆեսիոնալ մոտեցում, հաճախ հաշվի չեն առնվում կրոնական կազմակերպությունների կարծիքները, իսկ երբեմն էլ փորձում են իրավական կարգավորման ենթարկել աստվածաբանության կամ կրոնագիտության ոլորտները[38]:

Կրոնական կազմակերպություններից շատերի հիմնական դժգոհությունը ոչ թե այլ կրոնական կազմակերպություններից է, այլ պետական մարմիններից ու հատկապես ԶԼՄ-ներից, որտեղ այդ կրոնական կազմակերպություններից շատերը ներկայացված են բացասական լույսի ներքո, բացառությամբ Հայ առաքելական եկեղեցու: Այս մասին է վկայում Հայաստանի Հելսինկյան կոմիտեի արված հետազոտությունը. «Այսօր, գործնականում ԶԼՄ-ների զգալի մասը, ըստ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների, կամ անտեսում է կրոնական կազմակերպություններին (բացի Հայաստանյայց Առաքելական եկեղեցուց), կամ նրանց նկատմամբ Հայ Առաքելական եկեղեցու դիրքերից հակաքարոզչություն է անում, որի պատճառով հանրության մեջ անհանդուրժողականություն է առաջանում նրանց նկատմամբ»[39]: Բազմաթիվ են այն ԶԼՄ-ները, որոնք նույնիսկ ավանդական կաթոլիկ համայնքին նույնպես ներկայացնում են բացասական լույսի ներքո: Կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները ԶԼՄ-ների նման վերաբերմունքի պատճառը համարում են հիմնականում լրագրողների ու գլխավոր խմբագրի տգիտությունը, որոնք տարրական պատկերացումներ չունեն

[37] Տե՛ս http://www.forum18.org/Archive.php?article_id=1192. Այս զեկույցում նշվում է, որ Ադրբեջանում կա ոչ միայն ճնշում կրոնական կազմակերպությունների նկատմամբ, այլ նաև՝ կրոնական գրականության գրաքննություն, օտարազգիների կրոնական պաշտամունքի սահմանափակություն, ճնշումներ սունիի փոքրամասնության նկատմամբ, «սափրած մորուքներ» և այլն:

[38] Այսպես, Ա. Աշոտյանի առաջարկած օրենքի նախագծում փորձ էր կատարվում սահմանել երրորդություն կամ քրիստոնություն եզրերը:

[39] «Կրոնի ազատությունը Հայաստանում», Հայաստանի հելսինկյան կոմիտե, խմբ. Վ. Իշխանյան, Երևան, 2010, էջ 56:

կրոնական կազմակերպությունների գործունեություն ու կառուցվածքի վերաբերյալ, իսկ մյուս կողմից էլ՝ լրագրողների կողմից պատվեր կատարելու բացասական ավանդույթը[40]: Այս իմաստով հիմնական դժգոհությունների մեխը ուղղվում է տպագիր մամուլին և հատկապես «Հայոց աշխարհ», «Առավոտ», «Ազգ» թերթերին: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բացասական գնահատականների պակաս չի զգացվում հատկապես սոցիալական ցանցերում ծավալվող քննարկումների ժամանակ ու բլոգոսֆերայում, որտեղ մի շարք «պահպանողականներ» դիտարկում են կրոնական փոքրամասնություններին որպես «լիբերալ ախտ» ու ամբողջ ուժով հարձակվում «աղանդավորների» վրա: Մամուլում կարելի է հաճախ հանդիպել անուղղակի նույնացումների, երբ ավետարանական եկեղեցիները ենթատեքստով նույնացվում են «սատանայապաշտների» կամ «մարդասպան աղանդների» հետ, որի նպատակը Հայ առաքելական եկեղեցու այլ կրոնական կազմակերպությունների նկատմամբ հասարակության մեջ բացասական տրամադրությունների, կարծրատիպերի ու վախերի սերմանումն է:

Մամուլի մոնիտորինգ կրոնական հանդուրժողականության վերաբերյալ

ԵՄԱ հետազոտությունը կազմված է երեք մասից՝ միջազգային կոնվենցիաներում եւ այլ փաստաթղթերում, ինչպես նաեւ ազգային օրենսդրությունում զետեղված՝ խղճի ազատությունը երաշխավորող դրույթների ուսումնասիրություն, կրոնական անհանդուրժողականության վերաբերյալ նախկինում անցկացված ուսումնասիրությունների ամփոփում և Երևանի մամուլի ակումբի մշտադիտարկման արդյունքների վերլուծություն:

2010 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց «Կրոնական կամ համոզմունքների հիման վրա բոլոր տեսակի անհանդուրժողականության եւ խտրականության վերացման մասին» բանաձեւը, որն անդրադառնում է նաեւ լրատվամիջոցներ-կրոն կապին: Բանաձեւը ողջունում է ԶԼՄ-ների բոլոր նախաձեռնությունները հանդուրժողականություն, կրոնի եւ բազմամշակութայնության նկատմամբ հարգանք սերմանելու գործում, միեւնույն ժամանակ դատապարտում

[40] Տե՛ս նույն տեղում, էջ 56-58:

խտրականություն, թշնամանք կամ բռնություն սերմանող կրոնական ատելության քարոզումը տպագիր, հեռարձակվող, էլեկտրոնային մամուլի կամ այլ միջոցներով։

2001 թվականին Եվրոպայի խորհրդին անդամակցելով՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացումն ու դրանով նախատեսված բոլոր իրավունքների ապահովումը։ Միջազգային իրավական ակտերը, որոնք տարբեր ժամանակներում վավերացվել ու Հայաստանի կողմից դարձել են Հայաստանի օրենսդրության բաղադրիչ մաս, եւ թե ազգային օրենսդրությունը ենթակա են կատարման եւ պահպանման յուրաքանչյուր անձի եւ կազմակերպության կողմից, այդ թվում՝ ԶԼՄ-ների կողմից։ Միջազգային մի քանի ատյաններ նշել են անձի կրոնական ազատության իրավունքի անկատարության մասին՝ կոչ անելով Հայաստանի իշխանություններին համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել։

ԶԼՄ-ներում կրոնական թեմաների լուսաբանման մասին ԵՄԱ սույն մշտադիտարկումն ընդգրկել է 2011թ. նոյեմբերի 18-ից 2012 թ. հուլիսի 25-ն ընկած ժամանակաշրջանը։ Հետազոտության համար ընտրվել են 10 լրատվամիջոցներ, այդ թվում՝ երեք հեռուստաալիք (Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք՝ Հ1, «Շողակաթ», որը նաև Հ1-ի բաղկացուցիչ մաս է, «Երկիր մեդիա»), մեկ ռադիոալիք («ԱրմՌադիո» FM 107»), երեք թերթ («Հայկական ժամանակ», «Ազգ», «Голос Армении») և երեք առցանց հրատարակություն (Lragir.am, Hetq.am, Panorama.am)։ Յուրաքանչյուր լրատվամիջոցի նյութերի ուսումնասիրությունն ընդգրկում էր 4-ական շաբաթ, սակայն տևական ժամանակային կտրվածքով ընդհանուր պատկերացում ունենալու նպատակով լրատվամիջոցները հետազոտվել են ավելի քան ութամսյա ժամանակաշրջանի տարբեր հատվածներում։

Փորձագետների հետ խորհրդատվության արդյունքում կազմվել է կրոնի, դավանաբանական ուղղությունների, կրոնական համայնքների նկատմամբ Հայաստանի քաղաքացիների վերաբերմունքը բնորոշող պնդումների, կարծրատիպերի ցանկ։ Հետազոտման առարկա հանդիսացած նյութերում դիտարկվել է այդ պնդումների, կարծրատիպերի առկայությունը, հաշվարկվել է դրանց օգտագործման հաճախականությունը։ Նշվել են տեղեկությունների աղբյուրները, ինչպես նաև

պնդումների ու կարծրատիպերի սուբյեկտները։ Հետազոտության կարևոր տարր է հանդիսացել պնդումների, կարծրատիպերի նկատմամբ համապատասխան նյութերի հեղինակների, ԶԼՄ-ների վերաբերմունքի որոշումը։

Լրատվամիջոցների հետազոտված ծավալում ընդհանուր առմամբ արձանագրվել են 1020 նյութեր, որոնք այս կամ այն կերպ առնչվել են կրոնական թեմաներին, բայց դրանցից միայն 96-ում են (10%–ից պակաս) արձանագրվել են կրոններին, դավանաբանական տարբեր ուղղություններին, կրոնական համայնքներին վերաբերող արժեքային պնդումներ ու կարծրատիպեր։ Այդ թվերը, մի կողմից, վկայում են կրոնական թեմաների նկատմամբ հայկական ԶԼՄ-ների համեմատաբար չեզոք վերաբերմունքի մասին. նրանք այդ թեմաներն առաջին հերթին լուսաբանել են տեղեկատվական, իրադարձային դիտանկյունից։

Միևնույն ժամանակ, հետազոտման առարկա հանդիսացած նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ լրատվամիջոցներում, ենթադրաբար՝ նաև հանրային ուղղույթում (դիսկուրսում) առկա են մոտեցումներ, որոնք թույլ են տալիս խոսելու կրոնի թեմայի նկատմամբ «լարված վերաբերմունքի» մասին։ Առաջին հերթին դա վերաբերում է Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու (ՀԱՍԵ) բացառիկ դերն ընդգծելուն։ Լուսաբանման մեջ արտահայտվում է նաև ՀԱՍԵ կարգավիճակը արտաքին սպառնալիքներից պաշտպանելու ձգտում։ Արտաքին սպառնալիքներից ազգը պաշտպանելու միտումն էլ ավելի մեծ չափով արտացոլվում է որպես «աղանդավորական» և «աղանդներ» բնորոշվող կրոնական հոսանքների, համայնքների թեման արծարծող նյութերում։ Ընդսմին, որպես կանոն, այդ հասկացությունները օգտագործվում են գրեթե բոլոր այն կրոնական ուղղությունների և համայնքների նկատմամբ, որոնք չեն տեղավորվում համաշխարհային կրոնների մասին ավանդական, ընդհանրացված պատկերացումներում։

Հետազոտության արձանագրած պնդումներին (որոնց մի մասը՝ ՀԱՍԵ-ի արժևորման և «աղանդների» բացասական դերի առումով, կարծրատիպերի բնույթ է ստացել), իրենց բոլոր տարբերություններով հանդերձ, միավորում է, ինչպես նշվել է վերևում, արտաքին սպառնալիքներից ազգային, հոգևոր ինքնությունը պաշտպանելու ձգտումը։ Հենց այդ դրդապատճառն է գերիշխող հանդիսանում այլ կրոնների նկատմամբ

վերաբերմունքում և հայկական ԶԼՄ-ների կողմից կրոնական անհանդուրժողականության դրսևորումներում:

Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ բացասական գնահատականներ ու վերլուծություններ հնչում են հիմնականում առանձին անհատների հարցազրույցներում ու տպագիր մամուլում: Հայ առաքելական եկեղեցու մասին բացասական հոդվածներ տպագրվում են հիմնական ընդդիմադիր համարում ունեցող տպագիր ու էլեկտրոնային մամուլում: «Հայկական ժամանակ» օրաթերթը, «Լրագիր» էլեկտրոնային կայքը և այլ մամուլի միջոցներ հիմնականում քննադատության են ենթարկում Հայ եկեղեցու հոգևոր առաջնորդի՝ կաթողիկոսի անձը, ինչպես նաև առանձին հոգևորականների վարքագիծը: Այպես Հայ եկեղեցու նկատմամբ քննադատական հոդվածները միանգամից շատացան Արարատյան թեմի հոգևոր առաջնորդ Նավասարդ Կճոյանի «Բենթլի» մակնիշի մեքենայի ի հայտ գալուց հետո: Այդ հոդվածները հիմնականում ունեն հատվածական բնույթ և ուղղված են առաջին անձանց ու երևույթների քննադատությանը:

Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումը Հայաստանում կրոնական բազմազանության նկատմամբ

ՀԱԵ միասնական ու բացարձակ դիրքորոշում չունի Հայաստանում կրոնական բազմազանության նկատմամբ: Այս տեսանկյունից Հայ առաքելական եկեղեցին հայտնվել է բավականին հետաքրքրական իրավիճակում, որովհետև մի կողմից, որպես պետության հետ հատուկ հարաբերությունների մեջ գտնվող եկեղեցի, այն պետք է հարգի պետության բոլոր օրենքները և ստիպված է համակերպվել խղճի ազատության մասին սահմանադրական դրույթի ու գործող օրենսդրության հետ, իսկ մյուս կողմից, իբրև ավանդական ու դարեր շարունակ հայ ժողովրդի պատմության մեջ բացառիկ դեր խաղացած կրոնական կառույց, չի կարող համակերպվել ու հարմարվել Հայաստանում առկա կրոնական բազմազանության հետ և այդ կրոնական կազմակերպությունների գործունեությունը համարում է «զավթողական», իսկ նրանց հետևորդներին «զավթված տարածքներ», որոնք վաղ թե ուշ վերադառնալու են մայր եկեղեցու գիրկը[41]: Պետք է նշել, որ Հայ առաքելական եկեղեցու սոցիալական հայեցակարգի բացակայության պայմաններում դժվար է առանձին հոգևորականների վերաբերմունքը վերագրել ողջ

[41] Այս տեսակետը հնչեցրել է Հայ առաքելական եկեղեցու քրիստոնեական դաստիարակության կենտրոնի ղեկավար Վարդան վրդ. Նավասարդյանի կողմից 2012թ. հուլիսի 31-ին «Կրոնական կրթության խնդիրները Հայաստանի Հանրապետության դպրոցներում» գրքի շնորհանդեսի ժամանակ Երեբունի պլազա հյուրանոցում:

եկեղեցական կառույցին, այնուամենայիվ մեթոդաբանական սխալներ թույլ չտալու համար հարկ ենք համարում նշել, որ եկեղեցականների մեծամասնության կարծիքի միատարրության դեպքում այն կարելի է համարել նաև եկեղեցու հավաքական կարծիք:

Հայ եկեղեցու հոգևորականներից շատերը տարբերակված մոտեցում ունեն կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Դրանց մի մասը համարվում է միանգամայն անընդունելի, որոնց շարքին են դասվում Եհովայի վկաները, երբեմն մորմոններն ու ավետարանական հարանվանությունները, իսկ ընդունելի կրոնական կազմակերպությունները հիմնականում ավանդական կրոններն են, հատկապես կաթոլիկները, ու այն եկեղեցիները, որոնք ակտիվ քարոզչությամբ չեն զբաղված ու չեն հավակնում Հայ եկեղեցու հոգևոր հոտին: Հայ եկեղեցու հոգևորականներից շատերի վերաբերմունքը ձևավորվում է հայի ինքնության եկեղեցական ընկալումից, համաձայն որի «հայը միայն Հայ առաքելական եկեղեցու հետևորդն է» կամ էլ «մեկ ազգ, մեկ եկեղեցի» թեզի քարոզչությունը տարբեր պահպանողական խմբերի ու եկեղեցամերձ շրջանակների կողմից:

Այս առումով հետաքրքրական է, որ սույն հետազոտության շրջանակներում հարցազրույց տված հոգևորականները հանդուրժողականություն եզրն ընկալում էին հիմնականում բացասական իմաստով, քանի որ հայ հասարակության մեջ տարածված բազմաթիվ «օտարամոլ» երևույթներ, իրավունքների ոտնահարումը, թմրանյութերից կախվածությունը, սեռական կոմերիցոն ծառայությունները (մարմնավաճառությունը) և այլ արատավոր պրակտիկաներ ուղղակիորեն համարվում են հենց հանդուրժողականության արդյունք: Խորքային հարցազրույցներից մեկի ընթացքում ՀԱԵ հոգևորականը նշեց, որ «չափից դուրս հանդուրժողականությունը ժողովրդի մեջ աստիճանաբար վեր է ածվում անտարբերության, որը դրսևորվում է ոչ միայն կրոնական դաշտում, այլ նաև հանրային հարաբերությունների ոլորտում: Այդ պատճառով էլ «հանդուրժողականությունը հայ իրականության մեջ վերածվում է հիասթափության»:

ՀԱԵ մեկ այլ հոգևորական էլ նշել է, որ հանդուրժողականությունը, ինչպես նաև շատ այլ եզրույթներ (եվրոինտեգրում, բազմամշակութային հասարակություն) նորաձև են դարձել մեր կիրառության մեջ, և հանդուրժողականությունն այդ շարքից արհեստածին մի եզրույթ է, որը, կարծես, մեր մոտ համատեքստից դուրս է, տարբեր կերպ է ընկալվում և մեկնաբանվում: Նրա կարծիքով հանդուրժողականությունը հակադրվում է

քրիստոնեական սիրո գաղափարին, որովհետև առաջին դեպքում մարդը ստիպված է հանդուրժելու անհանդուրժելին առանց սիրո առկայության, իսկ մյուս դեպքում նրան առաջնորդում է միայն քրիստոնեական սերը.

> *«Ինձ համար հանդուրժողականություն ասվածն արհեստածին, մեզ պարտադրվող մի բան է, որին ձգտում է ամբողջ աշխարհը, որպեսզի ձերբազատվեն դժվարություններից, կոնֆլիկտներից, պատերազմներից, կարողանան կիսել աշխարհի բարիքները, բայց իմ տեսակետն այն է, որ մենք պետք է քրիստոնեական սիրո քրիստոնեական արժեքների տարածողը լինենք և հանդուրժողականությունը կարող է տեղավորվել դրա մեջ:»* ՀԱԵ հոգևորական

Տվյալ հետազոտության շրջանակներում ՀԱԵ հոգևորականների վերաբերմունքի մասին այլ կրոնական կազմակերպությունների նկատմամբ փորձ արվեց պարզել հենց այդ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Այս իմաստով երկու հարևան մարզերի փորձի օրինակով ստացանք երկու տարբեր պատկերներ: Լոռվա մարզի ավետարանական եկեղեցիներից մեկի ներկայացուցչի խոսքերով մարզում առկա է որոշակի համագործակցության մթնոլորտ Հայ առաքելական եկեղեցու հոգևոր առաջնորդի հետ, որը բավականին դրական գնահատականի արժանացավ: Իր հերթին էլ թեմի առաջնորդը նշում է, որ ինքը հրավիրել է մարզում առկա տասնչորս կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին հավաքվել ու փորձել միասնական, հավաքական ուժերով լուծում փնտրել բազմաթիվ բացասական երևույթների, այդ թվում մարմնավաճառության, թմրանյութերից կախվածության, պետության ու հասարակության առջև ծառացած այլ սոցիալական հիմնախնդիրների համար: Չնայած համագործակցության առաջարկը դեռևս պրակտիկ դրսևորումներ չի գտել, այնուամենայնիվ, առաջարկի փաստն ինքնին բավականին դրական ու առաջադեմ երևույթ է: Այս դեպքը ցույց է տալիս, որ Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունները հանդուրժողականության առկայության դեպքում կարող են ձևավորել միասնական մարմիններ ու արդյունավետ ներդրում կատարել պետական, հասարակական, անհատական-անձնային շահերի պաշտպանության գործում:

Տավուշի թեմի հակառակ պատկերն են նկարագրում Շիրակի թեմի հայ ավետարանականները՝ նշելով, որ թեմի առաջնորդը խիստ անհանդուրժողական կեցվածք ունի կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ, որը դրսևորվում է նրա հրապարակային ելույթներում, հեռուստաելույթներում ու անձնական

վերաբերմունքում: Իր ելույթներից մեկում նա կրոնական փոքրամասնություններին բորբոսի հետ է համեմատում. «Ստվերում են աճում, արեւից՝ վերանում» [42] : Հետաքրքրական են հատկապես Միքայել եպիսկոպոսի համեմատությունները Հայ եկեղեցու ու մոր հետ. «Քո մայրը Հայ առաքելական եկեղեցին է, եթե մորդ չես ճանաչում՝ դա քո մեղքն է» [43] : Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչները նշում են, որ անհանդուրժողականության հիմնական քարոզողները ԶԼՄ-ներն են, որոնք բացասական չեն ներկայացնում միայն Հայ առաքելական եկեղեցուն, իսկ այլ կրոնական փոքրամասնություններն էլ հիմնականում զրկված են հեռուստատեսությամբ հանդես գալու հնարավորություններից, քանի որ վախենում են Հայ եկեղեցու հզոր հակազդեցությունից: Իսկ այն սակավաթիվ դեպքերում, երբ կրոնական փոքրամասնություններին Հայաստանում ընձեռվում է հնարավորություն, օրինակ, հեռուստատեսությամբ երևալու, ապա այդ պարագայում էլ շատ է հանդիպում, հարցվողներից մեկի խոսքով, «հեռուստավարսավիրությունը», երբ կարևոր մտքերը կրճատվում են կամ ոչ ամբողջական ու համատեքստից դուրս մատուցվում հանդիսատեսին: Նրանք նշում են, որ նմանատիպ անհանդուրժողականության քարոզը կարող է հանգեցնել նրան, որ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, որոնց անվանում են աղանդավորներ, կսկսվեն ֆիզիկական հաշվեհարդարներ: Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչները հիշեցին կոնկրետ դեպք, երբ Հառիճի դպրեվանքի ուսանողները հարձակվել են Շիրակի մարզում ավետարանական եկեղեցու հայտնի քարոզիչ Ռուբիկ Փահլեվանյանի վրա:

> Ինքս ինձ խոստացել եմ չհիշել, չվերադառնալ ինձ հետ տեղի ունեցածին, իմ նկատմամբ անհանդուրժողականության ծայրահեղ դրսևորումներին միայն նրա համար, որ իմ կրոնական հայացքները և գործունեությունը տարբերվում են գերիշխողից: Ինձ ինչպես ասես, որ չեն անվանել՝ և սրիկա, և գող, և ազգի դավաճան, հայ լինելու հետ կապ չունեցող մարդ…
> *Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչ*

Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչները նշում են, որ հեռուստատեսությամբ պարբերաբար քարոզվող «աղանդավորի» կերպարը թշնամանքի սերմանման միջոց է, որի իրագործման գործիքներ են դիտում «սկինհեդ-արծիվներին» և այլ կեղծ ազգայնական խմբերին: Չնայած նմանատիպ երևույթների եզակի բնույթին, այդուհանդերձ, դա չի նշանակում, որ քարոզվող անհանդուրժողականությունը որևիցե մի

[42] «Ռադիոլուր», Լիանա Եղիազարյան, armradio.am **20.08.2011:**
[43] Միքայել սրբազանի հարցազրույցը տե՛ս http://www.shiraksec.am/.

օր չի կարող վերածվել ֆիզիկական բռնության, ինչի հետ կապված առավել ուշադիր պետք է լինեն պետական մարմինները՝ նմանատիպ անհանդուրժողական երևույթների քարոզն արգելելու կամ նվազեցնելու առումով:

ՀԱԵ մի շարք հոգևորականներ հանդես են գալիս առավել ծայրահեղ ու ոչնչով չհիմնավորված տեսակետերով: Այսպես, «Սիրանկյուն» հաղորդաշարի հյուր Տեր Ասողիկ քահանա Կարապետյանը նշում է, որ կրոնական հանդուրժողականությունը կարող է տարածվել իսլամի, բուդդիզմի, կրիշնայիզմի նկատմամբ, բայց ոչ երբեք բողոքական հարանվանությունների նկատմամբ, որոնք հավատքի սխալ կամ Հայ եկեղեցուց այլ մեկնաբանություն են տալիս: Հետաքրքրական է, որ ՀԱԵ անհանդուրժող է քրիստոնեական այլ հարանվանությունների նկատմամբ, մինչդեռ հասարակությունն առավել անհանդուրժող է այլ կրոնների նկատմամբ, ասենք իսլամի: Այստեղ ևս հայ հասարակության ու ՀԱԵ մոտեցումներն արմատապես հակադրվում են իրար, ինչպես նշում էին ֆոկուս խմբերից մեկի մասնակիցները: Տեր Ղազար քահանա Պետրոսյանը, Տեր Կյուրեղ քահանա Տալյանը ևս բավականին կոշտ գծի կողմնակից են: «Աղանդավորական բացիլների» ներթափանցման հիմնական մեղավոր են համարում Խորհրդային միության անաստվածության շրջանը և հայ հասարակության պասիվ բնույթը: Երկու քահանաների կարծիքով էլ «հայ մարդը պետք է ունենա մեկ մայր, որը Հայ առաքելական սուրբ եկեղեցին է»[44]: Իսկ բողոքական հարանվանությունների քարոզչությունը քահանաները նմանեցնում են «ֆասթ ֆուդի», որոնք վնասում են մարդու առողջությանը: Իսկ Հայաստանում տարածված կրոնական ուղղություններից ամենից վտանգավորները համարում են տոտալիտար աղանդները, որոնց շարքին են դասում եհովայի վկաներին, մորմոններին, կյանքի խոսք եկեղեցին, որոնք, ըստ նրանց, թշնամական վերաբերմունք ունեն Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ[45]:

[44] «Կրոնի ազատությունը Հայաստանում», Հայաստանի հելսինկյան կոմիտե, խմբ. Վ. Իշխանյան, Երևան, 2010, էջ 68:
[45] Տե՛ս նույն տեղում, էջ 70-71:

Կրոնական համայնքների հետ կապված հանրային ընկալումները. համաշխարհային կրոնների, կրոնական փոքրամասնությունների և աթեիստների նկատմամբ վերաբերմունքը

Այս հետազոտության շրջանակներում կատարված դաշտային աշխատանքների արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանի բնակչության մի ստվար հատված տարրական պատկերացումներ չունի տարբեր կրոնների կամ կրոնական կազմակերպությունների վերաբերյալ, այլ տեղեկատվությունը հիմնականում սահմանափակվում է կենցաղային մակարդակի շփումներում ստացված տվյալներով: Հասարակության միայն մի փոքր շերտի կրթական մակարդակն է բավարարում կրոնների մասին համեմատաբար ամբողջական գիտելիքներ ունենալու համար: Իրազեկվածության նման ցածր մակարդակը մի կողմից խորհրդային ժառանգության արդյունք է, մյուս կողմից հետաքրքրության և համակարգված կրոնագիտական գիտելիքի բացակայության հետևանք: Կրոնագիտական պատկերացումները հիմնականում սահմանափակվում են եկեղեցական տոներով ու դրանց հաջորդող մեռելոցներով, որոնք առավելապես կապ ունեն ոչ թե կրոնագիտական պատկերացումների, այլ կենցաղային, ավանդույթային սովորույթների հետ: Անգամ բարձրագույն կրթությամբ, տվյալ դեպքում պոլիկլինիկայի աշխատակից բժիշկներից բաղկացած ֆոկուս խմբի մասնակիցների շրջանում կային մարդիկ, ովքեր իրազեկ չէին ոչ միայն կրոնական տարբեր կոնֆեսիաներից ու դենոմինացիաներից, այլ անգամ չէին կարողանում հստակ ձևակերպել, թե որն է մեր պետական կրոնը: Մասնակիցներից մեկը նույնիսկ շփոթեց այն Վրաստանի պետական կրոնի հետ:

Այս իմաստով հետաքրքրական են Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնի ***կովկասյան բարոմետրի***[46] արդյունքները, որտեղ հստակ երևում է, որ հայ հասարակությունը որոշակի վերապահություններ ունի այլակրոնների նկատմամբ: Խոսքը հատկապես մուսուլմանների ու հրեաների մասին է, երբ 2011թ. հարցվածների համապատասխանաբար 90%-ը և 71%-ը դեմ են արտահայտվել այդ կրոնին պատկանող անձի հետ ամուսնությունը: Իսլամի հետ կապված հայ հասարակության կարծրատիպերը խարսխված են հիմնականում թուրքերի կողմից հայոց ցեղասպանության հիշողության, պատմական նարատիվների, ղարաբաղյան պատերազմի ու իսլամադավան

[46] http://crrc.ge/oda/

ժողովուրդների հետ անցյալում բացասական հարաբերություններ ունենալու վրա: Հրեաների նկատմամաբ վերաբերմունքը ևս խարսխված է իռացիոնալ կարծրատիպերի վրա, որոնց հիմքում ընտրյալ ազգի վիճարկումն է հրեաների հետ: Հատկանշական է, որ համաշխարհային կրոնների մասին հայ հասարակության պատկերացումները խարսխվում են կամ հատվածական երևույթների վրա, կամ հեռուստատեսությունից տրվող ոչ օբյեկտիվ, իսկ երբեմն էլ չափազանցված գնահատականների ու կենցաղային մակարդակում եղած շփումների կամ միջնորդավորված շփումների վրա: Հայ հասարակության մեջ մուսուլմանների նկատմամբ առկա անհանդուրժողականությունը հատկապես վառ է դրսևորվում իրանական նովրուզի օրերին, երբ հազարավոր իրանցի զբոսաշրջիկներ են այցելում Հայաստան ու հենց այդ օրերին ավելանում են հակաիսլամական դիսկուրսները թե հասարակության մեջ և թե մամուլում:

Հայ հասարակության հանրային ընկալումներում «հավատացյալ» հասկացությունը զուգորդվում է «աղանդավոր» տերմինի հետ և «հավատացյալ» են դիտվում հիմնականում ավետարանական հարանվանությունների ներկայացուցիչները, իսկ Հայ առաքելական եկեղեցու հետևորդներից շատերը խուսափում են իրենց նույնացնել «հավատացյալ» տերմինի հետ՝ վախենալով «աղանդավորի» հետ նույնացումից: Հետաքրքրական է, որ այս վախն այնպիսի դրսևորումներ է ստացել, որ բարձրագույն կրթություն ունեցող անձը պնդում է, որ ինքը աթեիստ է, բայց հետո նշում, որ ինքը աթեիստ ասելով ի նկատի ուներ Հայ առաքելական եկեղեցու հետևորդ լինելը[47]: Այս համատեքստում ՀԱԵ հետևորդը համարվում է նա, ով ակտիվորեն չի մասնակցում եկեղեցական արարողություններին, առավելագույնը պարզապես մոմ է վառում եկեղեցում կամ ընտանեկան միջոցառումներ նշում (հարսանիք, կնունք և այլն): Հայ առաքելական եկեղեցու հետևորդների մեծամասնության համար հայ լինել նշանակում է լինել Հայ առաքելական եկեղեցու հետևորդ, իսկ այլ կրոնների պատկանողները, ըստ նրանց, կորցրել են իրենց ինքնության կարևորագույն բաղադրիչներից մեկը ու դժվար է նրանց հայ անվանելը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ հայ հասարակության ստվար հատվածը, ովքեր իրենց համարում էին Հայ առաքելական եկեղեցու նոմինալ հետևորդներ, բավականին տարբերակված մոտեցում ունեին կրոնական փոքրամասնությունների

[47] Ֆոկուս խումբ բժիշկների հետ, 29.08.2012:

նկատմամբ: Այսպես, եթե փորձենք դասակարգել նրանց բացասականից դեպի դրական մոտեցումները, ապա կարող ենք վստահաբար պնդել, որ ամենից բացասական վերաբերմունք հասարակությունն ունի սատանայապաշտների, Եհովայի վկաների, մորմոնների նկատմամբ ու առավել դրական է ավանդական կրոնական համայնքների ու հատկապես կաթոլիկ համայնքի նկատմամբ: Հասարակության լայն զանգվածները պատկերացում չունեն ավետարանական հարանվանությունների մասին, որի պատճառով էլ նրանց հաճախ անվանում են մեկ՝ «բողոքական» տերմինով, որն էլ նույնացնում են «աղանդավորություն» եզրին դրանց միանգամից բացասական երանգ տալիս: Տարրական գիտելիքների բացակայությունը հանգեցնում է նրան, որ «աղանդավորներին» վերագրում են բոլոր հնարավոր ու անհնար մեղքերը, հանցագործությունները, որոնք սկսվում են սև մոգության տարբեր դրսևորումներից վերջանում սատանայի պաշտամունքով: Նման մոտեցումը ինչ-որ տեղ էլ կոպիտ հակաքարոզչության ու օբյեկտիվ տեղեկատվության բացակայության արդյունք է:

Վերը նշված հակաքարոզչության արդյունքում էլ հայ հասարակության մեջ տեղ գտած ու օրենքով պաշտպանվող որոշ երևույթներ համարվում են «արևմուտքից» կամ «եվրոպայից» պարտադրված մի բան, որին պետք է հակադրվել ու որից պետք է ամեն գնով խուսանավել: Դրանց շարքին առաջին հերթին դասվում են սեռական ու կրոնական փոքրամասնությունները, սեռական բարոյականության ավանդույթների պահպանումը և այլն: Այդ մասին են վկայում Կովկասյան բարոմետրի տվյալները[48], որտեղ հստակ երևում է հասարակության սեռական բարոյականության նկատմամբ հստակ կողմնորոշվածությունը: Այս դիրքերից ելնելով էլ երբեմն գիտակցված, երբեմն էլ ոչ հանրային դիսկուրսում տեղի է ունենում սեռական ու կրոնական փոքրամասնությունների նույնացում, որոնց տեղավորում են մեկ, ընդհանուր՝ «ազատական կամ լիբերալ» հասկացության տակ: Այսպես, «անտիլիբերաստ» ծաղրական անվանումով բլոգը սուր քննադատության է ենթարկում «ազատականության» գաղափարը՝ հանդես գալով ազգային-պահպանողականության դիրքերից: Հետաքրքրական է, որ նույն բլոգը սուր քննադատության է ենթարկում «դավաճան Վանյանին պաշտպանող լևոնականներին», իսկ մյուս կողմից դատապարտում է աղանդներին, հատկապես «Կյանքի խոսքին», քարոզում սեռական բարոյականություն ու կեղծ արժեքներ ու այս ամենի մեղավոր համարում «դրսի

[48] http://crrc.ge/oda/

ուժերին» ու «ազատական արժեքները»[49]: «Ազատական ախտի» շարքին վերջին շրջանում սկսվել են դասվել «գրանտակերները», որոնք քննադատում են պսևդոազգայնականների կարծիքով ամենանվիրական երևույթների եկեղեցու և բանակի վրա:

Այս ամենի ֆոնին ուշագրավ է, որ հայ հասարակության գրեթե բոլոր շերտերը բավականին հանդուրժողական մոտեցում ունեն աթեիստների նկատմամբ՝ պնդելով, որ «այդ տեսակետը գոյության իրավունք ունի»:

> *«Պետք է հարգանքով վերաբերվել աթեիստներին: Նրանք, չիմանալով Աստծո գոյության մասին, ամեն դեպքում շատ օգուտ են տվել աշխարհին»:* (Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչ)

Աթեիստների նկատմամբ հանդուրժողական մոտեցումը հայաստանյան հասարակությունում հետազոտությանը մասնակցած հոգեբանները բացատրում են նրանով, որ մեր «դաստիարակության ու սոցիալականացման մեջ կրոնը մեծ դեր չունի, այն պարզապես կողքից փոքր ատրիբուտ է, որովհետև մեր գիտակցության մեջ ավելի շատ ավանդույթներն են, ընտանիքը, աշխարհիկ արժեքները»: Աթեիստների նկատմամբ հարաբերական հանդուրժողականությունը պայմանավորված է նաև նրանով, որ աթեիստները հանդես չեն գալիս որպես առանձին կառույց և ինստիտուցիոնալացված չեն, ոչինչ հատուկ չեն քարոզում: Եվ քանի որ չկա որևէ կառույց, որը կներկայացնի աթեիստների շահերը, ու աթեիստները որպես այդպիսին անհատներն են, ապա նրանք ձեռք են բերում «քիչ վտանգավորության» աստիճան և առավել հանդուրժողական վերաբերմունքի արժանանում: Այլ է խնդիրը ինստիտուցիոնալ, այլընտրանքային կառույցների ու կազմակերպությունների նկատմամբ, որոնք հակակշիռ են հանդիսանում իշխանություններին մի կողմից կամ իշխող կրոնական գաղափարախոսությանը մյուս կողմից:

[49] Առավել մանրամասն տե՛ս http://antiliberast.wordpress.com/tag/%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%AD%D5%B8%D5%BD%D6%84-2/.

2.5 Օրենքի գերակայությունը. հանդուրժողականություն, թե հարկադրական հարմարվողականություն

Օրենսդրության ու քաղաքական կամքի դերը հանդուրժողականության ձևավորման գործում

Չնայած վերը նշված բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրներին, այնուամենայիվ պետք է նշենք, որ Հայաստանը կրոնական հանդուրժողականության հարցում ամենաետին թվում չէ, եթե համեմատելու լինենք այլ երկրների և մասնավորապես տարածաշրջանի մյուս երկու երկրների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ: Բայց սա չի նշանակում, որ Հայաստանում կրոնական ազատությունների հետ կապված խնդիրներ գոյություն չունեն կամ չեն կարող գոյություն ունենալ: Շատ դեպքերում կրոնական խնդիրների կիսալուծումը կամ չլուծումը հանգեցնում է նրան, որ բացասական էներգիան կուտակվում է և այ կարող է յուրաքանչյուր պահի դուրս հորդել մեծ ուժգնությամբ: Մյուս կողմից էլ, օրենքի ու իրականության միջև առկա հակասություններն ու խորն անդունդը հանգեցնում են նրան, որ կրոնական կազմակերպություններից շատերն իրենց խնդիրները աշխատում են լուծել ինչպես հասարակության մնացած օրգանիզմները՝ գտնելով լուծումներ օրենքից դուրս ընկած դաշտում:

Կրոնական կազմակերպությունների մասին օրենքի կամ սահմանադրական դրույթի չգիտակցվածության մասին է վկայում նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի այն հայտարարությունը, համաձայն որի «հնացած է եկեղեցին պետությունից անջատված լինելու Սահմանադրության դրույթը»: Այս հայտարարությունը ուղղակիորեն հակասում է ոչ միայն երկրի մայր օրենքին, այլ նաև ՀՀ միջազգային կոնվենցիաներով ստանձնած բազմաթիվ պարտավորությունների: Նմանատիպ հայտարարությունների վրա հիմնվելով՝ Հայաստանում գործող կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները կրոնական և էթնիկ ինքնությունների իդենտիֆիկացիան համարում են քաղաքացիական հասարակության ստեղծման մեծագույն խոչընդոտներից մեկը [50] : Նմանատիպ հայտարարությունները հակասում են ոչ միայն երկրի գլխավոր օրենքին, այլ երկրի նախագահի նախանշած ուղուն, քանի որ 2008թ. սեպտեմբերի 24-ին Սերժ Սարգսյանը ԱՄՆ-ում սփյուռքահայերի հետ հանդիպման ժամանակ հրապարակ նետեց հայկական

[50] Տե՛ս Գրիգորյան Ռ., Կրոնական հանդուրժողականության վիճակը Հայաստանում, «Կրոն և հասարակություն» ամսագիր, No. 5, նոյեմբեր, 2008, էջ 89:

ինքնության մասին իր նոր թեզը, համաձայն որի կրոնական պատկանելիությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ հայի ինքնության համար[51]: Այս առումով պետք է նշել, որ Ս. Սարգսյանի այս տեսակետը հրաժարումն է երկար դարեր քարոզված եկեղեցակենտրոն մոտեցմից ու հիմքն է նոր՝ պետականակենտրոն մոտեցման, քանի որ կրոնական ու էթնիկական ինքնությունների նույնացման եկեղեցական տեսակետը ոչ միայն վնասում է պետական միասնականությանն ու սփյուռքի հայապահպանության գործին, այլ նաև խոչընդոտում է բազմակարծության, կրոնական երկխոսության, հանդուրժողականության ու բազմամշակութայնության հաստատմանը հայ հասարակության մեջ: Ս. Սարգսյանի խոսքից պարզ է դառնում նաև, որ հայ հասարակությունը, նրա կարծիքով, դեռ այնքան հանդուրժողական չէ, որը ցանկալի կլիներ ՀՀ նախագահի համար[52]:

Հայաստանում հանդուրժողականության սերմանման ու տարածման գլխավոր հիմքը հասարակության կողմից ընդունված արժեհամակարգերն են, որոնք պետք է, ըստ էության, խարսխված լինեն երկրի գլխավոր օրենքի՝ սահմանադրության վրա: Սակայն, ինչպես նկատում է փորձագետներից մեկը, «հասարակության մեջ կա անհանդուրժողականության խրախուսման եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի քաղաքականություն և դա խաղի դրվածք է դարձել. ամեն մեկը այդ ֆորմալ արժեքային համակարգից վերցնում է այն, ինչն իրեն պետք է և ձեռնտու է՝ մերժելով կամ թշնամի ճանաչելով մնացածը: Ուստի ում մտքով անցնում է և ով ունի իշխանություն և ազդեցություն, փող և կարող է խաղի կանոններ պարտադրել մյուսներին, ոչ միայն վարակման ու պարտադրման ճանապարհով, նա դառնում է այլոց սեփականությունը և դառնում է ընդհանուր մի խուժան պատկեր, որտեղ դու տեսնում ես անհանդուրժողականություն ամեն մի գործում: Ընդհանուր առմամբ շատ է հայ

[51] «Հայի ինքնությունը չպետք է լինի բարդ և խորհրդավոր, այն պետք է հրաժարվի լեզվական, կրոնական, մշակութային, կուսակցական կամ գաղափարական տարանջատումներից: Անգլիախոս, թուրքախոս, ռուսախոս կամ հայախոս հայը, առաքելական, կաթոլիկ, բողոքական կամ մահմեդական հայը, սոցիալիստ կամ ժողովրդավար հայը, ազատական կամ ազգայնական հայը՝ պարզապես հայ է: Հայկական ինքնությունը չպետք է սահմանափակվի ինքն իր «ճշմարիտ» հատվածի մեջ ու պարփակվի՝ փորձելով պահպանել ինքնամփոփ անաղարտությունը: Հարատևման բանալին բազմազանությունն է, իսկ բնության անաղարտ տեսակները դատապարտված են: Հայկական ինքնության հովանու տակ բազմազանությունն է: Հայկական բազմազանության շաղախը հանդուրժողականությունն է: Հանդուրժողական ենք մենք այսօր: Պիտի դառնանք: Պարտավոր ենք դառնալ»: Այս մասին տե՛ս http://www.akumb.am/showthread.php/33797-%D5%80%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B8%D6%82%D5%B2%D5%AB%D5%B6.

[52] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Սարգսյան Մ., Անհանդուրժողականությունը և ներքին համերաշխության ձեռքբերման խնդիրը Հայաստանյան հասարակության մեջ, «Կրոն և հասարակություն» ամսագիր, No. 3, ապրիլ, 2008, էջ 5-19:

հասարակության մեջ անարխիզմը, որտեղ օրենքը չի գործում, դա նաև ապրելու, գործելու, կայանալու որոշակի փիլիսոփայություն է դարձել, իսկ դա նշանակում է ընդհանուր առամաբ տրորել ամեն ինչ, եթե դա քեզ պետք չի կամ քո համար հակառակորդ է»: Քանի որ գլոբալ աշխարհը թելադրում է իր նոր պահանջները, իսկ հասարակությունները անցել են բազմամշակութայնության ձևաչափին, ապա հայ հասարակության պահպանողական շերտի համար ստատուս քվոյի խախտման խնդիր է առաջանում ու նորի հետ հարմարվելու պահանջը նրան նոր մարտահրավերներ է նետում, որտեղ նա տեսնում է իր նախկին իշխանության ու հեղինակության կորուստն ու սկսում ամեն կերպ կառչած մնալ պահպանողականությունից: Նորին հարմարվելու ու ադապտացվելու մեջ վտանգ է տեսնում նաև Հայ առաքելական եկեղեցին, որը պահպանողական կառույց լինելով, ձգտում է պահպանել իր իշխանությունը՝ ոչ ավանդական կրոնական հոսանքներին փորձելով դուրս մղել իր ավանդական «տարածքից»: Այս իմաստով հայ հասարակության մեջ վերջին շրջանում տեղ գտած մի շարք աղմկահարույց երևույթներ (դերասանուհու հետ կապված պոռնոսկանդալը ու Կյանքի խոսքի և իրավունք թերթի դատավարությունը, DIV ակումբի պայթեցումը և տերերին հասցեագրված սպառնալիքները, բազմազանություն երթի հետ կապված ազգայնականների աղմուկը, “Parada” ֆիլմի ցուցադրման հետ կապված ակտիվ հակազդեցությունն այդ նույն ազգայնականների կողմից և այլն) նպատակ ունեն արժեզրկել այսպես կոչված ազատական արժեքներն ու հասարակության լայն շերտերին ցույց տալ, որ հայկական մենթալիտետն անհամադրելի է եվրոպական մշակույթի հետ, և գլոբալ քաղաքակրթական մեքենային կուլ չգնալու լավագույն միջոցը ազգային-պահպանողականությունն է՝ ազգային արժեքների, ավադույթների, սովորույթների, բարոյականության ընդունված չափանիշների ու նորմերի, մասնավորապես ***«մեկ ազգ, մեկ եկեղեցի, մեկ մշակույթի»*** միջոցով:

Ստորև ներկայացվող պարզ բաժանումը ցույց է տալիս ազատականության ու պահպանողականության համատեքստում հանդուրժողականության և նմանատիպ այլ երևույթների հետ կապված հիմնական տարբերությունները, չնայած նրան, որ այն բավականին պայմանական է ու սիմվոլիկ:

Աղյուսակ1. Ազատականության ու պահպանողականության հայեցակարգերին բնորոշ հատկանիշները

Ազատականություն	Պահպանողականություն
Հանդուրժողականություն	Անհանդուրժողականություն
Լիբերալ-դեմոկրատիա	Ազգային-պահպանողականություն
Ոչ սեռական բարոյականություն	Սեռական բարոյականություն
Հայրենասիրություն	Ազգայնամոլություն
Ազատամտություն	Ազգայնականություն
Համամարդկային արժեքներ+ազգային ավանդույթներ	Միայն ազգային արխաիկ ավանդույթներ
Կրոնական բազմազանություն	Կրոնական միատարրություն
Բազմամշակութայնություն	Մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ եկեղեցի
Կրոնական ազատություններ	Կրոնական սահմանափակություններ
Բազմաէթնիկություն	Մոնոէթնիկություն
Բազմախոհություն	Մեյնսթրիմային մտածողություն
Եկեղեցու անջատվածություն պետությունից	Եկեղեցի-պետություն մերձեցում
Խաղաղ համակեցություն բազմազանության պայմաններում	«Այլ»-ի, սեփականից տարբերվողի մերժում, հասարակության բաժանում «յուրայինների» ու «օտարների»

Իրավունքի դերը հանդուրժողականության ձևավորման գործում

Օրենքի գերակայությունն իրավական երկրների օրինակով ցույց է տալիս, որ այդ երկրներում համեմատաբար ավելի բարձր է հանդուրժողականության մակարդակը «այլ»-ի, «ուրիշի» նկատմամբ ու այդ երկրների հասարակություններն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ, բազմամշակութայնությամբ, բազմակրոնությամբ և այլն: Պնդել, որ այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ֆրանսիան կամ Գերմանիան, չկա քսենոֆոբիա, հակասեմիտիզմ կամ ռասայական խտրականության, նշանակում է միամիտ լինել, սակայն այդ երևույթները խստորեն դատապարտվում են օրենքով ու նույնիսկ դրանց

առկայության դեպքում դրանք չեն արտահայտվում: Օրենքի առջև մարդկանց իրավահավասարությունը ստիպում է բոլորին հարգել այլոց իրավունքներն ու ճանաչել սեփական իրավունքների սահմանները:

Այնպիսի հասարակություններում, որտեղ օրենքը գործում է խտրական եղանակով, սկսվում են անվերջ դիսկուրսներ իրավունքների ոտնահարման, իրավունքների խախտման, իրավունքի կամայական մեկնության վերաբերյալ: Այս տեսանկյունից իրավունքների ոտնահարումը ու ոչ իրավահավասար հարաբերությունները հասարակության ներսում ծնունդ են տալիս անհանդուրժողականության բազմաթիվ երևույթների նկատմամբ: Մարդիկ անհատապես կամ խմբեր կազմելով սկսում են պայքարել սեփական կամ այլոց իրավունքների համար, որը շատերի կողմից դիտվում է որպես անհանդուրժողականություն: Այս պարագայում հանդուրժողականության կոչերը սկսում են դիտարկվել որպես գործիք օրենքի դաշտից դուրս գտնվողների համար սեփական իրավունքները պաշտպանող անհատների կամ խմբերի իրավունքերի ոտնահարումը լեգիտիմացնելու ու նրանց օրենքի դաշտից դուրս դիտարկելու ու դատապարտելու համար:

Հրապարակախոս Արմեն Հովհաննիսյանը այս տեսանկյունից գրում է. «Երբեք մի շփոթեք «հանդուրժողականություն» կոչվածը առողջ բանականության հետ: Առողջ բանականությունը գիտակցում է, որ աշխարհը, կներեք արատահայտությանս համար, «բազմազան» է, և ուղղորդվում է այդ աշխարհում այլ մարդկանց, տեսակների, կարծիքների, շահերի հետ համակեցության սցենարներով: «Հանդուրժողության» քարոզը հաճախ քեզ կառավարելու, կամքդ հպատակելու գործիք է: Հիմա ես ասում եմ, որ 21 դարում մեր վզին ավատատիրական կարգեր փաթաթած, մեր անկախության չկայացման համար ջանք չխնայող, իրենց իսկ սահմանադրությունը ամեն շունչ քաշելիս, իսկ արտաշնչելիս երկու անգամ, ոտնահարող, ավազակների, օլիգարխների, պրոֆեսիոնալ գանձագողերի, ցինիկ անարժեք կարիերամոլների, զորբաների ու անպատժելիությունից արբեցած հակասոցիալական տարրերի կուսակցությունը պիտի լուծարվի, ունեցվածքը ազգայանացվի, ղեկավարները իրավական սահմանափակումների ենթարկվեն: Ես

ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂ ԵՄ: Հայաստանի պայմաններում հավասարապես կարելի է ասել. «Ոչխար չեմ»[53]:

> *«Օրինակ, եթե քննարկում է, որը բանական հարցերի շուրջ է, այդտեղ մարդիկ նորմալ հավաքվում են անկախ հայացքներից, կենսաձևից, ճաշակից, ու հենց որ մեկը սկսում է վզին փաթաթել այդ հանդուրժողականության շաբլոնը, ես հասկանում եմ որ այստեղ ինչ որ մի բան այն չէ:»* (հարցվողի տեսակետ)

Նմանատիպ մոտեցում ունեին այս հետազոտության շրջանակներում հարցված ուսուցիչների, բժիշկների ու այլ խմբերի ներկայացուցիչներ, ովքեր կարծում էին, որ այսօր առավելապես ոտնահարվում են իրենց իրավունքները հանդուրժողականության կոչի անվան տակ: Ուսուցիչները բողոքում էին, որ այսօր իրենք առավել քիչ իրավունքներ ունեն, քան աշակերտները, քանի որ շուկայական հարաբերությունների մթնոլորտում դպրոցի համար աշակերտ կորցնելը հղի է աշխատատեղ կորցնելու վտանգով, որի պատճառով էլ ուսուցիչները հանդուրժում են աշակերտների ու նրանց ծնողների շատ կամայականություններն ու անհարգալից վերաբերմունքը: Նույնը պնդում են նաև սոցիալական շատ այլ խմբեր, որ իրենց իրավունքները սահմանափակվում են ի հաշիվ հանդուրժողականության կամ դրա կոչերի: Նմանատիպ հանդուրժողականությունը չենք կարող հանդուրժողականություն անվանել բառի իսկական իմաստով, այլ առավելապես հարմարվողականություն, երբ անհատը կամ խումբը ստիպված է սահմանափակել իր իրավունքները հանուն ինչ-որ բանի, որի հետևանքով էլ տվյալ անհատի կամ խմբի մոտ սկսվում է ներքին հակակրանք կուտակվել այդ երևույթի նկատմամբ ու բարենպաստ պայմանների ժամանակ այդ հակակրանքը տարբեր ձևերով դուրս է հորդելու մակերևույթ: Այդ պատճառով էլ, «իրավունքների սահմանափակում հանուն հանդուրժողականության» բանաձևը, իր մեջ լուրջ մարտահրավերներ պարունակելով ցանկալի չէ իրավական պետություն կառուցող որևէ հասարակության համար:

Մյուս կողմից պետք է նշել, որ իրավունքի ու հանդուրժողականության սահմանն առավելապես իրավունքի սահմանների գիտակցումն է կողմերից առնվազն մեկի կողմից: Երբ կողմերից մեկը սկսում է չհանդուրժել անհանդուրժելին ու փորձում պաշտպանել իր իրավունքները, ապա այդ ժամանակ իրավունքները գիտակցող կողմը իր վարքագծով ստիպում է մյուս կողմին առավել հանդուրժողական կեղվածք որդեգրել նրա նկատմամբ: Հակառակ դեպքում, իրավունքների չիմացության ու չգիտակցվածության ժամանակ, մի

[53] Նյութի աղբյուր՝ http://www.facebook.com/azatarar/posts/463939590297165.:

կողմը կարող է անվերջ անհանդուրժողական կեցվածք որդեգրել մյուս կողմի նկատմամբ ու որևէ պատասխանատվության չկրել այդ կապակցությամբ:

Կրոնական կազմակերպությունների պարագայում ևս երբեմն հանդիպում ենք անհանդուրժողականության դեպքերի՝ հիմնված իրավունքի պաշտպանության վրա: Այսպես, բավականին հաճախ Եհովայի վկաներ կազմակերպության քարոզիչներն անհանդուրժողական վերաբերմունքի, երբեմն վիրավորանքների են արժանանում բնակչության կողմից, որոնք դա հիմնավորում են իրենց հանգիստը խանգարելու, իրենց մասնավոր տարածքի խախտման փորձերի, իրենց ազգային նկարագիրը շեղելու, ազգային անվտանգությունը խախտելու և այլ կարգի մեղադրանքներով: Մյուս կողմից նույն կազմակերպության անդամները բավականին լավ իմանալով իրենց իրավունքների մասին ու դատական կարգով ցույց տալով իրենց ճշմարտացիությունը՝ իրենց իրավունքները պաշտպանելով կարողանում են ստիպել բոլոր կողմերին հնարավորինս հանդուրժող գտնվել իրենց նկատմամբ: Այստեղ ևս գործ ունենք օրենքի անխտրական կիրառելիության պահանջի հետ, որի դեպքում միայն հնարավոր կլինի անհանդուրժողական դեպքերի կտրուկ նվազեցում:

Հետազոտության շրջանակներում փորձեցինք նաև պարզել, թե անհրաժեշտ է Հայաստանում կրոնական կամ այլ փոքրամասնությունների նկատմամբ լրացուցիչ իրավունքներ սահմանել: Փորձագետներից շատերի կարծիքով, լրացուցիչ իրավունքներ կամ արտոնություններ սահմանելու կարիք չկա, կա գործող ազգային ու միջազգային վավերացված օրենքները կիրառելի դարձնելու, դրանց գործունակությունն ապահովելու, իրավագիտակցությունը բարձրացնելու անհրաժեշտություն: Փորձագետներից մեկն էլ հավելեց, որ պոզիտիվ խտրական վերաբերմունքը կնպաստի անհանդուրժողականության նվազեցմանը, մինչդեռ փորձագետների մեծ մասը կարծում են, որ որևէ առանձին կամ լրացուցիչ իրավունք փոքրամասնություններին տալ անթույլատրելի է, քանի որ դրանով էլ ավելի կսրվեն հասարակական հարաբերություններն ու արդեն խտրական վերաբերմունք կառաջանա մեծամասնության նկատմամբ: Կրոնական կազմակերպությունների պարագայում դա առավել պայթունավտանգ է, քանի որ մեծամասնություն հանդիսացող Հայ առաքելական եկեղեցին իր ողջ հեղինակությամբ կխոչընդոտի նմանատիպ որևէ նախաձեռնության կամ նախաձեռնության փորձին:

Մյուս կողմից պետք է նշել, որ իրավունքի տեսանկյունից հանդուրժողականության մեկնությունը բավականին բարդ խնդիր է, քանի որ իրավունքի սահմանների կամայական մեկնաբանությունը հաճախ հիմքեր է ստեղծում հանդուրժողականության սահմանների խախտման համար: Այս պարագայում պարտավոր ենք հիշել այն հանրահայտ դրույթը, որ մի սուբյեկտի իրավունքների սահմանն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է մյուս սուբյեկտի իրավունքը: Այնուամենայնիվ, իրավունքի հետ կապված հարցում ողջ խնդիրը կայանում է հենց այդ սահմանի «սահմանների» խնդիրը ճշգրտելու մեջ, քանի որ հիմնական անհանդուրժողականության երևույթները հանդիպում են հենց այս հարցի ոչ լիարժեք արժևորվածության ու հստակության հետևանքով:

Այստեղ ևս մեկ անգամ պետք է նշենք իրավական պետություն ունենալու անհրաժեշտությունը, իշխանության թևերի հստակ տարաբաժանվածությունը, որի արդյունքում էլ հնարավոր անկախ դատարանը կարող է հնարավորինս ճշգրտությամբ սահմանել իրավունքի սահմանները, տալ հստակ մեկնաբանության այդ իրավունքներին ու այդ սահմանների հստակեցվածության միջոցով հաստատեր հանդուրժողականության հասարակության մեջ: Ավտորիտար կամ պսևդոժողովրդավարական (ինչպիսին Հայաստանն է) քաղաքական համակարգի անկատարությունն ու դատական իշխանության կախվածությունը պետական իշխանությունից հանգեցնում է նրան, որ քաղաքացիների մեծամասնությունը, չկարողանալով պաշտպանել իր իրավունքներն իրավական գործիքներով, սկսում են «անհանդուրժողականություն» դրսևորել այդ պետական մարմինների ու օրենքից բարձր գտնվող անհատների ու խմբերի նկատմամբ, որը դասական իմաստով չի կարելի անհանդուրժողականության համարել: Իրականում անհանդուրժողականության կրողները հենց օրենքից դուրս գտնվող անհատներն ու խմբերն են, քանի որ անկատար քաղաքական համակարգը նրանց հնարավորություն է տալիս օրենքից վեր կանգնելու ու պատասխանատվություն չկրելու այն գործողությունների համար, որոնք խախտում են այլոց իրավունքի սահմանները:

«Իրավունքի հետ սերտորեն կապված են մարդկանց վախերը, որոնք գալիս են չպաշտպանվածության զգացումից ու մարդու իրավունքների ոտնահարումից, ինչն էլ իր հերթին հանգեցնում է անհանդուրժողականության», - ասում է փորձագետներից մեկը: Իսկ խորքային հարզազրույցներից մեկի հարցվողի կարծիքով՝ «անպաշտպանվածության զգացումն իր հերթին ուժեղացնում է ինքնապաշտպանական բնազդները, որոնք մի կողմից

ուժեղացնում են քաղաքացիական հասարակությունը ու շատ դեպքերում հանգեցնում անհանդուրժողականության դրսևորումների, սակայն հակառակ դեպքում՝ առավել ուժեղ ու ֆիզիկական բռնության տարրերով անհանդուրժողականություն կարող է դրսևորվել հենց նրանց նկատմամբ»: Ըստ մեկ այլ փորձագետի՝ «անհանդուրժողականությունը հիմնականում դրսևորվում է ուղղահայաց կապերի պարագայում, որոնց հիմքը վախն ու չպաշտպանվածությունն է, իսկ հորիզոնական կապերը հիմնականում հանդուրժողականության լավագույն արտահայտման տեղն է ու հնարավորությունը»:

Կրոնական հարցերին առնչվող ներկայիս ՀՀ օրենքի և առաջարկվող օրենսդրական նախագծերի բացերը

1991թ. հունիսի 17-ի «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, չնայած հետագայում երկու անգամ՝ 1997թ. եւ 2001թ. փոփոխվեց և լրացվեց, այնուամենայնիվ արագ փոփոխվող աշխարհն իր անմիջական ազդեցությունն է թողնում Հայաստանի ու հայ հասարակության վրա՝ անհրաժեշտություն առաջացնելով համապատասխան փոփոխություններ կատարել օրենքի մեջ կամ ընդունել արմատապես նոր օրենք: Այս օրենքի մի շարք դրույթներ մենաշնորհներ են տալիս Հայ առաքելական եկեղեցուն, որը հակասում էր ՀՀ սահմանադրությանը: Այսպես, Ազգային եկեղեցու մենաշնորհ է համարվում «կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող պատմական հուշարձան-եկեղեցիները՝ ինչպես հավատացյալների խնդրանքով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ»[54]: Հետագա փոփոխությունների ժամանակ կրոնական կազմակերպությունների գրանցման համար անհրաժեշտ 50 թիվը հասցվեց մինչև 200-ի, որը լիովին անհասկանալի նորամուծություն էր ու դժվար կացություն էր ստեղծում բազմաթիվ կրոնական կազմակերպությունների համար: Համեմատության համար ասենք, որ կոմունիստական վարչակարգի օրոք կրոնական կազմակերպությունները կարող էին գրանցվել 20 անդամի առկայության շնորհիվ, իսկ 1990թ. Գորբաչովի ռեֆորմներից հետո այդ թիվը իջեցվեց 10-ի: Ընդհանուր առմամբ ասենք, որ համարյա բոլոր նախաձեռնություններն իրենց մեջ որևէ թիվ պարունակում են կրոնական կազմակերպությունների անդամների նվազագույն քանակի հետ կապված, բայց դրանցից

[54] 1991թ. հունիսի 17-ի «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, 17 հոդվածի (գ) կետ:

որևէ մեկը անհրաժեշտ հիմնավորումները չունի, թե ինչու այս թիվը կամ այն թիվն է անհրաժեշտ այդ կազմակերպությունը գրանցելու համար:

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան ՀՀ ԱԺ-ում 2002թ. մարտի 20-ին վավերացնելուց հետո անհրաժեշտություն էր առաջացել, միջազգային իրավունքի փորձը հաշվի առնելով, նախապատրաստել նոր օրենքի նախագիծ, որն, անշուշտ, զերծ կլիներ նախկին օրենքում առկա հակասական դրույթներից: Բացի այդ կարիք կար նոր օրենքով ձևակերպել մի շարք հասկացություններ ու տերմիններ (հոգևորսություն, հոգեւոր կրթություն, բարեգործություն, պատշաճ կամ ոչ պատշաճ պրոզելիտիզմ և այլն), որոնք մշտապես տարընթերցումների տեղիք են տալիս ու նոր օրենքի նախագծում զերծ մնալ աստվածաբանական հարցերի շոշափումից: Սակայն փորձը ցույց է տալիս, որ օրենքի վերջին երեք նախագծերի կազմման ժամանակ տուրք էր տրվել աստվածաբանական հարցերի քննարկումներին, ինչն արժանացել էր Վենետիկի հանձնաժողովի խիստ գնահատականներին:

Վերջին նախագծերի մեջ ամենից հակասականը «Աշոտյանի նախագիծ» անվանումը ստացած օրենքի նախագիծն էր, որը հեղինակել էր ներկայումս Կրթության և գիտության նախարար, այն ժամանակ ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Աշոտյանը: Այս նախագծում փորձ էր կատարվում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք քրիստոնեական կրոնական կազմակերպությունն է: Այս նախագիծն արժանացավ ինչպես միջազգային հանրության, մասնավորապես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Վենետիկի հանձնաժողովի, և տեղական իրավապաշտպան կազմակերպությունների սուր քննադատությանը: Նախագծի հնարավոր ընդունման վերաբերյալ իրենց մտահոգություն էին հայտնել նաև կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Վերջին նախագիծը, որը ներկայացվել է քննարկման, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Խղճի և կրոնական ազատությունների մասին» օրենքի նախագիծն է, որի մասին Վենետիկի հանձնաժողովը արտահայտվել է որպես դրական առաջընթաց ունեցող նախագիծ: Չնայած դրական առաջընթացին, հանձնաժողովը կատարել է մի շարք դիտողություններ օրենքի նախագծի մի շարք դրույթների վերաբերյալ, որոնք մտահոգություն են առաջացրել նաև կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում: Պետական մարմինների կողմից

անցկացված օրենքի նախագծի շուրջ քննարկումների ժամանակ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների մտահոգությունները հիմնականում համընկնում էին Վենետիկի հանձնաժողովի վերջնական եզրակացության մեջ նշված դիտողություններին: Բացի այդ կրոնական փոքրմասնությունների ներկայացուցիչները, հիմնականում ավետարանական հարանվանությունները, ունեն այն մտավախությունը, որն առկա է Հայաստանում վերջին տարիներին, երբ որևէ օրենքի ընդունումից հետո ոչ թե կարգավորվում է այդ ոլորտը, այլ հակառակը՝ ավելանում են սահմանափակություններն ու օրենքի տառի կամայական մեկնաբանությունից բխող չարաշահումները:

Հետաքրքրական է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Վենետիկի հանձնաժողովի փորձագետները վերջին եզրակացության մեջ մի տեսակ հանդիմանական տոնով նշել են, որ իրենց դիտողությունների մի մասը նախկինում ևս տեղ են գտել իրենց եզրակացությունների մեջ: Սա նշանակում է, որ Հայաստանի իշխանությունները հաշվի չեն առել Վենետիկի հանձնաժողովի շատ դիտողություններ ու փորձել են նորից ամրագրել իրենց հակաժողովրդավարական մոտեցումները:

Մասնավորապես, նոր նախագծի 4.1 հոդվածը հիշատակում է «կրոնական կազմակերպությունների գաղտնի գործելու արգելքը», որի ոչ հստակությունը ու մեկնաբանության ազատությունը խնդրահարույց հարցեր կարող են առաջացնել: Այս դրույթը կարող է բացասական անդրադառնալ խոստովանության գաղտնիության, կրոնական գործունեության հետ կապված ու կրոնական պրակտիկաներից բխող մի շարք կոնֆիդենցիալ գործերի վարման վրա: Բացի այդ հստակություն չկա նաև այն հարցում, թե ով է լինելու այն լիազորված մարմինը, որը պետք է տեղեկացված լինի կրոնական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Մտավախություն կա, որ եթե պետական մարմիններին լիազորություն տրվի մտնել կրոնական կազմակերպությունների ներքին գործերի մեջ, ապա դա կվնասի կազմակերպությունների ինքնավարությանը ու կհամարվի նրանց ներքին գործերին միջամտելու փորձ:

Նույն օրենքի 4.3 կետը «հոգևորսություն» եզրը սահմանում է որպես «ոչ պատշաճ դավանափոխություն», ինչն ևս չի դիմանում իրավական քննադատության, քանի որ խորքում աստվածաբանական նրբերանգներ է պարունակում: Բացի այդ, ոչ պատշաճ դավանափոխության սահմանումն ինքնին մի շարք վտանգներ է պարունակում, քանի որ

բավականին խճճված ու առավելապես հարցեր է առաջացնում, քան լուծումներ տալիս: Մյուս կողմից նշվում է, որ քարոզչական գործունեությունը չի կարող մարդու վարքի փոփոխություն առաջացնել, ինչը, մեղմ ասած, հակասում է բոլոր տեսակի կրոնական կազմակերպությունների ոգուն: Կրոնական կազմակերպությունների հիմնական առաքելություններից մեկն էլ «անկյալ» մարդկանց օգնելն ու նրանց սոցիալիզացիան ապահովելն է, որը դրսևորվում է թմրամոլների, մարմնավաճառների ու այլ մարգինալ և հասարակության կողմից մերժված խմբերի դեպքում: Այս խմբերին պատկանող մարդկանցից շատերը փոխում են իրենց վարքը հավատքի միջոցով, որը, համաձայն նոր օրենքի նախագծի, կարող է դիտվել հոգևորսություն: Հաշվի առնելով, որ ոչ պատշաճ դավանափոխության անգամ ամենազգույշ սահմանումը կարող է կիրառվել շատ լայն մեկնաբանմամբ՝ հանգեցնելով անհարկի հետապնդումների, փորձագետները խորհուրդ են տալիս իրավապահ և դատական մարմինների անձնակազմի համար կազմակերպել համապատասխան դասընթացներ, որպեսզի նրանք ի վիճակի լինեն տարբերելու պատշաճ և ոչ պատշաճ դավանափոխությունը[55]:

Օրենքի նախագծի 4.5 հոդվածում սահմանված «անդամների անձնական կյանքի, առողջության, սեփականության և վարքի վերահսկություն» բաժինը ևս հստակ չէ, քանի որ «վերահսկել» ասվածը բավականին անորոշ է ու կարող է տարընթերցումների տեղիք տալ: Փորձագետները առաջարկում են սահմանափակումներ կիրառել բռնի (հարկադիր) վերահսկողություն իրականացնող կրոնական կազմակերպությունների նկատմամբ:

Խնդրահարույց է նաև կրոնական կազմակերպությունների՝ արտերկրից չֆինանսավորվելու արգելքը, քանի որ այդ դեպքում կրոնական կազմակերպությունների մի զգալի մասը կհայտնվեն անելանելի իրավիճակում: Մեծամասնության շահերը ներկայացնող Հայ առաքելական եկեղեցին ևս մեծապես կարող է տուժել այս դրույթից, քանի որ հայտնի է, որ Հայ եկեղեցու ֆինանսական հոսքերի մեծ մասը ապահովում են արտերկրի հայ բարերարներն ու մեկենասները: Նմանատիպ արգելքները բնորոշ չեն ժողովրդավարական հասարակություններին ու վնասում են կրոնական կազմակերպությունների ազատ գործելու սկզբունքին:

---

[55] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ եզրակացության հիմնական դիտողությունները, http://www.religions.am/index.php/analitika/20225-2012-09-18-09-23-28.html.

Վենետիկի հանձնաժողովի փորձագետները խորհուրդ են տալիս նաև վերանայել Հայ առաքելական եկեղեցուն տրվող մենաշնորհները, քանի որ, համաձայն նրանց փորձագիտական եզրակացության, դա կվնասի այլ կրոնական համայնքների շահերը ու կարող է խտրականություն առաջացնել հասարակության որոշակի շերտերի համար: Հանձնաժողովն առաջարկում է վերանայել նաև կրոնական կազմակերպությունների ֆինանսական վիճակի գաղտնիությանը վնասող դրույթները, որոնք ևս հակասում են ժողովրդավարական հասարակարգերում ընդունված սկզբունքներին:

Եվ, վերջապես, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին մեծ մտահոգություն է առաջացրել բարեգործությունների վերաբերյալ օրենքի նախագծում առկա դրույթները, երբ բարեգործությունը կարող էր դիտվել իբրև հոգևորսության մաս: Այս դրույթը ևս բավականին հակասական է, որովհետև Հայաստանում գործող համարյա բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության առանցքային բաղադրիչներից մեկը հենց բարեգործությունն է:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր սահմանափակություններն ու թերությունները պետք է նշենք, որ առաջարկված օրենքի նախագիծը լուրջ փոփոխությունների կարիք ունի, քնաի որ նման ձևով ընդունվելու դեպքում Հայաստանը լուրջ խնդիրներ կունենա ոչ միայն տեղական մակարդակում, այլ նաև միջազգային կառույցներում: Ժամանակին նման խնդիր կար Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության հետևորդներին դատապարտելու հետ կապված, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն արդեն երրորդ աղմկոտ դատական գործն է պարտվում եվրոպական դատարանում:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում 2012թ. սեպտեմբերին կայացած խորհրդակցության ժամանակ կրոնագետ Վարդան Խաչատրյանը առաջարկեց օրենքի նախագծի փոփոխությունները սկսել հենց անվանումից ու անվանման միջից հանել «խիղճ» բառն ու նախագիծը անվանել «Կրոնական կազմակերպությունների մասին»: Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները հիմնականում ուշադրություն դարձրեցին Վենետիկի հանձնաժողովի կողմից բարձրացված հարցերի վրա, իսկ ազգագրագետ Հրանուշ Խառատյանը շեշտադրեց հայի ինքնության կրոնական բաղադրիչի ոչ առաջնային լինելու անհրաժեշտության վրա, որը, ըստ նրա, դառնում է այդպիսին Հայ եկեղեցուն տրվող արտոնությունների հետևանքով:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ կրոնական կազմակերպություններին վերաբերող ոլորտը Հայաստանում ամենանուրբ ու զգայուն ոլորտներից է և այդ տեսանկյունից պետք է ՀՀ իշխանությունները բավականին զգուշություն ու շրջահայացություն դրսևորեն նման զգայուն ոլորտի հետ կապված օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու ու կյանքի կոչելու ժամանակ, որպեսզի օրենսդրական նախաձեռնությունների հիման վրա ծայր չառնի կրոնական անհանդուրժողականություն տարբեր կրոնական կազմակերպությունների նկատմամբ ու տեղի չունենան բախումներ այդ հողի վրա:

Հիմնական եզրահանգումները և առաջարկությունները

Տվյալ հետազոտության տեսական և պրակտիկ վերլուծությունները ցույց են տալիս, որ «հանդուրժողականություն» հասկացության ու դրա պրակտիկ կիրառելիության սահմանները բավականին առաձգական են, երբեմն էլ կախված են անհատական մեկնաբանությունից ու սուբյեկտիվ ընկալումներից: Այնուամենայնիվ, հետազոտության մեջ ընդգծվել են հանդուրժողականության որոշակի սահմանները, որոնք մի կողմից թելադրված են օրենքի նախանշած սահմաններով, իսկ մյուս կողմից՝ իրավունքի սահմաններով կամ դրանց մեկնությամբ: Այլ կերպ ասած, հանդուրժողականությունը այլի, ուրիշի՝ օրենքին չհակասող կարծիքի, տեսակետի, վարքագծի նկատմամբ անխտրական վերաբերմունքն է, որը դրսևորվում է անհատական, խմբային-համայնքային, հասարակական մակարդակներում: Այն ենթադրում է բազմազանության ընդունումը և մարդու կարողությունը ճանաչելու սեփական վախերը, օբյեկտիվորեն գնահատելու իր վերաբերմունքն այն մարդկանց նկատմամբ, որոնք իրենց մշակույթով, որոշակի բնութագրիչներով տարբերվում են իրենցից: Այնտեղ, ուր կան մշակութային տարբերություններ անհատների, սոցիալական խմբերի, համայնքների միջև, հանդուրժողականությունը դառնում է կարևոր նախապայմաններից մեկը խաղաղ համակեցության և առողջ քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանդուրժողականությունը խրախուսող, տարբեր մշակույթների համակեցության նորմերը հստակ սահմանող, Մարդու իրավունքների իրացման հնարավորությունը երաշխավորող, խտրականությունը

դատապարտող օրենսդրությունը, որը նպաստում է հասարակության մեջ հանդուրժող միջավայրի ձևավորմանը, բարձրացնում է այդ հասարակությունների «օգտակար գործունեության գործակիցը», քանի որ բոլորը հավասար են օրենքի առջև և ունեն անքակտելի իրավունքներ՝ պաշտպանված օրենքով:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ հանդուրժողականությունը հաճախ շփոթվում է անտարբերության ու հարմարվողականության հետ, իսկ հանդուրժող լինելու կոչերը դիտվում են որպես ազգային ավանդույթները մոռանալու ու «արևմտյան ախտերը» ձեռք բերելու ուղի: Լիբերալ-ազատական ու ազգային պահպանողական հոսանքների տարաբնույթ մոտեցումների ու դրանցով պայմանավորված հանդուրժողականության տարբեր մոդելների ու ընկալումների հիմնահարցը ևս եղել է հետազոտության հետաքրքրության կենտրոնում:

Հետազոտության շրջանակներում իրականացված դաշտային աշխատանքները ցույց տվեցին, որ շատ դեպքերում կրոնական հանդուրժողականության գոյությունը պայմանավորված է առանձին անձանց սուբյեկտիվ մոտեցումներից, որոնք հաճախ հանդես են գալիս այս կամ այն կրոնական կազմակերպության ղեկավարի տեսքով: Առավել հաճախ, այդ կրոնական կազմակերպությունն է Հայ առաքելական եկեղեցին, որը հեգեմոն դիրք ունենալով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, իրենով է պայմանավորում հանդուրժողականության մթնոլորտը տվյալ տարածքում: Այսպես, Վանաձորում ու Գյումրիում առկա են տարբեր իրավիճակներ: Առաջին դեպքում գրեթե բոլոր կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները խոսում էին թեմի առաջնորդի հանդուրժող կեցվածքի մասին, իսկ Գյումրիում՝ ճիշտ հակառակը, ինչն էլ իր ազդեցությունն էր ունենում ընդհանուր համայնապատկերի վրա: Այսինքն՝ հանդուրժողականության հետ կապված հարցերի կարգավորման տարերբայնության հետևանքով, առանձին համայնքներում, մասնավորապես կրոնական հանդուրժողականության համատեքստում, անհատների կամ ազդեցություն ունեցողների սեփական դիրքորոշումներով է պայմանավորվում հանդուրժողականության կամ անհանդուրժողականության մթնոլորտը:

Այսպիսով, հանդուրժողականության զարգացման հիմնական անկյունաքարերն են՝ հանրային իրազեկումը/օբյեկտիվ տեղեկատվության տարածումը - կրթական

քաղաքականությունն ու ծրագրերը - առողջ ու հուսալի հեռուստատեսությունը և այլ ԶԼՄ-ները – քաղաքական անվտանգության հետ կապված նշանակալի բարեփոխումները:

ԶԼՄ-ների դերը

Անհերքելի է ԶԼՄ-ների դերը հանդուրժողականության ձևավորման հարցում, սակայն այս բնագավառում կան մի շարք խոչընդոտներ: Նախ այսօր ԶԼՄ-ներն ունեն վստահության պակաս, որովհետև այն տերմինաբանությունը և տեղեկատվության աղբյուրները, որ օգտագործվում են, հաճախ հավաստի կամ հուսալի չեն: Մյուս կողմից, լրագրողների կոմպետենտության հարցն է ծագում, մասնավորապես սոցիալական փոքրամասնություններին առնչվող հարցերում: Լրագրողների հետ այս ուղղությամբ կրթական աշխատանք է անհրաժեշտ: Նման պայմաններում ԶԼՄ-ներին որպես հանդուրժողականության ձևավորման իրատեսական կամ ազդեցիկ գործիք դիտելը դեռևս արդարացված չի, քանի դեռ ԶԼՄ-ները չեն վայելում մեծ վստահություն: Հարցվողներից շատերի կարծիքով՝ այստեղ պետք է ազատ ու առողջ դաշտ ստեղծվի, պետք է առողջ բանականությանն ու մտքին ազատության տալ, օբյեկտիվ տեղեկատվությունը հանրության հետ կիսելու լայն հնարավորություններ տալ: Մարդիկ ուսյալ, պատրաստ պետք է դուրս գան հանրային ու բաց քննարկումների, բանավեճերի՝ չվախենալով արտահայտել սեփական տեսակետները: Լրատվամիջոցների կողմից «ցավոտ» հարցերի, այդ թվում կրոնական հարցերի ավելի հավասարակշռված լուսաբանում պետք է ապահովվի, հատկապես հեռուստատեսությամբ, քանի որ այն հայաստանցիների առնվազն կեսի համար տեղեկատվության հիմնական աղբյուրն է:

Կրթության դերը

Հարցվողների գերակշռող մասը նշել են հանրային ցածր իրազեկվածությունը որպես ազդեցիկ գործոն անհանդուրժողականության դրսևորումների առումով: Ընդհանրապես, կրթության ցածր որակի հետ կապ կա, մինչհասարակական ու միջմշակութային շփումների պակաս կա, ըստ հետազոտության մասնակիցների: Մեծամասամբ մոնոէթնիկ և մոնոկրոն հասարակության մեջ բարդ խնդիր է այլոց հանդեպ հանդուրժողականություն ձևավորելը, հատկապես եթե քիչ կամ աղավաղված գիտելիք կա:

Կրթական համակարգը և կրթական կազմակերպությունները նշանակալի դեր են խաղում հանդուրժողականության հետ կապված հարցում, քանի որ չափահաս մարդու համար արժեհամակարգ փոխելը շատ ավելի դժվար է, քան երեխայի դեպքում, պետությունը հենց դպրոցական մակարդակում պետք է կարողանա մարդկանց մեջ համապատասխան արժեքները մտցնել: Ինչպես նշել էր հարցվողներից մեկը՝ «անհատական մակարդակում փոփոխություններ պետք է լինեն, սա թեկուզ դանդաղ, բայց առավել հուսալի ուղին է, երբ երեխան կյանքի առաջին իսկ օրվանից սովորում է հանդուրժող լինել այլի նկատմամբ, մեծանում է և իր արյան ու սերմի միջոցով փոխանցում դա իր սերնդին, և այդպես սերունդներ են մեծանում ու դաստիարակվում, որոնց պետք չէ հատուկ սովորեցնել համակեցության այս կարևոր նախապայմանը»:

Մանկավարժների՝ հանդուրժողականության զարգացմանն ուղղված նպատակային աշխատանքի, պետական կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի շնորհիվ կարելի է ապահովել հանդուրժող սոցիալական միջավայրի ստեղծման որոշակի նախադրյալներ: Շատ կարևոր է երեխաների ու երիտասարդների հետ աշխատանքը, ուղղված կարծրատիպերի կոտրմանը, որպեսզի նրանք կարողանան լայն աշխարհայացք ձևավորել, քննադատել և ընդունել քննադատություն: Դրա բացակայությունը խոչընդոտում է Հայաստանի զարգացումը բոլոր ոլորտներում:

Օրենքի դերը

Թեև այսօր մեր օրենսդրությունը բավարար հիմքեր տալիս է պայքարելու խտրականության դեմ, օրինակ, ըստ փորձագետներից մեկի, քրեական օրենսգրքում կա ամենաքիչը 50 կետ, ուր ծանրացնող հանգամանք է դիտվում ազգային, կրոնական և այլ խտրականության շարժառիթով հանցագործություն կատարելը: Ընդհանուր առմամբ գոյություն ունեցող ազգային օրենսդրությունը և վավերացված միջազգային փաստաթղթերը որոշ չափով բավարար են խտրականությունն ու անհանդուրժողականությունը դատապարտելու համար, սակայն, ցավոք, շատ դեպքերում օրենքն ուժ չի ունենում, շրջանցվում է, ցուցաբերվում է ընտրողական մոտեցում դեպքից դեպք: Հարցվողներից շատերի կարծիքով, այդ օրենքները հիմնականում ունեն դեկլարատիվ բնույթ, ստեղծվել են պարզապես միջազգային պահանջները բավարարելու ու միջազգային հանրությանը հաճոյանալու համար: Այս իմաստով կարևոր է քաղաքական

կամքի դրսևորումը, օրենքի ուժի կիրառումը և իրավունքի՝ որպես գերակա արժեքի ընդունումը: Ինչպես նշել էր փորձագետներից մեկը՝ «ազգային անվտանգության բանալին իրական ժողովրդավարությունն է»: Միաժամանակ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանում պետք է կարգավորվեն, այսինքն՝ պետք է կասեցվի եկեղեցու պետականացումը և, հակառակը՝ պետության եկեղեցականացումը կամ կրոնականացումը:

Այսպիսով, տվյալ հետազոտության հիման վրա ձևավորված հիմնական առաջարկություններն են՝

- Անհրաժեշտ է իրավական ու վարչական միջոցներ ձեռնարկել կրթության բնագավառում անհանդուրժողականություն ու խտրականության քարոզող կամ այդ քարոզին նպաստող դասընթացները, դասավանդման մեթոդական ձեռնարկները, դասագրքերը բացառելու ու նմանատիպ հայացքներ ունեցող դասավանդողների մուտքը դեպի կրտսեր սերնդի կրթություն սահմանափակելու համար,

- Անհրաժեշտ է տարբեր միջոցներով բարձրացնել մարդկանց իրազեկվածության աստիճանը հանդուրժողականության, դրա դրական ու բացասական կողմերի, ինչպես նաև անհանդուրժողականության ժամանակակից դրսևորումների՝ ֆաշիզմի, ազգայնամոլության ու բազմաթիվ այլ ծայրահեղական երևույթների մասին,

- Անհրաժեշտ է տարբեր սեմինարների ու աշխատանքային հանդիպումների միջոցով բարձրացնել կարծիք ձևավորողների ու հատկապես լրագրողների իրազեկվածության ու գիտելիքների մակարդակը Հայաստանում գործող տարբեր կրոնական կազմակերպությունների, դրանց տարբերությունների ու անհանդուրժողականության հիմք հանդիսացող այլ երևույթների վերաբերյալ, որոնք կարող են առիթ դառնալ ԶԼՄ-ներով կրոնական ատելության, թշնամության և խտրականության, կրոնական զգացմունքներն ու մարդկային արժանապատվությունը նսեմացնող կոչերի ի հայտ գալուն,

- Անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել, որպեսզի բացառվեն քաղաքական գործիչների, պետական պաշտոնյաների ելույթներում, հայտարարություններում կրոնական ատելության կամ, առհասարակ, անհանդուրժողականության ու խտրականության տարրերը,

- Անհրաժեշտ է, որ հասարակագետները հետազոտեն այլ երկրների հաջողված դեպքերը և փորձը՝ կապված հանդուրժողականության զարգացման հետ, բայց ոչ թե ցանկացած երկրի, այլ սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական և այլ բնութագրիչներով Հայաստանին նման պետությունների փորձը,

- Անհրաժեշտ է ուսումնասիրել հայաստանյան իրականության մեջ եղած հաջողված դեպքերը, կապված հանդուրժող դիրքորոշման դրական ազդեցության հետ, դրանց հիման վրա ձևավորել որոշակի մոդելներ, որոնք կարող են դրվել հանդուրժողականության զարգացմանն ուղղված կրթական և քաղաքական ծրագրերի հիմքում,

- Անհրաժեշտ է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացման ժամանակ հաշվի առնել Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ կարծիքը, ինչպես նաև ՀՀում գործող կրոնական կազմակերպությունների համատեղ քննարկումների հիման վրա ստեղծված առաջարկները, որպեսզի խուսափենք կրոնական դաշտում հնարավոր բախումներից ու անհանդուրժողականության խթանումից,

- Անհրաժեշտ է ՀՀ հեռուստաընկերություններով ու հանրային ռադիոյով կազմակերպել հաղորդումներ, որոնք կնպաստեն հանդուրժողականության բարձրացմանը հասարակության, հատկապես, կարծիք ձևավորողների շրջանում, ովքեր ունեն նշանակալի ազդեցություն հասարակական կարծիքի ձևավորման մեջ: